

526

40	300	40
500		560
400		700
		180

Civilization = *Surveys of the ...*
 (1776-1780)

FURTHER

Gibson



ԴՐԱԽՏԻ

ԸՆՏԱՆԻՔ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

ԿՐԻՍՏԱՆ ԶԱՅԲԿ

Ի ԳԷՏԱ ԶԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԱՑ

ԸՆԾԱՅԵՑԱԻ Ի ԼՈՅՍ

ՇՆՈՐՀԻԻ ԳԵՐԱԶՆԻԻ ԱՍԳԵՏԻ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶՈՒՆԳ

Ի ՆԵԱՆ ԵՒ ՏՐԻՏՈՒՄԻՆԻ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏԻ

ՀԻՅՆԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄԱՑ ԻԻՔՈՑ Ի ՄՈՒՏԱԻԻԱ

A 9202

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻԱ

ԳՈՐԽԱՐԱՆ ԶԱՐԳՈՒԹԵԱՆ

1870

ՀԱՅԿԱՆՆԵՍԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ

APR 1927

ՀԱՅԿԱՆՆԵՍԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆՆԵՍԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆՆԵՍԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆՆԵՍԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ


1840

1840

1840

1840

1840



Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ն

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՍ



ԴՐԱԽՑԻ ԸՆՏԱՆԻՔ Զեր շնորհիւ 'ի լոյս կը հանեմ, շնորհ ունիմ Ձեզ, մի անգամ և եթ առանց բազում ժտանաց խնդրեցի. Դուք անդէն իսկ պատրաստ կայիք յօժարամիտ ոգւով մեր դուզնաքեայ վաստակը պսակել:

Դուք գիտէք իսկ թէ քանի՞ դժուարագիւտ են դեռ մեր ազգին մէջ գրավաստակոց Մեծ կենսաներ. որ ոսկւոյն հետ գիրք սիրեն և յօժար լինին տքնասէր հեղինակին երկն ու ջանքը ոսկւով պսակել:

Որչա՞փ դժուարին է մեծայարգի ոսկին՝ անարգ թղթին և մրին հետ փոխանակել. որ այս աշխարհիս պաշտեցեալ մամօնայն է: Եւ դուք փոխանակեցիք զայն. որ քաջ գիտէք կշռել ու համեմատել թէ ի՞նչ է ոսկին և ի՞նչ են շպէտ համարուած թուղթ և մուր:

Պարծիր դու, դեռ քեզ նման քիչ մարդիկ
գիտեն թէ ոսկին հող է. թուղթ և մուր լոյս
են. Բայց լոյսը՝ գրուանին տակ և մթան մէջ
անլոյս կը մնայ՝ եթէ ոսկին չօգնէ ու չհանէ
զլոյսն ի լոյս :

Քրեանն ոսկին և գրիչ, թուղթ և մուր և
կուտթէմալերկի հրաշալի Մամուլը՝ այս միացեալ
խօսուն և անխօս տարերք լոյս կը ցոլան և մեր
աշխարհի յառաջագիմութեան մեծ միջոցներն
են. երանի՛ թէ այս զօրաւոր տարերք միշտ
էրարու պատահին և հէք երկասէր իւր վաս-
տակոց մեկենաս գտնէ :

Ես գտի զքեզ և դեռ պիտի գտնեմ. որ-
չափ յաջողէ Տէր ինձ բան յօրինել : Իսկ դու
որ կը սիրես լոյս և Հայ ընտանեաց կեանք և
բարգաւաճումն. տուր մի խնայեր, քաջալերէ
միշտ տքնասէր մշակաց վաստակաւոր գրիչը.
Թող գրիչը լոյս հանէ և ոսկին սփռէ զայն Հա-
յոց աշխարհին :

Յիշէ դու, քո սեպուհ պարտիքն է այս.
Ղի դու այն աշխարհին մի սիրական զաւակն ես,
թերեւս հին հայրենիքդ, այն չքնաղ Անին է.
յորմէ դժխեմ բախտն զպապդ յօտարութիւն
վարեց :

Յիշէ նաև, մի մոռնար որդեկսրոյս մօրդ.

որդիական մեծ պարտիքդ . ո՛հ այդ մեր սևա-
 ւոր անբախտ մայրիկը՝ իւր բեղմնաւոր դրախ-
 տին բիւրաւոր ընտանիքը համասպառ կորոյս
 և ինքն այրի մեռաւոր անմխիթար կը նստի որ-
 պէս բու իւր աւերակաց վերայ :

Չեռն տուր ինձ , լոյս տանք ու սրբենք մեր
 մօր արտասուքը , որ Շիրակայ շիշեալ փառաց
 վերայ դեռ աղիսողորմ կողբայ : Չեռն տուր
 ինձ , շինենք . զոր տգիտութիւն փլուց թո-
 ղուց աւերակ : Շինենք այո՛ , չէ թէ նիւթա-
 կան քարով , այլ գիտութեան լուսով . քարը
 դիւրաշարժ է , միշտ կը կործանի . իսկ լոյսն
 անշարժ է հաստատ և կայուն , միշտ անկոր-
 ծան կանգուն կը մնայ :

Ուստի մոռնանք հին աշխարհի յողգողդ-
 քարէ հիմն . մեր հայրենիքն այս անգամ լու-
 սով հիմնարկենք . լուսով դռներմք ինչ որ խա-
 ւար կորոյս . զի Հայոց ապագայն յոյս և ապա-
 ւէն լոյսն է միայն և ուրիշ ոչինչ :



ԳԼՈՒԽ

Մ.	Դրախտի ընտանիք	4
Բ.	արտաքոյ դրախտին	11
Գ.	Հայոց Նահապետական տուն և ընտանիք	21
Դ.	Մարդ և ամուսնութիւն	29
Ե.	Տուն և ընտանիք	41
Զ.	Ամուսնութեան կամ ընտանեկան կեանքին խափանարար զեղծմունքներ	57
Է.	Ընտրութիւն և իրաւունք կենակից ամուսնոյ	72
Ը.	Հարսանիք և խորհուրդ պսակին	94
Թ.	Կոչումն հարսին և փեսային	107
Ժ.	Փոխադարձ պարտիք և իրաւունք առն և կնոջ	121
ԺԱ.	Մայր և դայեակ	143
ԺԲ.	Ընտանեկան դաստիարակութիւն զաւակաց	159
ԺԳ.	Զաւակաց պարտիք առ ծնողս	177
ԺԴ.	Մահ ծնողաց և օրհնութիւն	188
ԺԵ.	Ընտանեկան կտակ և յիշատակ	199
ԺԶ.	Տաներէց և իւր պարտիք	208
ԺԷ.	Ընտանեկան պատկառանք և ազատ	219
ԺԸ.	Փոփոխութիւն ընտանեկան վիճակին անկումն և բարդաւաճումն	231





ԲԱՐՆԿԱՄ ԺՈՂՈՎՈՒՐԻ ՀԱՅՈՑ, ձեռք կը նուիրեմ
 դուքնաքեայ երկասիրութիւնս : որոյ մակագիրն է
 ԴԻԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ : Այս անուն քաղցր ու ժողովրդա-
 կան է . թերևս զարմանաք ու մեղադրէք զիս : զի
 գրքիս առարկաներն՝ առ.ու.ել աշխարհիս առարկայից
 վերայ են քան թէ երկնից արքայութեան : Չիս պիտի
 դատէ՞ք արդեօք երբ Եկեղեցւոյ վարդապետ, Աւե-
 ասարանին աշակերտ . կենաց հացին տնտես, թողու իւր
 բարձրադոյն պաշտօն, Պօղոսի քարոզած երկնից ան-
 ճառ դրախտը . և երկրի ընտանեկան Դրախտի հա-
 մար ճառէ :

Համարիւ կը լինէր քո այս դատաստան եթէ երկ-
 նից դրախտ մոռնայի . ու չկապէի զայն երկրիս դը-
 րախտի հետը, որ խկապէս երկնից դրախտին հիմն
 է : Ես Եկեղեցւոյ համար կը խօսիմ . որ Քրիստոսի
 տնկած դրախտն է . և նորս սուրբ ընտանիքն են նոր
 Եկեղեցւոյ զաւակները : Ահաւասիկ այդ նոր դրախտի
 ընտանեաց համար է դոյզն վաստակս, յոր տքնեցայ,
 որպէս զի դրախտի ընտանեաց կեանքը բարուքի :

Գիտնալ ու հաւատալ պէտք է, որ աշխարհիս ըն-
 տանեկան դրախտին մեղապարտ և անհնազանդ զա-
 ւակներն՝ երկնից դրախտը կարող չեն ժառանգել :

Ուստի այս ընտանեկան կեանքի սեղանին վերայ ես միայն սոսկ հաց չի պատրաստեցի, և թէ պատրաստէի ևս՝ Յիսուս հրաման կուտար ինչպէս տուաւ իւր աշակերտաց, երբ անապատի մէջ ժողովուրդ քաղցած հաց կը խնդրէր՝ ասաց Յիսուս, «Դուք տուք դոցա ուտել»։ Աստի յայտ է թէ. Կենաց բանին հետք մերթ ևս ժողովուրդին հաց մատակարարել։ Աւետարանին հակառակ տնտեսութիւն չէ։

Ժողովուրդ Հայոց, յուշ բեր, ո՛ւր է քո հայրենեաց դրախտը զոր կորուսած ես. դուք այն վայելչութեան և ազատութեան դրախտին զաւակներն էք. ո՛հ, մեր հին նախածնողաց պէս դրախտի յանդիման նստած կը մորմոքինք կուլանք դառնապէս։ Ո՞չ բով ու կոծով մեր կորուսած դրախտը միթէ կարո՞ղ եմք դանել. թող մեր աչքը լայ, մեր սիրտն զգայ. բայց աշխատինք մտքով, աշխատինք ձեռքով. մեր կեանքն ու վիճակը դանել և դորա միջոցն է մի միայն՝ ընտանիքը վերանորոգել. նոր կեանք նոր ընտանիք կազմել. որոյ առաջին և մի միայն միջոցն է դաստիարակութիւն և կրթութիւնը։ Եւրոպիոյ հին բարբարոս և արդի լուսաւորեալ ազգերը այս միջոցն ընտրեցին և այս միջոցով բարգաւաճեցան. որ այսօր բոլոր արեւելեան ժողովրդոց առաջ նախանձեղի հանդիսացած են. որոց հանձարոյն՝ յառաջադիմութեան և մեծադործութեանց վերայ ապուշ ապուշ նայելով կը զարմանամք. և մերթ ևս չեմք հաւատար թէ նոքա ևս մեզ նման մարդիկ են։ Մարդ կարող չէ ու-

բանալ թէ նոր աշխարհի այդ հրաշքը՝ լոյս և դաս-
տիարակութիւն գործեցին . որ ընտանեկան կեանքէն
կը բղխին և կը ծաւալին ժողովուրդին հրապարակը :

Ուրեմն հաւատանք թէ այդ այդպէս է . թողունք
ապուլութիւն և ուշաբերինք . մեք մեզէն կըսեմք ու
հաւանիմք . թէ Հայոց ազգին ևս այդ լոյս և դաս-
տիարակութիւն պէտք են : Լոյս պէտք է , այո՛ , որ-
պէս զի հին աշխարհի նախապաշարմունք բառնամք .
և նոր աշխարհի եկամուտ զեղծմունքները խլեմք մեր
ընտանեկան գրախտէն . Ապա թէ ոչ , գոքա իբրև
մոլեխոտ և իբրև տատասկ փուշ կը հեղձուցանեն մեր
գրախտի պարկեշտ ծաղիկները : Եւրոպիոյ աշխարհը
բարույ և շարի անբաւ խառնուրդները կը հանէ մեր
առաջ . պէտք է աշալուրջ վիճիմք ու որոշեմք . ինչ որ
բարի է և օգտակար , ինչ որ ճշմարիտ ու հաստա-
տուն է , և խաբուսիկ չէ . ինչ որ մեր ներկայ կեանքը
կը բարւոքէ և ապագայն կերայխաւորէ : զայն մի-
այն ընտրեմք . և ինչպէս օձէն՝ այնպէս խորչինք ու
փախչինք այն ամէն օտարամուտ զեղծմունքներէն ,
որ մեր ընտանեկան կեանքը խանդարելով՝ ՚ի վերջոյ
Հայոց ազգի իբրև նշխար մնացեալ տուն ու տեղը կը
քանդեն : և կը թողուն զմեզ թշուառ ու շարաքաս-
տիկ աշխարհիս վերայ :

Ժողովուրդ Հայոց , քեզ համար նկարեցի գրախտի
ընտանիքը . կաղաչեմ՝ որ իբրև հայելի դնես աչքիդ
հանդէպ , հայիս ու տեսնաս հիւանդ և հիւծեալ կեր-
պարանքդ : Կարկի բերանս , թէ շարագուշակ վիճիմ

քեզ համար . մահդ ինքնին կը կոչես , ու պիտի մեռնիս , եթէ չվաղվաղես դարման տանել այդ համաճարակ ու մաշող մահարերը ախտիդ . որ թէ կանուխ թէ անաղան զքեզ դէպ 'ի թշուառութեան գերեզման կը տանի :

Անցեալ կեանքդ զարմանալի է . այնչափ բարբարոս արշաւանաց ոտքէն դու անխնայ կոխկռտեցար թշնամին ճմլեց ու քամեց զքեզ ինչպէս խաղողն 'ի հնձանին : Սակայն դու չսպառեցար , տակաւին կաս ու կատրիս . տակաւին որթերդ և ուներդ կանաչ մնացին : Աստուած , Մասեաց Նահապետ և սուրբ Գրիգոր զքեզ օրհնեցին , վասն որոյ վերջին մնացորդ ճիւղերովդ անծախս ու անասական սահուած ես :

Որչա՞փ անհնարին վիշտ է , աւա՛ղ , որչա՞փ դառն ու դժուարին , երբ դու ինքնին ձեռօքդ զքեզ ճմլես ու սպառես : Թիմուրիէնկ քո մատաղ զաւակները Սերաստիոյ սև հողերուն վերայ սմբակակոխ ջախջախեց , ու զբաւեց թզնիւ բողբոջներդ : Իսկ դու նոյն խակ ընտանեկան տան ու կեանքիդ մէջ՝ նոյն եղևուն կը գործես ու չես իմանար . և քան այդ հին բարբարոսը՝ դու քաղաքակիրթ դարուն մէջ առաւել անգթարար կը վարիս . զի կը թողուս և բնաւ հոգ չունիս , թէ զեղծմունքը զքեզ և քո որդիքներդ 'ի միասին կըսպաննէ :

Կը խոժոռի՞ս թերևս երբ խիստ կը խօսիմ և խրատութեամբ կը դատեմ զքեզ . և միթէ կը կարծե՞ս թէ ես միայն եմ և դու ինքնին զքեզ չե՞ս դատեր : Հապա ի՞նչ է այն , որ զօրհանապաղ տրտունջ կը բար-

նաս կաղաղակես, թէ ահաւասիկ կը կորնչիմք: Հրէա-
միտ մի վնիր, զայլ ոք պատճառ մի դներ. ոչ ոք
զքեզ կը կորուսանէ. կորուստ քո 'ի քէն է, քո տնէն
է, և քո ընտանիքէն: Աւրեմն եթէ ստոյգ է և կղզաս
դու թէ կը կորնչիս. և թէ թշուառութեան օրերը մե-
սալուտ են, պիտի հասնին քեզ. և դու ամէն օր աշ-
քիդ առաջ կը տեսնաս անկեալ ընտանեաց վշտադին
տառապանքն: Այո՛, կը տեսնաս ու տակաւին չես
խեղարերիր. թողեր ես զքեզ արևմտեան հովին և
հոսանքին առաջ. որ աչքախար հաճոյից զեղծմանք-
ները, զքեզ վարեն ու տանին. և ո՛ւր, դու գի-
տե՞ս. ես կանխաւ ասացի քեզ, թէ ուր կը տածին:

Յո՛ւշ, յո՛ւշ, յետս դարձիր. թող տուր, մահ է,
մի հպիր. ձեռներդ թօթափէ այդ զեղծմանց փոշի-
ներէն. ընտանեկան սրահիդ սեմոց վերայ այս առած
գրէ. ՄԱՆԻՐ ՁԳԵՁ: Այդ իմաստուն առածը մի մոռ-
նար, կարդա՛ միշտ չափ աւ սահման գիր տնտեսական
կառավարութեանդ, հացդ չափով կեր, ջուրդ չափով
խամ; հանդերձ չափով հագիր. թող Հայոց քիկնայք
քոտասուն կանգուն հազար թերթիկ շրջազգեստը
տասն կանգունի փոխեն, որ բաւ և շատ է այնչափ
մարդոց հասակի վայելչութեանն. զոր Արարիչը՝ չա-
փով ստեղծեր է: Թող այր մարդիկ իրենց այն սպրկիկ
ներդ ձեւ հանդերձը փոքր ինչ ընդ լայնեն, որ անձ-
կութենէն չպատուի: Թող չափ դնեն դարձեալ ըն-
տանեկան այն ամէն պէտքերուն. գիտնալով թէ պէտ-
քերն անսպառ են, զորս օր ըստ օրէ կը հնարէ Եւրո-

պիտոյ ձեռարուեստ հանձարը՝ և մարդոյն ցանկութիւն և հանոյքը անհուն անսահման են, եթէ չափ չը դնենք՝ մարդ մի անգէտ մանուկ է, կը վազէ միշտ դէպ 'ի սիրուն խաղալիքները :

Ուրեմն պէտք է խոհական ու կատարեալ մարդ լինինք . սանձ դնենք մեր մանկամտութեան . փորձառութեամբ և մեծամեծ տուժերով տեսնք և կը տեսնամք մեր ընտանեկան բիւրաւոր աղէտները թէ նիւթապէս և թէ բարոյապէս :

Ժամ հասաւ, խոստովանիմք ջեզ, ով ազգ Հայոց . չորս տարուան Պատրիարքութեանս շրջանին մէջ . ջո ընտանեկան բազմապատիկ աղէտները ես ինքնին տեսայ . և այդ աղէտներուն մէջ՝ առաւել աղէտաւոր էին ամուսնական խնդիրներն . որք թէ ո՞րչափ և քանիպատիկ ծանրալուր են, ես կը ծածկեմ այդ թուանշանը և խնդրոց պատմութիւնը չեմ յայտներ ջեզ : Եթէ կը դժուարիս հաւատալ՝ ինձ վկայ և ապացոյց կը կոչեմ աստ Պատրիարքարանի Դատաստանական Խորհրդոց արձանագիրը : Սակայն մեր ընտանեկան զեղծմուծներու բովանդակ ցանկը պէտք չէ, որ միայն այդ արձանագրէն կը տեսնենք, վասն զի մեր այս աւուր իւրաքանչիւր ընտանեկան կեանքը կենդանի արձանագրութիւն է . մարդ որ աչք ունի՝ կարող է դայն կարգալ առանին ու հրապարակաց մէջ . ուր ցուցամով շայլութիւն կը շրջի նազելով իբրև Անդրիայի լորտ և թագուհի . կարծելով թէ իւր հարստութիւնն՝ Անդրիոյ անապառ ոսկին է :

Ո՛չ, ո՛չ, այնպէս մի կարծէք ո՛վ Հայոց ընտանիք,
 ճանչցէք ձեր չափն ու վիճակը, դուք շատ աղքատ
 էք ոսկով ու մտքով. աղքատ էք դաստիարակութեամբ
 և ազատութեամբ. աղքատ էք գործունեայ աշխա-
 տասիրութեամբ. աղքատ էք արուեստական հան-
 ճարով. աղքատ էք իմաստուն տնտեսագիտութեամբ :
 Առանց մտաւոր և նիւթական հարստութեան՝ դու
 միթէ արժանի՞ կը համարիս դքեղ նոյն Եւրոպական
 ժողովրդոց ճոխ կեանքը վայելել : Ծանկի՛ր, այդ կեանքը
 այդ յառաջադիմութիւնը՝ ճակատի անխոնջ քրտին-
 քով բազմակերպ արեան զոհերով, հարիւրաւոր տա-
 րիներու մէջ հազիւ հազ կազմուած է. և դու դեռ
 երեկ սկսեցիր նոր երախայի պէս քերական կարդալ.
 կը կարծես ու կը հաւատա՞ս թէ ունեալ և քաղաքա-
 կիրթ Եւրոպացի դարձար :

Ես կը գովեմ քո եռանդը, որ կը ձկտիս դէպ ՚ի
 յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն. միայն
 թէ սխալ ըմբռնած ես, որպէս թէ զեղխութիւն,
 զեղծմունք, նորասիրութեան բուռն տենչանքը, ճշմա-
 րիտ քաղաքակրթութեան նմանողութիւն է : Այդ
 նոյն իսկ քաղաքակիրթ ժողովրդոց մէջ սինլքոր մասին
 կարծիքն է և վարք : Դու ազնիւ եղիր ու ազնիւ ժո-
 ղովրդոց բարի ու պարկեշտ օրինակին հետեւիր. որոց
 ամենայն ինչ կըռով ու չափով է. որոց ընտանեկան
 կեանքին լոյս և առաջնորդ՝ ուսումն, դաստիարակու-
 թիւն և տնտեսութիւնն է : Քաղաքակիրթ ժողովուրդ
 այս երեք բառերով կը վարէ իւր ընտանեկան կեանք .

այս երեք բառերն են, որով նորա բարեբաւաստիկ և երջանիկ կազարին աշխարհիս վերայ: Ասան զի ուսման լուսով հաց կը դոնեն. դաստիարակութեամբ հոգին և սիրտ կրթելով բարի ընտանիք կը կազմեն. իսկ տնտեսութեամբ հացին սեղան և այլ կեանքի պիտոյքները շահով ու կշռով կը մատակարարեն միշտ հոգւով ապագայի անատոյգ օրերն. որ անշուշտ կը պատրաստեն մարդոյն համար կամ երջանիկ բախտ կամ թշուառ կեանք: Բայց մարդ իւր ներկային մէջ կամ զգաստութեամբ կամ ապշութեամբ իւր ապագայ օրերն ինքնին ձեռօք կը պատրաստէ. զի ներկայն՝ ապագային հիմն է և ապագայն ներկային յաջորդութիւն և շէնք:


Բողանդակենք մեր յորդորական ճառը. ո՛վ դուք ընտանիք Հայոց, ուղղեցէք ձեր ներկայն, որ ապագայն ուղիւ լինի. տնտեսեցէք ձեր ներկայն, որ ապագային հացը չի պակսի: Մի մոռնաք վերոյիշեալ երեք պայմանները որ մեր թշուառ կեանքը կը բարւոքեն. և այս է՝ լուսով հաց դոնէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք. իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք միանգամայն ձեր ներկայն և ապագայն:

Յաւարտ յորդորիս ներողութիւն կը խնդրեմ քննարան ընթերցողներէն. ես միայն ԴՐԱՍՏԻ ԸՆՏԱՆԵԱՑ դռնէն հարեանցի տեսութեամբ անցի. թերի և անկատար ստուերադիծն և եթ հանելով, բազմահմուտ տնտեսադէտ գրչաց կը թողում ընտանեկան կեանքին ընդարձակ և ճշգրտահան տիպ ըստ արժանւոյն՝ ի տյս հանել:

Ա.

ԴՐԱԽՏԻ

ԸՆՅԱՆԻՔ



ՄՈՒՐԱԳՐՈՅ պատմութենէն կիմանամք թէ՛
Տէր Աստուած տիեզերաց ճարտարապետ երբ
մեր բնակած աշխարհին շէնքը ու հրաշալի զար-
դերը բովանդակեց . նախապէս պատրաստելով
զայն իրբեւ բնակութիւն և սահման թաղաւո-
րութեան Մարդոյն . Աստուած , որ բանիւ
միայն կ'արարչագործէր , Եդեմական դրախտը
իւր ձեռքով տնկեց . և իրբեւ արքայական պա-
լատ զարդարեց զայն 'ի պատիւ առաջնաստեղծ
Մարդոյն , որ իւր տիրական պատկեր կը կրէր .
և ինչպէս յերկինս իւր սկրտական աթոռ դրած

էր, երկիրն ևս Մարդոյն պարգեւ տուաւ. և դրախտին մէջ հաստատեց Ադամ թագաւորին անմահութեան դահը:

Չդիտեմ, երբ կենդանի շնչով ու բանականութեամբ հոգիացաւ հողն ու կաւն, ու յանկարծ աչք բացաւ տեսաւ նախ իւր ստեղծող Արարիչն. երկինք, երկիր և իւր բոլոր շրջապատը՝ զարմանազան արարածները. զգաց արդեօք ու համբուրեց այն մեծագործ ձեռք, որ զինքն յանարգ կաւէն մարդ նկարեց. իմացաւ թէ ինքն երկրի թագաւոր էր և պիտի իշխէր ծովուն, ցամաքին ու բոլոր հպատակ արարածոց:

Այո՛, այս տիրական իշխանութեան բարձրագոյն հրամանն ընդունեց իւր Արարչապետէն. թէ « Աճեցէ՛ք, և տիրեցէ՛ք երկրին »: Բայց անզոյգ մարդն ինչով պիտի աճէր ու բարգաւաճէր:

Ադամ թագաւոր էր, այլ թագուհի չկար. Եւայի, կըսէ Սուրբ Գիրք, թէ Տէր Աստուած համաշխարհական հանդէս կազմեց, բոլոր ազգ թռչնոց ու անասնոց հրաւիրեց դրախտի ծառազարդ սրահը. հրաման տուաւ Ադամայ, որ իւր հպատակ արարածոց վայելուչ անունները ինքն դնէ. յորմէ յայտ է թէ մեր մանուկ

Նախահայր դրախտի դպրոցի մէջ բնագէտ
 իմաստուն էր . վարժապետն Աստուած էր , որ
 փչեց նորա երեսը ու ճառագայթեց գիտու-
 թեան լուսով : Երբ կը տեսնար ու կը դիտէր
 Ագամ կենդանեաց բոլոր ազգը՝ զոյգ զոյգ իւր
 առաջ կեցած , կը հնազանդին իրեն համբոյր և
 ընտանի բնաւորութեամբ , թերեւս ինքնին մը-
 տախորհ լինելով սլահմի տխրեցաւ իւր միայ-
 նութեանը վրայ , ու երանի սուաւ անբան կեն-
 դանեաց . որ զուգակից ընտանութեամբ քան
 զինքն երջանիկ էին : Մանաւանդ երբ կը տես-
 նար որ սոխակ իւր վարդն ունէր , տատրակ
 իւր ամուսին , արօրիկ իւր սիրանուէր ընկերը .
 առաւել եւս վարանեցաւ բանաւոր մարդն
 Ագամ : և այն ինչ նորասպակ թագաւորի մը պէս
 թագ կապած կ'իշխէր . հրամայեց Տէր Աստ-
 ուած , որ ընդհանուր կենդանեաց ազգէն իւր
 ազատ ընտրութեամբ հաւանելով իրեն համար
 կենակից ընկեր՝ հարսն ու թագուհի ընտրէ ,
 զոր և կամի :

Գանի՞ ծանր և դժուարին էր անզուգական
 մարդոյն համար , որ նա խոնարհէր ու ստոր-
 կանար անբանաւոր կենդանեաց սեռէն իրեն
 ընկեր ընտրէր : Եւ միթէ Տէր Աստուած կը
 փորձէր զինքն տեսնել թէ՛ իւր բանաւոր

Նախապատիւ մարդն, որ տիրական պատկերով
կը փայլէր, և որ պատուով ու փառքով բոլոր
ձեռակերտաց վրայ իշխան կարգուած էր, կը
ճանչնա՞յ իւր ազնուականութեան շնորհ ու մե-
ծութիւնն. եթէ կը զիջանի հաւասարիլ անասնոց:

Մեծանձն և հանճարեղ էր մեր նախահայր .
համայն կենդանեաց սեռին մէջ չգտաւ համե-
մատ ինչ, որ իւր պատուոյն ու ընկերութեան ար-
ժանի լինէր, թող այս, երբ սահմանադիր
արարչապետ բոլոր կենդանեաց սեռը զոյգ զոյգ
ստեղծէր էր . զրկանք և յափշտակութիւն չէր
արդեօք եթէ հաճէր Ազամ մինն առնուլ և
միւսն թողուլ, նա կը տեսնար թէ սիրուն եր-
գիչ էր սոխակ, եթէ զայն խլէր վարդի թփէն,
անշուշտ վարդն կը թուովէր ու կը մեռնէր . թէ
որ տատրակն առնուր, նորա ամուսնասէր ըն-
կերն այլեւս ամուսին չընտրելով այնպէս միայ-
նակ զոր հանապազ կը սգար ու կը հառաչէր :
Զո՞վ ընտրէր Ազամ, զօրաւոր առիւծը, որ կեն-
դանեաց թագաւոր էր և անտառ կը սիրէր .
զարծիւն, որ բարձրաթռիչ լինելով ձեռք չէր
հասնէր, կապիկն եւս դիմաց կեցած հըտպը-
տանքով կը խաղար ու կը շողոքորթէր, իրբու
թէ ինքն մերձաւոր ազգակից է Մարդոյն. զայդ-
եւս թողուց Ազամ, որ երթայ վերջի դարուն

իւր բնագէտ ու իմաստակ զաւկներուն հետ ամուսնանայ . որք արհամարհելով մարդոյն տիրական պատիւը , բանականութեան գերագոյն շնորհն . և գիմաց հրաշագեղ տիպարը , անմտացան կարծել թէ մարդն կապկի սերունդ է , և կապիկն է մարդոյն նախահաւն :

Այսպէս անընկեր մնաց խեղճ Ադամ ու ըսկսաւ հողալ ու տիրիւ , Բոլոր Դրախտի գեղազան վայելչութիւնք չկրցին զինքն սփոփել , նա միայնակ էր . ուստի , Տէր Աստուած վութաց նորա տիրութիւն վարատել թանձր քուն թափեց նորա աչքին վրայ , և նորա կողերուն մի ոսկորն առնելով հրաշապէս նորաստեղծեց Եւան կենդանի հողէն նորահրաշ կենդանի մարդ կերտելով : Զարթեաւ Ադամ քնաթաթախ աչքով , տեսաւ առընթեր իւր կեցած իւր համատիպ պատկերը , հիացաւ , հաւնեցաւ , ու խայտալով գոչեց . « Ահա այժմ ոսկր յոսկերաց իմաց , և մարմին՝ ՚ի մարմնոյ իմմէ » . և այլն :

Ադամ , որ բոլոր կենդանեաց անունները վայելչապէս յորջորջեց , առանց վարանման գրտաւ իւր ընկերին անունը . Աստուած զայն Օդնական կոչեց . իսկ Ադամ՝ Էին . զոր բացատրելով կը մեկնէ իբր իսկական մասն իւր անձնէն առնուած . սրով մեղմով իմն կ'աղդադարէ իւր

արարչին, թէ ինչպէ՛ս հնար էր, որ ինքն օտար մարմին և օտար ոսկր իւր համար ընկեր ընդունէր, և կցէր պատուաստէր զայն իւր մարմնոյն միութեան հետը, որ անբնական էր :

Այսպէս աւարտեցաւ Դրախտին հարսանիքը . որոյ պսակադիր Քահանայն Աստուած էր, Եկեղեցին Դրախտն էր, Խաչ ու Աւետարանն Կենաց ծառն էր . Շարական երգող Տիրացուն Սոխակն էր, վկայող ժողովուրդը բոլոր կենդանեաց սեռն էր . հարսնարանին խնճոյք կաղնոջ մատակարարն ու մատուակ՝ հրեշտակաց դասն էր . անմահ անուշահամ գինին՝ Դրախտի չորս գետերն էին . սուրբ և մաքուր առագաստ՝ հովանաւոր ծառաստանն էր :

Ահա այսպէս կազմեց Տէր Աստուած առաջին ընտանիքը . իւր արարչական աջով օրհնեց նորապսակ ամուսինները, և սիրոյ անխղելի կապով կապեց զիրենք, այնչափ ամուր և անբաժանելի, մինչեւ թողուլ հայր ու մայրը և ամուսնուոյն ետեւէն երթալ . որ և կը յայտարարէ դրախտին Քահանայապետն թէ, « Զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեացէ՛, այսինքն թէ պսակին խորհուրդը վեհ է . և թէ զայն Արարչին հզօր ձեռք կապեց . թող ստեղծուած մարդը իւր տկար ձեռքով չհալի յանդրդնութեամբ քակել զայն :

Բայց աւա՛ղ, դրախտի ընտանեաց մէջ ուրիշ
 երկպառակիչ մարդ չմտաւ, զի դեռ չկար.
 միայն խորամանկ օձը կը նախանձէր երկու սի-
 րելեաց երջանկու թեան վերայ. ուստի նեն-
 գութեամբ խորհեցաւ երկու անփորձ ամու-
 սինները ապերջանիկ վիճակի մէջ դնել. և գը-
 րախտին մէջ մահ բերելով, անեղծ մարդոյն
 անմահ կեանքը մեռուցանել, կեղծաւոր ու
 ստախօս կենդանին իւր պատերազմի ձեռնար-
 կութեան գաղտնի յատակագիծը պատրաստե-
 լով՝ յարձակեցաւ նախ տկար կնոջ վերայ այն
 պահունը, երբ նա միայնակ էր ու առանց իւր
 մեծ թիկնապահին կը շրջէր. գիտութեան ծա-
 ուին տակ իւր դարանը լարեց կնոջ նորազգաց
 ցանկութիւնը դրդուեց դէպի գեղեցիկ պտու-
 զը, գեղեցիկովը՝ գեղեցիկը որսուց, նա քաջ
 մտաբերեց թէ երբ զկին խաբեմ հանեմ դրախ-
 տէն, անշուշտ Ադամ անոր ետեւէն կերթայ.
 Արարիչն այնպէս պատուիրեց. կարելի չէ որ
 նա բաժնուի իւր կենակցէն. և թէ չերթայ եւս,
 դարձեալ ես կը շահիմ. զի ամուսնութիւն առանց
 աճման կմնայ և Աստուծոյ օրհնութեան նըպա-
 տակը ի դերեւ կը հանեմ:

Ի՞՞՞՞ օձն այսպէս յաղթանակեց. և իւր յաղ-
 թանակ տեւեց ցվեց հազար տարի. մինչեւ հա-

սաւ Աստուածորդին , խաչի ոտքի տակ ճմլեց
դարանակալ օձը , և դոչեց՝ « Ու՛ր է , մահ ,
խայթոց քո : »

Անխելամուտ մարդիկը դրախտի ընտանեաց
և արդի Ադամորդւոց վիճակին վերայ կարեկ-
ցելով՝ զԱստուած կը դատեն . թէ նա խստու-
թեամբ պատժեց իւր սիրելի ձեռակերաները ,
մահով և արիւնով դրեց նոցա վճռագիրը . փա-
նաքի պտղոյն համար մահ սահմանեց . զոր իր-
բեւ ծաղր ու կատակ ի դէմս կը բերէր կոյր
Յաղկերտը՝ Հայոց նախարարաց առաջը :

Ափիւբերան պէտք է լուէ աստ մարդոց կե-
ղակարծ դատաստանը . զի անհուն անտակ է
Աստուծոյ նախատեսութեան խորը . ս'վ դի-
տէ , դերագոյն և բարերար դատաւորը՝ դը-
րախտի յանցաւոր ընտանիքը պատժելով առա-
ւելեւս բարերարեց . վասնզի մեր նախածնողք՝
Գիտութեան բարւոյ և շարի պտուղ ճաշակելէն
յետոյ եթէ յաջողէին Կենաց ծառէն եւս ճա-
շակել , աներկբայ էր որ այնուհետեւ մեզաց
մէջ անմահ կը մնային , որով իրենք և իրենց
բոլոր սերունդները անիծեալ և տատանեալ
կեանք պիտի վարէին աշխարհիս վերայ , և մա-
հու ցանկանալով չգտնէին զայն :

Խնամակարն Աստուած մահով Հանդոց հո-

դին մէջ իւր պատժապարտ ծառաները, մինչև
իւր միածին որդին եւս ի դերեզման այցելելու
զրկեց . նա մահով քաւեց իւր նախահօր յան-
ցանքը . կրկին անգամ մեղապարտ ծառայն
հողէն հանելով զրկեց վերբերեց տարաւ երկ-
նից դրախտը :

Դրախտի տարաբախտ ընտանիքէն պէտք է
օրինակ ու խրատ քաղենք նոր դրախտի որ-
դիքներս, զգուշանանք չարանախոսնձ օձին հը-
րապուրիչ թոյնէն . եթէ նա ջանաց , մտէ
մտոյց հին դրախտը ու մեր նախածնողը մա-
հացոյց , պիտի ջանաց նաեւ նոր դրախտի մէջ
Ադամայ հաւատացեալ որդիքները երկնից դը-
րախտէն հանել , Հոն տեսանք . որ բարեխնամն
Աստուած թէպէտ մեծագորով , այլ արդարու-
թիւն ի դործ դնելով չխնայեց երբէք իւր նոր
ձեռատունիներուն , զոր վաղ խամբացոյց խո-
րամանկ օձին շունչ :

Արժան է խելամտիլ անցելոյն աղէտներով ,
գլխտել ու տեսնալ նենգաւոր օձին դարանա-
մուտ հեաքերը , թէ նա ինչպէս կը շրջի ու կը
սողայ մեր մէջ . նա աշխարհիս չար մշակն է ,
որոմնացան թշնամին է , նա ատելութիւն կը
սերմանէ , նա միութիւն կ'երկապառակէ , ու վեր
ի վար կը խռովէ ընտանեկան կեանքը : Բայց

հզօր մանուկն Յիսուս բռնեց ու կապեց յաւի-
տենական շղթայով այդ մահաշունչ վիշապը, և
խրախոյս կարդաց Եկեղեցւոյն ընտանեաց, որ
զօրանան, քաջալերուին, կսխեն ու ջախջախեն
նորա գլուխը, որ դրախտի օրէն սկսեալ դա-
րանակալ օձը թշնամի դարձաւ մարդոյն, ու
միշտ կ'սպասէ հարկանել նորա դարչապարը և
թունաւորել մարդոյն կեանք:



Դ Ր Ա Խ Ս Ի

Ը Ն Յ Ա Ն Ի Ց

Ա Ր Տ Ա Ք Ո Յ Դ Ր Ա Խ Ս Ի Ն



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ կը պատմէ թէ՛ երբ Տէր Աստուած դրախտի յանցաւոր ընտանիքը զրկելով անմահ և ազատ վիճակէն, դուրս վարեց Եդեմի դռնէն. ու դրաւ գիրենք յանդիման դրախտին. այն ապերժանիկ թշուառութեան մէջ, ո՛վ կարող է նկարագրել մեր նախածնողաց սուգըն, ապաշաւ և ցաւագին ողբ, զոր ոմն հայ երգիչ կը յօրինէ պարզ ու սրտառուչ.

« Աղամ'նստէր դուռն Դրախտին ,

« Լայր և ձայնէր ողորմագին .

« Երէկ էի ի մէջ դրախտին ,

« Լցեալ լուսով Աստուածային » . և այլն .

Այո՛ , պէտք էր լային ու անմխիթար ողբային փառաց վայելչութենէն տարամերժեալ ընտանիքը , որք միմիայն պահ մի դրախտի երջանիկ կեանք համբուրելէն յետոյ՝ աշխարհի թշուառութեան փուշը գրկեցին , և այն առաւել ևս կսկիծ էր , որ աչքով մտտ կը տեսնային մի կողմ դրախտ երկնաւէտ , մի կողմ երկիր անիծեալ . մի կողմ բիւրազան ծաղկունք հոտանոյշ , մի կողմ քստմնելի տատասկ փուշ . մի կողմ ազատութիւն՝ Արարչին ազատ գաւազանին տակ , մի կողմ ստրկութիւն՝ աշխարհի իշխանին բռնաւոր ձեռքին տակ . մի կողմ հանգիստ անաշխատ կեանք , մի կողմ քրտինք երեսաց տաժանելի վաստակ . միով բանիւ , մի կողմ անմահ կեանք և յաւերժական փառք , մի կողմ մահ , հող , գերեզման և դժոխք :

Բայց իսպառ անմխիթար չէին տիրոջ ապերջանիկ ծառաները , բաւ էր թէ հանդէպ դըրախտին կը բնակէին , վասնզի մարդոյն խնամատար Արարիչը՝ խորհրդով տնօրինեց այս միջակը . որպէսզի իւր հէք ծառաները սիրովուն , որ կենաց ծառի անմահութեան ճաշակէն զըրկուած էին . գոնէ յուսով մխիթարուն տեսնալով մտէն ազատարար կեանքը , որ կենաց ծառի բարձրածայր զիւղերէն կախուած էր , խա-

չանման բազուկները տարածուած յոյս կը ցուրար աչքերէն, կը հայէր առ նախածնողն Եւայ, և այս բան կաւետէր նմա. « Ես ձեր հանգերձեալ փրկիչ և բարեկամն եմ, պիտի դամ ու փրկեմ զձեզ, աներկբայ հաւատով սպասեցէք ինձ Երիքովի ճանապարհին վերայ, ևս հոն կը գտնեմ զձեզ, Դուք կը ցանկայիք Աստուած լինել, ևս էլ այժմէն կը ցանկամ մարդ լինել, Դու ինձ համար կոյս մի պիտի ծնանիս, Եւայ, և ևս այն կուսէն պիտի դամ ու ծնանիմ Էմմանուէլ Աստուած. քեզ նշան կուտամ, ճանչցիր այն կոյս, նորա անունը Մարիամ է, և նա միայն պիտի լուծէ քո վրէժը քո թշնամի ռիսերիմ օձէն: »

Դրախտի ժառանգորդները թէպէտ զրկուեցան հայրենի անփուշ կեանքէն. բայց իրենց անկապտելի ժառանգութիւնն էր այն օրհնութիւնը, որով Աստուած օրհնեց իրենց ամուսնական պսակը թէ՛ « Աճեցէք . . . ու լցէք երկիրը »: Ուստի առաջին երկունքն սկսեց նախամօր Եւային, անդրանիկ որդի ծնաւ կայինն, և հետզհետէ նահապետական առաջին ընտանիքը կազմեց Ադամայ տուն՝ ուրիշ շատ զաւակները ծնելով:

Ադամայ տունէն և ընտանիքէն տարածելով

բարդաւաճեցան բոլոր աշխարհիս սերունդք ,
և մի ընտանիք՝ բովանդակ երկրագունդը այլ
և այլ ազգերով լցուց ու զարդարեց :

Չարկամ թշնամին բանսարկու օձը , մարդն
ուր երթար՝ նա ետեւէն կը սողար , գրախտէն
ելաւ , Ադամայ տունը մտաւ , և իւր բնածին
չարութեան նպատակն էր խաղաղ ընտանիքը
խրոսովել , նախանձ և ատելութիւնը փշել նոցա
սիրտը՝ թէ հնար լինէր . նա կը կամէր ամբողջ
Ադամայ տուն և ընտանիքը կուռով սպանու-
թեամբ սպառել , նա թոյն թափեց նախ կայենի
ոխակալ սիրտը՝ հարազատը հարազատին դէմը
ղինեց , նախաձեռն սպանութեան ոճիրը . առա-
ջին ընտանեկան սուգ , առաջին մահն ու գերեզ-
ման , առաջին անգամ մտոյց Ադամայ տունը :
Մեր նախածնողք կոծելով լացին , անմեղ Աբե-
լին վերայ , իրենց ձեռքով փորեցին դժոխքին
փոսը , ու իրենց աչքով տեսան առաջին նուաղ-
չարաշուք մահուան սեւ դէմքը և գերեզմանին
սոսկալի ստուերը :

Լացին միանգամայն կայենի ապիրատու-
թեան վերայ , մինչեւ Ղամեքայ նետը Աբելի
անպարտ մահուան վրէժ լուծեց :

Ադամայ տուն և ընտանիքը անմխիթար սըր-
տով ու սգով կանցնէին դառնաբեր օրերը ,

մինչեւ ծնաւ միտիթարութեան որդին Սէթ նահապետը . որ իսկական նախատիպար էր Աստուածորդւոյն . և ինչպէս Սէթայ սերունդը Աստուծոյ որդիք կոչուեցան . Քրիստոս եւս իւր հաւատացեալ որդիքները այդ բարձր անուանով կոչեց : Աստանօր նկատել արժան է կայենի տան ընտանիք և Սէթայ տան ընտանիքը , երկիւղած և աստուածապաշտ Սէթը իւր սերունդոց առաքինութեան օրինակ և դատարարակ կը հանդիսանայ . իսկ կայեն , ազահ ինքնասէր ու վայրագ մշակը՝ չարութիւնը կը սերմանէ ընտանեկան անդատանին մէջ , մեծամեծ հսկաները կը բուսնին , որք աճելով զօրանալով , հեղձուցին Սէթ նահապետի բարեբոյս ծաղիկները . և նորա ընտանեկան անխառն անդատանը խառնագնաց անառակութեամբ ապակտնեցին : Աստուծոյ որդիքները խնամութեամբ խառնուելով Մարդկան որդւոց հետը՝ գայթակողութեան չարութիւնը զբարին յաղթահարեց , որով այս երկու սերնդոց խառնածնունդ զաւակները միահամուռ մուրեցան Աստուածապաշտ նահապետաց ուղիղ ճանապարհէն :

Սէթայ և կայենի ցեղերուն այս նշանաւոր դէպքը ճշգրիտ ու անվրէպ օրինակ կ'ընծայէ մեզ՝ չարերուն հետը չընտանենալ , և ոչ իսկ խը՝

Նամութեամբ ազգակցութիւն կապել : Չարերը միշտ մարդկային ընկերութեան գայթակղութիւն են , և միշտ կան ու կուգան մեր կենաց ճանապարհին վերայ . յորմէ խուսափել անկարելի է . զի ասաց Քրիստոս . « Ոչէ մարթ շգալ գայթակղութեան » : Ուստի ամենայն խնամով զգուշանալ պէտք է , մանաւանդ ընտանեկան կապակցութեան մէջ : Մովսէս Աստուածախօս օրէնքներով պատուէր կուտար իսրայէլի որդիքներուն չխառնակել հեթանոսաց հետը . նոյնպէս և Յիսուս իւր Աւետարանով անդադար կը քարոզէ Եկեղեցւոյ որդւոց զգուշանալ շարերու գայթակղութենէն :

Աստուած երբեմն շարերու մէջէն եւս բարին կը հրաշագործէ , և նա է , որ կը հանէ պատուականն յանարգէն . վասնզի Սեթայ ցեղի մոլորուած զաւակներէն Ենովս նահապետ իբրեւ բարի շառաւիղ կը հանդիսանայ Սէթ նախահօր Աստուածպաշտութեան արմատին վերայ . և մինչդեռ նախադարուն զեղծեալ մարդիկ Աստուծոյ տեսութենէն յուսահատեալ անտերունչ և առանց օրինաց կը շրջէին՝ օրըստօրէ վատթարանալով ամբարիշտ գործոց մէջ , Ենովս միայն յուսացաւ կոչել զԱստուած . ինչպէս կը վկայէ սուրբ գիրք : Մարդիկ իրենց թանձր մոլու-

Թեան մէջ մոռցէր էին Աստուծոյ սուրբ անունը
 և նորա արարչական խնամք՝ երբ տակաւին ողջ
 էին Ադամ, Սէթ և Ենոյս նահապետները. որք
 իբրև կենդանի քարոզ և օրինակ բաւական
 չեղան Աստուածաշուտութեան յիշատակը ան-
 մոռաց պահել ընտանեկան կեանքին մէջ : Շատ
 զարմանք է որ Սուրբ Գիրքը առանց յիշատա-
 կութեան անցած է և բնաւ չի յիշեր կնոջ մի-
 անունը, որ երկիւղած բարեպաշտութեամբ հան-
 դիսացած լինէր նա ընտանեկան կեանքին մէջ
 ինչպէս Աստուածահաճոյ նահապետները :

Ենոյսէն յետոյ չնաշխարհիկ առաքինու-
 թեամբ բարձրացաւ Ենոյք նահապետ. որուն
 համար Սուրբ Հարց կարծիքն է, թէ նա ժուժ-
 կալութեան մէջ գերազանցելով հաճոյացաւ
 Աստուծոյ և իր անժուժկալ նախածնողաց պարտ-
 քը վճարեց լիովին : Ուստի վերին նախախնա-
 մութիւնը փոխեց զինքն յերկնային Դրախան .
 հանելով որոշելով անբարիշտ մարդոց կարգէն
 արդարոյն կեանքը, որպէս զի մարդկանց չա-
 բութիւնը նորա լուսաւոր վարքը չաղարտէ :

Սուրբ Գիրք՝ առաջի դարուն վերջի նա-
 հապետ և երկրորդին զից նահայր Նոյ վկայու-
 թեամբ կը հռչակենք զարդարեալ կո-
 չելով զինքն իւր արդատահմին մէջ Նոյին ժա-
 ճութեամբ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱԿ

մանակը երկիրն ամբողջ ապականուած էր շարութեամբ . այլևս չկարաց հանդուրժել Տէր Աստուած , ահաւոր աչքով դիտեց երկնքէն՝ երկրի ամբարշտութեան վերայ . մարդոց ապիրատ դորժքերը չափելով՝ ասաց թէ « Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ » . որով ցոյց կուտայ թէ առ հասարակ մարդկային ընտանիքը , հաճատք և Աստուծոյ ոգին մերժելով շողախուած էին մարմնապաշտ մոլութեանց մէջ . երկնից արդարութիւնը պատուհասածելով պիտի ջնջէր ու բառնար իրենց կեանքը : Ուստի Նոյ նահապետ և իւր ընտանիքը միայն որոշելով ապականեալ մարդոց ընտանիքներէն . փակեց զինքն հրաշակերտ տապանին մէջ , ջրահեղձ առնելով կորոյս մարդկութեան սերունդը աշխարհիս երեսէն , միայնակ արդար նահապետին տունը պահելով բաւական համարեց զայն , որ երկրորդ դարուն սկիզբն մարդկային նոր սերնդոց նախահայր անուանեցաւ :

Նոյայ տապանին նաւապետ Աստուածային տեսչութիւնն էր , որ վարելով զայն առանց զեկի բերաւ հասոյց Այրարատայ լեռանց վերայ Մասիսին բարձր գլուխ նաւահանգիստ կազմեց : Ծովացեալ ջրհեղեղ կը ցամքի երկրիս և

րեսէն, ջրասոյզ կը ջնջուին նաև խազառ մարդիկ և իրենց ամբարշտութեան գործքերը:

Սուրհանդակ Աղաւնին ձիթենիի կանանչ ճղղիկ մի նշան բերելով կ'աւերտէ թէ պատուհասի ձմեռն անցեր է, դարուն եկել է աշխարհ: Նոյ նահապետ իւր ողջ ընտանեօք տապանէն դուրս կերնէ, և կիջլեանի նախ նոյն Մասիսի կողերուն վերայ, յորում իւր վաղեմի ուխտին հաճոյական զոհ մատուցանելով՝ կ'ողոքէ զԱստուած ՚ի հաշտութիւն, և ահա Միրանի դօտին կամար կը կապէ Այրարատայ աշխարհին վերայ, ձգելով մէկ ծայրն ՚ի Մասիս և միւսն յԱրագած:

Աստուած Արդարոյն հետը յաւիտենական ուխտ կը կնքէ այլ ևս չապականել երկիրը ջրհեղեղի պատուհասով: Վաստակաւոր նահապետ յիշելով իւր արդար մշակութեան արուեստը, Մասեաց արեգդէմ դարև անդին վերայ մի այգի կը տնկէ իւր ձեռքով, և օր մի կարբենայ դինով, համեստ ծերունին գլուխ Մասեաց թեւին վերայ դնելով կը նընջէ և հովը կը հոլանէ նորա հանդերձը: Քամ կրտսեր օրդին կը տեսնայ զայն, ծանակելով կը ծիծաղի. Սէմ ու Յաբեթ պատկառանօք կը ծածկեն իրենց հօր առականքը. ծեր նահապետ

կը զարթնու և կզգայ . կանիծէ քանան մա-
նուկը , և կօրհնէ Սէմ ու Յաբեթ :

Նահապետական ընտանեաց մէջ շատ նշա-
նաւոր էր ծնողաց յարգանք ու որդւոց պատ-
կառանք . երանի՛ թէ այս վսեմ առաքինու-
թեան օրինակը և յիշատակը Յաբեթի տան
անցեալ և ներկայ որդիքներր անմոռաց պա-
հէին միշտ ընկերական և ընտանեկան կեան-
քին մէջ , զոր չի մոռնար Մովսէս պատմել
Սուրբ դրոց կարդին հետը . ցոյց տալով թէ
քանի՛ պատկառանաց ու համեստութեան շը-
նորհ կրկայլէր Նահապետաց ընտանեկան կեան-
քին մէջ :


Գ.

ՀԱՅՈՑ

ՆԱԼԱՊԵՑԱԿԱՆ ՅՈՒՆ

ԵՒ

ԸՆՏԱՆԻՒՄ



ԴՐԱՒՏԻ նախաստեղծ ընտանիքէն սկսելով
միայն մի համառօտ նկարագրով յիշատակե-
ցինք քանի մի Աստուածահաճոյ նահապետաց
կեանքը, զոր կը պահանջէր գրոյս նպատակը :

Եւ թէպէտ նոյէն յետոյ առաւել ևս կը
փայլին հաւատացեալ ընտանիքով Աբրահամ
Իսահակ և Յակօբ նահապետները, որոց վարք
և ընտանեկան կեանքը սքանչելի է, և մարդ-
կը հիանայ երբ ուշադիր մտքով կը կարդայ
Մենդոց գիրքը :

Բայց շարագրածիս կարգ և առարկայն երբ
պահանջեն, անշուշտ իբրեւ օրինակ յառաջ

պիտի բերեմ. հին աշխարհի առաքինութեան այդ շքնաղ տիպարները, որոց ընտանեկան կեանքը զարմանալի է, ուր ոչ դիր, ոչ դպրոց, ոչ ուսումն կար. միայն խիղճ, երկիւղածութիւն և Աստուածաշնորհութիւն կառաջնորդէր և կը դաստիարակէր զիրենք. արդի լուսաւոր և քաղաքակիրթ աշխարհի որդիքները պէտք է պատկառին նահապետաց պատկառելի շուքէն:

Մեր ազգին և Հայոց աշխարհին ընտանեկան կազմութեան առաջին հիմնադիր հայր Նոյ նահապետն է, ինչպէս և ջրհեղէղէն յետոյ հանուր մարդկութեան նախահաւն է. ուստի մեք Հայկայ անունով Հայ կը կոչուինք, Արամայ անունով Արմէնեան, և երբեմն ևս թորդոմական կամ Ասքանազեան. բայց այս նահապետները բոլորն եւս Նոյի կրտսեր որդի Յարէթի սկզբնական սերունդէն են, սորա համար մերթ ևս Յարեթական արգ կը կոչուինք:

Ինչպէս որ կը կարծուի, դրախտը Հայաստանի մէջն էր, և մարդկութեան նախահայրը իւր ընտանեկան կեանքն այդ աշխարհէն ըսկսեց. նախախնամ տեսչութիւն այնպէս կամեցաւ. որ դարձեալ մարդկութեան սերունդին աճումն դրախտի մօտէն սկսի: Ուստի

Հայոց Արարատեան աշխարհը մարդկային ազդի նոր խանձարուր եղեւ . Նոյ Նահապետ իւր բարեճոխ ընտանիքը Մասիսի հովանեաց և թեւ լին տակ հաստատեց , որ այժմ Նախիջեւան կըսուի , գրեթէ հինգ հազար տարիէն աւելի է այս աւանդական անունը անկորուստ պահելով մինչեւ ցայսօր նոյն անունով կը կոչուի :

Երբ Նոյի տան ընտանիքը , ինչպէս կը կարծուի չորս հարիւր տարուան միջոցը , այնչափ անեցաւ ու բազմացաւ մինչեւ Արարատեան լայնատարած աշխարհը այլ եւս բնակութեան տեղ չի մնալով , գաղթականութիւն սկսեց սրբուել աշխարհիս ամէն կողմը , առաջին ընտանեկան գաղթականութիւնը գէպ 'ի Բաբելոնի Սէնարայ դաշտ չուեց . չը գիտեմ թէ ինչպէս այս գաղթական ընտանիքը վաղ և շուտ մոռացան Նոյ Նահապետի արդար ծերոյն յիշատակը և նորա հաւատք ու Աստուածապաշտութեան երկիւղածութիւնը . և ըսկըսան նանրախորհուրդ մտօք երկնից ցասման գէմ մի հզօր ամբարտակ կանգնել , թերեւս յաւանդութենէ յուշի պահելով թէ ինչպէս բարձրագագաթ Մասիս Նոյայ տապանին ասպնջական եղեւ , այդ մեծագործ ամբարտակին եւս կարող է զիրենք ազատել , եթէ

կրկին անգամ ջրհեղեղ դայ աշխարհ : իսկ հա-
ւատացեալ Նոյին սիրելի պաշտեցեալ Աստուած՝
որ հաշտութիւն ուխտեր էր , պահ մի ծածկեց
իւր հաշտութեան աղեղն , և Մասիսի գլխէն
իջաւ ՚ի Բաբելոն , մի շնչով խորտակեց ամբար-
տակն ու խառնակեց միաբարբառ մարդկանց
լեզուները , և ցրուեց շարաժողով միաբանու-
թիւնը , որպէս զի ճանչան Բաբելոնի ամբարիշտ
ընտանիքը թէ իրենց մեծամիտ խորհուրդ և
գործն ընդունայն և Աստուծոյ ընդդէմ էր .
և այնուհետեւ այլ եւս չժպրհին երկնից
Բարձրելոյն դէմ թումբ կանգնել :

Մինչդեռ Բաբելոն կը խառնակէր , Բէլ կը
տիրապետէր , Արարատեան աշխարհ խաղաղու-
թիւն էր , Հոն աղատութիւն և Աստուածպաշ-
տութիւն կը թագաւորէր , իւրաքանչիւր տոհ-
մական նահապետները իրենց ընտանեաց վե-
րայ կիշխէին տանուտէրական իրաւունքով :
Իսկ արդար Նոյ նահապետաց նահապետն ,
որ դեռ ողջ էր , Մասիսի մեծաշէն պալատին
դուռը իւր աթոռը դրած կը հովուէր Հայոց
մտերիմ ժողովուրդը , որ իրենց բնականունդ
հայրենիքը սիրելով երբէք չբաժնուեցան , ո-
րով իրենք անմասն մնացին Բաբելոնի պատու-
հասէն , անարատ պահելով հայրենի նախնական

լեզուն, կրօն և երկիր շած Աստուած պաշտու-
թիւնը: Քանզի Նոյ նահապետ, որ պահապան
էր աշխարհին, ինքն կենդանի օրինակ և քա-
րոզ էր, արդարութեան լոյս կը ծաւալէր բո-
լոր ժողովուրդի կեանքին և ընտանեաց վերայ:
որ բաւական կը լինէր մէկ արդար մարդ աշ-
խարհին լոյս տալ, և ազդը մոլեկրօն ամբա-
րըշտութենէն ազատ պահել: Նոյին արդարու-
թեան լուսով զինուեցաւ մեր Հայկ նահապետ
աշխարհակալ Բէլին դէմ, և զայն նշկահելով
Բարիլոնէն կրկին դարձաւ իւր հայրենիքը. ե-
կաւ համբուրեց հինաւուրց ալեւորեալ ծերոյն
տապանաշէն աջը. եւ ես կը հաւատամ թէ նո-
րա զօրավիգ օրհնութեամբ զօրանալով, յաղթա-
նակ տնկեց Հայոց ձորին մէջ և կործանեց այն
հսկայ որսորդը, որ կը խիզախէր Աստուծոյ ա-
ռաջ և եղջիւր կ'ածէր երկնից դէմը:

Սատի կըսկսի Հայկատուն և ընտանիքը, և
հետզհետէ տանուտէրական իշխանութեամբ
ազատօրէն կը կառավարի Հայոց աշխարհ:

Հայկայ կեանքէն և թուականէն սկսեալ
մինչեւ ցայսօր դրեթէ չորս հազար այսքան
տարի կը հաշուեն, օրհնեալ է Նախախնամու-
թեան անունը, որ դեռ Հայոց ազգը և իւր
յիշատակը կենդանի պահուած է: Այսչափ

Ժամանակի ընդարձակ միջոցի մէջ, կան ուրիշ
ազգերը, որ հայրենիքէն դաղթականութեամբ
ելած են, կան որ սպառած ու նուազած են,
ինչպէս Հայոց դրացի Ասորին, Հայոց ազգը և
իւր ընտանիքը, որ մեծագոյն մասամբ իւր
հին հայրենեաց մէջ մնաց, պահպանեց ու կը
պահպանէ դեռ իւր նախեաց հողն ու գերեզ-
մանը: Ամէն վիշտ ու տառապանք կրեց, աշ-
խատեց միշտ Նոյա տնէն, Մասիսի սարէն չհե-
ռանալ, ուր Քրիստոս Հայաստանեաց եկեղեց-
ւոյ կաթուղիկէն բարձրացուց:

Զգիտենք, և կը տարակուսինք թէ արդեօք
Հայոց ազգը իւր Նահապետին տուն և հայրեօ
նիքը չի թողլով՝ նոյն նախնի նահապետաց
ընտանեկան կեանքին շնաշխարհիկ առա-
քինութիւններն ողջ ու անարատ պահեց: Այդ-
ինքնին յայտնի է, և պատմութիւնը մեզ
կուսուցանէ, երբ ազգ մի ալ և ալ ազգաց
տիրապետութեան տակը կը նուաճի, իւր ինք-
նավար տղատութիւնը կը կորուսանէ, անշուշտ
նա կ'ստիպուի օտարի կեանքին ու սովորու-
թեանց հետեւիլ: Սորա համար Աստուծոյ
պատգամախօս Մովսէս օրէնքով կարգիղէր իս-
րայէլի ժողովուրդին, որ զգուշանան և չխառ-
նակին հեթանոսաց հետը, որպէս զի չսորվին

նոցա անարժան դործերը , Հայոց ազգը և իւր
Նահապետական ընտանիք այդ խառնակութե-
նէն ազատ չմնացին , ոչ հեթանոսութեան դա-
րուն մէջ և ոչ քրիստոնէութեան , Պարթեւա-
կան Արշակունիք , Ռազրատունիք , Ասորիք
Պարսիկք , Մարք , Արարացիք , Յոյնք , Թա-
թարք , և այլ փոքր ու մեծ ազգերը , կոխե-
ցին մեր հայրենեաց հողը . մերթ խառնուե-
ցան ու ձուլուեցան մեր ազգին հետը , մերթ
տիրեցին ու զօրացան , մերթ դերեցին ու կըռ-
փեցին , ո՛վ կը տարակուսի թէ այսքան խառ-
նակութեանց մէջ ո և իցէ ազգ մի կարող չէ
իւր հին ընտանեկան կեանքը , ողջ ու անեղծ
պահել , երբ այնչափ յերզախոխութիւնք մեր
ազգային կեանքը իւր նախնի պարզութենէն
հանելով , այլափոխեր են . շատ դժուարին է
ստոյգ և անխառն նկարագիրը հանել մեր
ժողովուրդի կեանքին , Մանաւանդ մեր ազգի
հնութեան պատմիչները դուն ուրեք ժողո-
վուրդին կեանքն ու բարք շոշափելով կանց-
նին , միտ դնելով միայն նկարագրել պատե-
րազմի դաշտ , քաջաց դոյծը . և շատ եւս ողբ
և կոծ ժողովուրդի աղէտներու համար . ուստի
քննասէր ու բանասէր միտքը շատ դժուարու-
թեամբ կարող է իրաց պարագաներէն դուշա-

կեւ մեր նախնի ժողովրդոց բուն ընտանեկան կեանքն և աւանդական սովորութիւնները : Եթէ կան տակաւին մեր հին կեանքին մնացորդ նշխարները , դորա հաւատարիմ աւանդապահը մեր հայրենեաց ժողովուրդն է . վասն զի դադթական հայոց մասն , ուր որ գնաց՝ հոն իւր մեռելոց հետը թաղեց նաեւ իւր հայրենեաց հին ու սլատուական աւանդները . Մասիսին հնութեան ու փառաց հետը՝ մուցաւ նաեւ Էջմիածնի բարձրագոյն կաթուղիկէն ,

Իսկ դուք , ո՛վ որդիք Հայոց , որ մեր հին Նահապետական տան ժառանգորդ զաւակներն էք . հոն հայրենի տունը կացէք , մի՛ հեռանայք , սիրեցէք Մասիսը , իւր տապան և սուրբ Գրիգորի Կաթուղիկէն . մշակեցէք Նոյայ ձեռատունկ այգին՝ Արարատայ դաշտը , մի՛ թողուք յաւիտեան Նահապետական տուն և ընտանիքը . դուք Մասիսին հարազատ որդիքներն էք , Մասիսը ձեր հայրենի սեպհական տունն է . թող շէն մնայ ձեր տունը , շէն մնայ Նոյայ դերդաստանը , բարդաւածին օրհնեալ Յարէթի որդիքները , արդար Նահապետին գերեզմանին ազերս և զոհին ծուխ մինչեւ երկինքը ելլէ , երկինք հաշտուի , իւր աղեղը ձգէ յաւերակն Անին և յԱրմաւիր :



Դ.

ՄԱՐԴ

ԵՒ

ԱՄՈՒՆՆՈՒԹԻՒՆ



ՄԱՐԴՈՅՆ Արարիչը ամուսնութիւնը միայն մարդոյն համար սահմաններ է . և ամուսնութիւն Աստուծոյ խորհրդաւոր , ձեռագործ և բնական օրէնքն է : Մովսիսին օրէնքները տէր Աստուած Սինայի սարէն տուաւ , իսկ ամուսնական օրէնքը դրախտէն կրօկսի : Անդրանիկ մարդն Ադամ և նորա ամուսին Եւայ երբ արարչութեամբ աշխարհ եկան , այս բնական օրէնքը իրենց գոյութեան հետն էր : Եւ ի՞նչ է այս արարչադիր օրինաց զօրութիւն և նպատակը : Այդ ինքնին յայտնի է , զօրութիւն բնական սէրն է և նպատակը մարդկային սե.

ուին բարգաւաճումն ի փառս իւր արարչին :

Այո՛, ամուսնութեան բուն օրէնքը բնական սէրն է, որ մարդոյն բնութենէն անբաժանելի է : Բնական սէրն հաւասար է նաև ամէն թռչնոց և անասնոց առանց ամուսնական պայմանին՝ որ միմիայն ազատ մարդոյն համար է : Բնական սէրն է միայն բոլոր բնութեանց կենդանատու հոգին և զօրութիւն, եթէ չը կենդանաժնէ սէրը՝ բնութիւնը կը մեռնի, ոչ մայր կը ծնանի և իւր զաւկին կաթ կուտայ, ոչ հաւ, ոչ ճնճղուկ ձագեր կը հանեն և կուտ տալով կը սնուցանեն :

Ուստի, արժան է, որ ամենայն իրաւամբ ընդունիմք, թէ ամուսնական օրէնքը աշխարհի պարզկութեան հիմն է, բնութեան մէջ խորապէս ~~հաստատուած~~ և ոչ ձեռք մի կարէ խախտել զայն, և եթէ խախտի՝ մարդն իւր կեանքով կը չքանայ, և այլ ևս չեն պէտք աշխարհ և իւր համայն զարդերը, որ տիրական մարդոյն սպաս տանելուն համար պատրաստուած են :

Ամուսնական օրէնքը՝ յետ Աստուծոյ, մեր կեանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է, վասն զի արարչատեան միանգամ և եթ երկու նորաստեղծ ամուսինները ՚ի գոյ ածելով բաւ

համարեց, թող տուաւ այնուհետեւ որ ամուսնութիւն արարչադործէ և մարդիկ զիրեարստեղծեն :

Այլ թող չի պարծին մարդիկ թէ ունին այդ արարչական շնորհը, որ չկարեն մաղ մի սպիտակ կամ թուխ փոխել, և թող հաւատան թէ մանուկը իր մօր արդանդին մէջ պահող Նախանամութիւնն է . մանուկ կը ծնանի, կաճի կը զարգանայ. և մեք զարմանալով կը տեսնամք թէ մարդն զմարդ ծնաւ յաշխարհ : Ամենայն պատկառանք խոստովանիլ պէտք է թէ Նախանամող ձեռքն է մարդոյն կենաց բուն սընացիչ մատակարար, զի « ո՞վ կարէ յաւելուլ ՚ի հասակ իւր կանգուն մի » ասաց Քրիստոս :

Ամուսնական կենաց արդասիքն է մեր բընական աշխարհի շինութիւն և բարգաւաճումն, եթէ այսօր մեր լայնատարած երկրագունդը լի է մարդկային սերնդով, այդ եւս ամուսնական կենաց պողարերութեան անսպառելի հըրաչքն է, զի դրախտին մէկ ծառը բովանդակ աշխարհը ծառազարդեց : Եթէ մարդոյն նախատես արարին կինը իբրեւ կեանք և օգնականական չ'տար մեր նախահօրը, թէ որ չ'օրհնէր իւր բերանով թէ « Աճեցէք ու լցէք երկիրը », և այլն, ի՞նչ կը լինէր Ադամ իւր միայնու-

Թեան վիճակին մէջ, Նա կը մնար առանց կե-
նակից ամուսնութեան, անծին, անծնունդ և
անկեանք. զի Ադամայ և հանուր մարդկու-
թեան կեանքը կինն էր, որուն համար կ'ասէ
սուրբ Գիրք թէ «Նա է մայր ամենայն կեն-
դանեաց», այսինքն մարդկային սեռին :

Հին դրախտին մէջ Եւան որ կեանք էր, մահ
ծնաւ, մարդոյն կեանքը մահացոյց. նոր դրախ-
տին եկեղեցւոյ մէջ սուրբ Կուսին զաւակ Յի-
սուս՝ հին մահացեալ կեանքը վերանորոգեց. և
իւր Աւետարանին ազատ ու շնորհական օրինօք
սրբագործեց ամուսնական խորհուրդը, և վե-
րըստին պնդեց նորա կապը. զոր կը խղէր
միշտ հրէական խստասրտութիւն :

Սուրբն Պօղոս, որ Քրիստոսի հոգւով կը
խօսէր, պատուական կը կոչէ ամուսնութիւն, և
սուրբ կը համարի նոցա առաջաստը : Այնչափ
մեծ նշանակութիւն կուտայ, մինչև կը համե-
մատէ զայն եկեղեցւոյ բարձր խորհրդոյն հետը.
Յիսուս փեսային և իւր հարսին հետը :

Եւ մերթ ևս անձնուրաց Առաքեալը խաչա-
կրութեան ազատ պաշտօնին և Աւետարանի
քարոզութեան համար կամաւ ներքինի կը լինի,
որպէս զի եկեղեցւոյ հաւատացեալ ընտանեաց
համար միայն հոգայ, վասն զի Աւետարան և

Եկեղեցին խաչարարձ խմբին առաջ վերագոյն
 համարուած էր : Նոքա քաջ սորված էին Աւե-
 տարանի այս դասը , թէ « Որ ոչ առցէ զյսաչ իւր
 և եկեացէ զինի իմ , չէ ինձ արժանի » : Յիսուս
 խաչն ի յուս դէպ 'ի Գողգոթայ դնաց , զոհեց
 զինքն մարդկային սիրոյն համար , նոյն կը պա-
 հանջէր իւր ուխտագիր աշակերտներէն : Յայտ
 իսկ է թէ սոյն անձնուէր խաչակրաց առաջ որ-
 չափ կը խոնարհի ու կը լռէ ամուսնական իրա-
 ւունքը . այլ երբէք չի եղծանիր . զի Աստուա-
 ծային ձեռք և դրախտի օրհնութիւնը զայն
 անեղծ դրոշմեր են : Թող ոչ ոք այնպէս կար-
 ծէ թէ ուրեմն Յիսուս և Պօղոս ընդդիմախօս
 են սոյն Աստուածական վճռոյն , մին իւր սիրոյն
 և Աւետարանին համար ընտանիք և աշխարհ թո-
 ղուլ դաս կուտայ . և միւսն կը ցանկայ , որ ամէն
 մարդ իրեն պէս անամուսին կոյս լինի . և կամ
 թէ կորնթացի հաւատացելոց կարծեաց կը
 հաւանի Պօղոս , որք կը գրէին թէ « Բարևոք
 է մարդոյ 'ի կին մարդ չը մերձենալ » , յորում
 այնպէս կը թուի , թէ սոյն կարծիքը ուղղակի
 դիմախօսութիւն է դրախտի Աստուածային այն
 վճռոյն , թէ « Ոչ է բարևոք մարդոյդ միայն լի-
 նել » . և այլն : Պօղոս Ա. կորնթացւոց եօթներ-
 րորդ գլուխն ամբողջ ամուսնութեան և կու-

սութեան վիճակի վերայ կը խօսի, և խիստ ազատութեամբ կը վարդապետէ, պատասխան տալով կորնթացի ժողովրդոց դրոյն: Մարդկարող է ինքնին խորհրդածել, որ դրախտի վճռոյն և Պողոսի վարդապետութեան մէջ անշուշտ մեծ խորհուրդ և նպատակները կան: Վասն զի մարդոյն արարչութեան օր, Արարչին խորհուրդ և նպատակն էր, որ իւր պատրաստած ամայի երկիրը ամուսնական օրհնութեամբ լցնէր, և մարդն իւր անեցեալ սերնդով փառաւորէր զԱստուած: Իսկ Պողոսին նպատակն էր, որ եկեղեցւոյ որդիքները՝ նոքա որ կարող են իրեն պէս առաքինանալ, թողուն աշխարհ և ամէն բան, միայն Աստուած և եկեղեցին հողան, ազատ մնալով ընտանեկան զբաղմունքէն: Պողոսի վեհ հոգին ըղձակերտ կը լինէր, որ Աւետարանի պաշտօնեայք ազատ զինւորներ լինին, սկսեալ Երուսաղէմէն անարգել երթան մինչեւ աշխարհին ծագը Աւետարան և հաւատքը ծաւալեն: Թող այս, Պողոս երբեմն վերանալով տեսաւ երկնից դրախտն և Աստուծոյ սիրելեաց համար պատրաստուած փառքն, ապշեցաւ հիացաւ թէ անճառէ և անպատում. ուստի զարմանալով կը պատմէ և՛ ի նոյն կը յորդորէ որ վերաթեւին եկեղեցւոյ զա-

ւակները, ու կը-խօսի այսպէս: «Եթէ ժամանակս
կարճեալ է այսուհետեւ, զի որ ունիցին կա-
նայս, որպէս թէ շունիցին - . . . և որ վարեն
զայխարհս, որպէս թէ չը վայելիցեն, զի անց-
եալ է վայելչութիւն աշխարհիս»:

Երանելի Պօղոս, թող իւր տեսած դրախտէն
նայի այժմ, թէ աշխարհիս վայելչութիւնը և
կեանքը ո՛ւր հասած է, և թէ՛ երկրասէր մար-
դիկը կը հասկնան իւր խօսքը, և կամ կը հա-
ւատան թէ իւր տեսած դրախտը ֆարիզի դը-
րախտէն գերազանց և վայելուչ է:

Այո՛, Պօղոսին յափշտակեալ միտքը երազ
չէ, այլ ճշմարիտ իրողութիւն է՝ միայն ճշմա-
րիտ հաւատացելոց համար. զի երբ երկնից
արքայութիւնը յայանուեցաւ, և երբ Յիսուս
քարոզեց Աւետարանիորդւոց, թէ՛ «Դուք այս
աշխարհէն չէք», այնուհետեւ աշխարհիս դը-
րախտը կը քանդուի և երկնից դրախտը կը
բացուի մարդոյն առաջը:

Այլ թէ այսպէս և թէ այնպէս, ոչ Աստ-
ուած, ոչ Յիսուս, ոչ Պօղոս և ոչ եկեղեցին
բացարձակ վճիռ կուտան որ մարդիկը անժըխ-
տելի օրէնքով պէտք է ամուսնանան առանց
երբէք բացառութեան. և կամ կուսական
կեանք վարեն առանց երբէք ամուսնութեան:

եթէ այդպէս լինէր, ամէն մարդ Պօղոսին հե-
տեւէր, եկեղեցին ամուլ և անձնունդ մնալով
վաղ ուրեմն սպառած էին իւր որդիքները . և
կամ թէ Պօղոսի նման կամաւներ քինիք և Աւե-
տարանին անձնանուէր պաշտօնեայք չը լինէին,
ո՞վ կ'աւետարանէր անմախաղ՝ անցուպ այն բար-
բարոս հեթանոսաց մէջ . ո՞վ կը չինէր ֆրիս-
տոսի եկեղեցին, և ո՞վ կը թափէր արիւն հա-
ւատոյ վկայութեան համար : Մեք չենք ժըխ-
տեր թէ շատ ամուսնաւորք ևս առաքինացան
այդ ասպարէզին մէջ . բայց Աւետարանի խա-
չակրաց խմբին դերազանցութիւն միշտ անհա-
մեմատ է :

Ուրեմն յայտ է և պէտք է խոստովանիմք .
որ մարդոյն երկու վիճակի կեանքն եւս իւր
ազատ ընտրութեան ու կամաց թողուած է .
իւրաքանչիւր մարդ իւր առանձին շնորհն ունի,
ոմն այսպէս և ոմն այնպէս : Քանզի եկեղեց-
ւոյ դրախտի ծաղիկները մշակող հայրն՝ զանա-
զան տնկեր է, և իւրաքանչիւրն՝ իրենց վայե-
լուչ տեսքն և անուշ հոտն ունին : Թէ և Աւե-
տարանի ազատ մշակները իրաւունք ունենան
պարծենալ թէ իրենք առաւել վաստակեցին
և կը վաստակեն, այլ ոչ երբէք իրաւունք ու-
նին նոքա փարիսեցւոց աչքով նայել ամուս-

Նական կեանքին վերայ, և այնպէս դատել սր-
պէս թէ այդ կեանքը մեծ ու հաճոյական չէ
երկնից առաջ: Սուրբ Դիրք և եկեղեցւոյ պատ-
մութիւն ամուսնաւոր և շամուսնաւոր մարդոց
նկարագիրը միանգամայն կը հանէ մեր առաջը .
որուն վերայ եթէ մարդ ողջամիտ աչքով նայի .
կը տեսնայ որ երկու դասի մէջն եւս առաքի-
նեաց Հանդէսը սքանչելի և հաճոյ է երկնից ա-
ռաջը: Աբրահամ իւր ընտանեկան վրանին տակ,
աղօթաւորն Անտօն իւր խցին մէջ, Ենովք և
Եղիաս կենդանւոյն կարժանանան երկնից դը-
րախտին, մին ընտանեաց Հայր և Նահապետ,
և միւսն իբրեւ կոյս մարդարէ եւ այր Աստուծոյ:
Ծեծ է Յովհաննէս Մկրտիչ կանանցածին ծը-
նընդոց մէջ, այլ ո՛վ է երկնից արքայութեան այն
փոքրիկ հաւատացեալ արդարն, զոր Յիսուս
տեսնելով մեծ կը համարի, և մեր աչքէն կը
վրիպի իբրեւ աննշան և փոքրիկ. չգիտենք նա
կոյս է թէ ամուսնացեալ:

Ուստի կը պարտաւորիմք մեր կեղակարծ
դատաստանը ուղղել, թէ այդ երկու դասն
Աստուածահաճոյ առաքիներքը դարձեալ մի
և նոյն ամուսնական ծառի բարի պտուղներն
են, քանի որ աշխարհ կայ՝ միշտ պէտք է կա-
նանչազարդ մնայ այդ ծառը, զի Աստուծոյ

օրհնեալ ձեռաց տունկն է . նորա սահմանադիր
օրէնք և օրհնութիւն կը դարմանեն զայն , որ
չարունակ աճելով իւր ընտանեկան ճիւղերը
արձակելով միշտ բազմապատիկ պտղաբերէ ,
թէ աշխարհիս և թէ երկնից արքայութեան
համար :

Սակայն թէ հեթանոսութեան և թէ քրիս-
տոնէութեան այլ և այլ դարերու մէջ այնպիսի
չարածնունդ աղանդաւորները եկան աշխարհ ,
դրեցին ու քարոզեցին . յորոց ոմանք Շնական
փիլիսոփայութեամբ ուղեցին հանել մարդոց
անձնէն ամօթոյ ու պատկառանաց հանդերձը
ու թող տալ , որ նա չամաչէ աշխարհի հրա-
պարակի մէջ , արեւու առաջ անասնոց նման
խառնադնաց լինելով , ծաղր ու ծանակ առնե-
լով և քամահրելով սուրբ ամուսնութեան և
մարդոյն բանաւորութեան պատիւը :

Ոմանք եւս ծայրայեղ մոլեռանդութեամբ
վարդապետեցին թէ նոյն իսկ ամուսնական
կեանքը չարաչար անառակութիւն է , պէտք է
մարդիկ հրաժարին ամուսնութենէն , կիներէն
խորշին իբրև չար արարածներէ , Դիողինէսի
նման անինչ , անտուն , անընտանի կարասաբը-
նակ լինին այր մարդիկ խոտելով միանգամայն
մարդկային բանաւոր կեանքն և ընկերութիւ-

նը : Այսպիսի անլուր, այլանդակ և անօրինակ հայհոյութիւն մտաբերեցին այդ մուրամիտ մարդիկը, եղծելով սահմանադիր Արարչին ամուսնական օրէնքը, եղծելով նաեւ մարդոյն սիրտն, զգացումն, բնական սէրն և բանաւորութեան լոյսն :

Իսկ Գրիստոնէական կրօն և եկեղեցին նըզովիւք կը հերքէ այդպիսի ազանդաւորաց մուրութեան հողին ու վարդապետութիւնը : Եւ Յիսուս երկնից վարդապետը Մովսիսէն աւաւել կը նուիրագործէ սուրբ ամուսնութեան անեղծ իրաւունքն. և բաղմալինութիւն բոլորովին ջնջելով, եկեղեցւոյ նոր դրախտով հին դրախտ կը վերանորոգէ, մի Ադամին համար միայն՝ մի Եւայ բաւ համարելով :

Ուստի իբրեւ եկեղեցւոյ իշխանութեան ճշմարիտ և հարազատ հպատակ պարտաւոր են եկեղեցւոյ օրինաց թէ նախանձաւոր հայրերըն և հովիւները, և թէ Աստուծոյ տան ընտանեաց ճշմարիտ զաւակները, ամենայն պատկառանօք պահել սուրբ ամուսնութեան օրէնք և իրաւունքը. արթուն աչքով հսկել այդ օրինաց ցանկին վերայ, զոր օրինադիր Արարչին ձեռք լսնամով հիւսեր է. թող չժպրհի հետտող և ստահակ մարդը խրամատել անցնել Աստուծոյ

պարսպած ցանկէն, Նթէ միանգամ քակվի
այդ ցանկը, ընդարձակ ասպարէզ բացվի խըս-
տասպարանոց մարդիկներուն առաջ. այնուհե-
տեւ ոտնակոխ լինելով ամուսնական օրէնքը.
կը խախտի ընտանեկան կեանքին այն յաւիտե-
նական ու հաստատուն հիմն. որով և վեր 'ի
վայր կը շրջին մարդկային ընկերութեան ամ-
բողջ շէնքը. մարդիկ անասնակենցաղ լինելով
կեանք կը վատթարանայ աշխարհիս վերայ, և
վատթարանալով կը մեռնի դրախտի եօթն
հազար տարուան ընտանիքը իւր ամէն սերըն-
դով:



Ե.

ՏՈՒՆ

ԵԻ

Ը Ն Յ Ա Ն Կ Բ



ԻՆՉՊԷՍ որ երկու պսակաւոր լծակիցնե-
րէն ամուսնական միութիւն կը կազմուի, այս-
պէս նաև նոյն զուգակից միութենէն կը
ծնի և կաճի ամբողջ ընտանիքը, որոյ նա-
խաճնող անդամներն են հայր և մայր. իսկ ծըն-
եալ անդամներն են արու և էգ զաւակները
քոյր, եղբայր. որք երբ ամուսնանան՝ փեսա-
ներով հարսներով և թոռներով կը յաւելուն
ընտանեաց թիւը:

Ուստի ընտանեկան կեանքին և ասան շի-
նութեան բուն հիմնաքարեր կը համարուին

հայր և մայր : Ո՛րչափ սքանչելի զարմանալի են
ամուսնական պարտիզին մէջ այս երկու մա-
նանեխի փոքրիկ հատիկները , որ ըստ Աւե-
տարանի առակին՝ երթալով անելով մեծ ծառ-
կըլինին և իրենց բազմապատիկ ճիւղերը կը
համասփռեն բոլոր աշխարհը , Վասնզի , ամուս-
նական արմատէն ընտանիքը կը հաստատուի ,
ընտանիքէն ժողովուրդ , ժողովուրդէն այլ և
այլ ազգերը , ազգերէն իշխանական պետու-
թիւնները , և պետութիւններէն ընդհանուր
մարդկային համաշխարհական ընկերութիւն ,
Յորմէ դիւրաւ կիմաստասիրեմք թէ մեր ըն-
կերական աշխարհին բովանդակ շէնքը ամուս-
նական և ընտանեկան պատուանդանին վերայ
հաստատուած է . ժողովրդոց ոտքը և պետու-
թեանց գահերը նորա վերայ դրուած են .
եթէ քանդուի այս պատուանդանը՝ ժողովուրդ-
և գահերը իմիասին կը տապալին . տյնուհե-
տեւ ոչ ևս կայ , ոչ աշխարհ , ոչ ադամորդի
ոչ կեանք . և երկիր կը դառնայ նոյն առա-
ջին վիճակը , « Երկիր աներեւոյթ և անպատ-
րաստ » :

Ոչ ոք կարէ ժխտել թէ այս այսպէս չէ .
աշխարհիս հին ազգաց պատմութիւն , արդի
ընկերական վիճակը և մեր ազգին կեանքը՝ այս

ամէն կապացուցանեն թէ ոչ միայն մարդկա-
յին սեռի աճումն, այլեւ ժողովրդոց, ազգաց,
հայրենեաց և թագաւորութեանց բազմա-
ընտանեկան կեանքէն կախումն ունի. թէեւ
մեր ընկերական երջանկութեան և թշուառու-
թեան կան արտաքին ուրիշ այլ և այլ պատ-
ճառները, բայց իմաստուն խելամտութեամբ
նկատելով աշխարհիս իրողութեանց սկիզբն,
միջոց և վախճանը. կը տեսնամք որ աշխար-
հիս շարեաց ու բարեաց սկզբնածնունդ մայր
ընտանիքն է. Հապա ընտանեկան կենաց թէ
չարութեան և թէ բարութեան պատճառն ո՛վ
է. դորա պատճառն եւս շատ մօտ և յայտնի
է. այսինքն ծնողք՝ հայր ու մայր, որոց հը-
պատակութեան տակ կապրի ամբողջ ընտա-
նեկան գերդաստանը:

Տուն և ընտանիք մի փոքրիկ թագաւո-
րութեան երկիր ու սահման է. որոյ նահա-
պետական աթոռին վերայ կը նստին ծնողք.
հայրն իբրեւ թագաւոր, և մայրն իբրեւ թա-
գուհի. և կը կառավարեն հպատակ ընտանիքը.
այն ընտանեկան պալատին ու թագաւորու-
թեան մէջ, ոչ ոստիկան կայ, ոչ սուր, ոչ
բռնութիւն, ոչ դաւազան. այլ ամենուն տեղ
հայրական սէր և մայրական գորովն է. դաս

տիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է։ Այս օրինակը այնչափ բարի ու տպաւորիչ է, որ դիտես թէ լուսարուեստին սկէս թափանցիկ կերպով ծնողաց պատկերը նոյնատիպ կը հանէ իւր զաւակաց վերայ . և զաւակները այդ սկզբնական տիպարն առնելով կը մոնեն ժողովուրդին և ընկերութեան մէջ . Այնուհետեւ տարածել կըսկսի օրինակէ առ օրինակ . և այսպէս ընտանեկան կենաց բարի և շար օրինակներէն, ժողովուրդին կեանքը կը բարւոքի կամ կը զեղծանի, կը ջինուի կամ դայթակղութեամբ կը փյլի, կենդանի կը մնայ աշխարհիս վերայ կամ կենդանւոյն կը մեռնի, և իւր յիշատակ կը բարձուի աշխարհէս :

Ժողովուրդը և ազգերը միայն հացով չեն ապրիր . թագաւորութեամբ և ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարոյական կեանքով . և այդ կենսական կեանք տուողը ընտանիքն է, Ուշագիւր եղիր, և եսնկարագրեմք քեզ :

Ժողովուրդը եթէ կը յառաջագիւմէ՝ իւր առաջին քայլը ընտանեաց սրահէն կառնու . եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրագէնէ . եթէ կը միանայ, իւր ոգին և կապըն ընտանիքն է . եթէ կը զօրանայ, իւր ուժ

և բազումն ընտանիքն է, եթէ կը հարստանայ, իւր գանձարան և գանձապետն ընտանիքն է. եթէ իւր տուն և սեղան բարեկից և առատ է, արդիւնաբեր անդաստանը ընտանիքն է. եթէ գրախտի գետերը կը վազեն իւր հրապարակը, ազբիւրը գրախտի ընտանիքն է. եթէ իւր կարասները լի են գինւով՝ կը խմէ կուրախանայ, խաղողաբեր այգին ընտանիքն է. եթէ բարեճնունդ զաւակներով օր ըստ օրէ բիւրապատիկ կածի, իւր նախածնող խնամատար ընտանիքն է. եթէ աշխարհիս ծանրակիր լուծերէն ազատիլ կուզէ, թող գիտնայ ու հաւատայ թէ իւր փրկիչ ձեռքն ընտանիքն է. եթէ կը բարձրանայ ու կը փառաւորի՝ իւր փառաց տաճարն ընտանիքն է. եթէ հայրենիքէն վարեալ հեռացեալ է և կրկին իւր հայրենիքը երթալ կուզէ, նորա ուղեցոյց առաջնորդ ընտանիքն է. եթէ իւր հին կորուստները գտնել կուզէ, թող չորոնէ զայն օտարին հրապարակը, զի իւր կորուստն ընտանիքին ծոց պահուած է. եթէ իւր զաւակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կուզէ, իւր բարեկիրթութեան առաջին համալսարան ընտանիքն է. եթէ այս աշխարհիս վերայ երջանիկ ապրիլ կուզէ, թող հաւատայ, որ եր-

Չանկութեան կեանք բղխող աղբիւր ընտանիքն է . եթէ երկրէս յետոյ երկինքն եւս ժառանգել կուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն , հաւատ , և եկեղեցին , այո՛ այդ սուրբ աւանդները անեղծ անկորուստ պահելու խորանն ընտանիքն է . զի այդ դանձը և Աւետարանի անգիւտ մարդարիւրը աշխարհիս շահավաճառութեան հրապարակին մէջ , կառավարութեանց դահլիճներու մէջ , դիտութեանց ճեմարանաց մէջ անկորուստ չեն պահուիր , այլ միայն դորա հաւատարիմ աւանդապահն ընտանիքն է :

Տեսա՛ր մտադիր ընթերցող , այս նկարագրին մէջ քեզ յանգիման բերի . թէ ու իցէ ժողովուրդը իւր բարոյական կենաց տիպարը ուղղակի ընտանիքէն կառնու , և պարծանօք ցոյց կուտայ աշխարհի թէ ինքն բարեկիրթ ընտանեաց զաւակ և ժողովուրդ է . X

Տեսնանք նաեւ սորա հակադիր պատկերը և աւագ աչքով նկատենք . որ չարաբաստ ապերջանիկ ժողովուրդը իւր կեանքի շեղումները դարձեալ նոյն ընտանեկան պատկերէն կընդօրինակէ և ի տես կը հանէ աշխարհին հրապարակը՝ և ահաւասիկ ցուցնեմ քեզ :

Ժողովուրդ եթէ կը շեղանի կառավարու-

Թեամբ՝ իւր զեղծմանց սկզբնաւորութիւնը
ընտանիքէն է . եթէ բարոյական կենդանի
կեանք չունի՝ մեռելութիւն ընտանիքէն է .
եթէ դէպ ի կորուստ կը դիմէ, իւր կորստեան
ճամբայ բացող ընտանիքն է . եթէ ծունկեր
կըթոտ են . իւր քայլերը յառաջ չեն երթար ,
լքումն ու կաղութիւն ընտանիքէն է . եթէ
Պրոպատիկէ աւազանին քով կեցած դեռ կը
դանդաղի երբ ուրիշ հիւանդ ազգերը ողջա-
ցան ու գնացին . ո՛հ , ես դիտեմ զայն անդա-
մալուծող ձեռքն ընտանիքն է . եթէ երկու
ձեռքով կը հարստահարուի՝ մէկ ձեռքն ընտա-
նիքին է . եթէ արտաքին թշնամիներէն պա-
շարուելով ամիշած է , իւր ներքին մերձաւոր
ու բարեկամ թշնամի իւր աման ընտանիքն է .
եթէ աշխարհիս կեանքի ճանապարհին մէջ
ուղղութիւն չունի , յոռութիւն ընտանիքէն է .
եթէ Եւրոպիոյ կախարդիչ նորասիրութիւնք
զինքը պիտի կողոպտեն անխնայ , թող զգաստ
լինի ու տեսնայ որ մեծ կողոպտիչ ձեռք իւր
ընտանիքն է . եթէ իւր զաւակներ օր ըստ օրէ
հացի կարօտ թշուառ կը լինին , այդ քաջ
յայտնի է որ ընտանեկան մշակները անաշխատ
հեղգ և անհոգացող են . եթէ առանց տնտե-
սութեան առանց նախատեսութեան կը վատ

նէ իւր վաստակ և գանձը , ո՞վ չի գիտեր թէ շապուղթեան տնտեսապետն ընտանիքն է . եթէ իւր զաւակները առոյգ աղնուածնունդ չեն , ուրեմն ընտանեկան սերունդն հիւժելով ստրկացած է . եթէ իւր օրիորդք և երիտասարդք վարակած են մաշողական ախտով , ո՞հ , դոցա մահ և գերեզման փորող ընտանիքն է . եթէ կորաքամակ լինելով ազատ պարանոցն ստրկացած է , սորա պատճառն եւս շատ յայտնի է , որ Մակարէ և Շամունէ մեռեր են՝ ի վերջոյ եթէ ժողովուրդ , կրօն , հաւատ , եկեղեցին՝ կը թողու , Աստուածապաշտութեան պարտիքները օրաէն կը հանէ և կը դառնայ դէպ ի ջրհեղեղին դարը , ամբարիշտ կեանք կը վարէ , գիտցիր այդ ապականութիւնը կայենի դըստերաց հետեւող ընտանիքէն է :

Տակաւին շատ ու բազում է զեղծեալ ժողովուրդի մի նկարագիրը , որ իւր սկզբնատիպ դաղափար իւր բնակած տան ընտանիքէն կառնու . մեք միայն այսքան բաւ համարեցինք , թող մնացորդ և ժամանակի նոր բերած զերծմունքները հայրեր ու մայրեր ինքնին իմաստասիրեն , և ուշաբերելով ճանչնան թէ առանց բարի ընտանիք կազմելու , առանց հայրական ու մայրական գաստիարակութեան

անհնարին է բարեկեցիկ ազգ, ժողովուրդ
և հայրենիք կազմել, վասնզի ինչ որ շի-
նենք, ինչ որ կազմենք, պէտք է գիտնաք,
որ այդ կազմող առաջին տարերք ընտանի-
քն է, իսկ այդ ազնիւ ու պատուական
տարերքը ո՛վ կըստեղծէ, ով կը կազմէ, և
ո՛վ կը պատրաստէ զայն ժողովուրդին և ազ-
գին համար. ես խօսիմ քեզ, այդ պատրաս-
տող ձեռք՝ ուսումն և դաստիարակութիւնն է,
որ պէտք է տարածի նախ այն ամեն յարկե-
րուն տակ, ուր կը բնակի ընտանիքը, ճըշ-
մարիտ է, որ ժողովրդական դպրոցները լոյս
և դիտութիւն կը սփռեն. սակայն բարի
դաստիարակութեան տուրքը՝ միայն ծնողաց
սեփհական է. զի առտնին դպրոցին, ծայրա-
դոյն և բնական վարժապետ նոքա են. ու-
րիշ ոչ ոք այդ վեհ պաշտօն չունի. ընտա-
նեկան դաստիարակութեան մասին դարձեալ
երկարօրէն պիտի խօսինք իւր տեղը. այժմ
սկսինք խորհրդածել ընտանեկան միութեան
և բաժանման, զարգացման և նուազման ներ-
քին և արտաքին պատճառներու վերայ:

Ընտանեկան միութիւնը բուն նահապետա-
կան կեանքին օրինակն է, որով ընտանեկան
ճիւղերը մի արմատէն շառաւիղելով՝ նոյն հայ-

ըննի տան արմատէն անբաժան կը մնան սիրել-
լով միշտ մի ընտանիք կազմել և մի տան յար-
կի տակ բնակիլ . զոր կը դրուատէ Դաւիթը
թէ « Ձի՛ բարի կամ զի՛ վայելուչ , զի բնակին
եղբարք ի միասին » :

Այս միութեան կեանքը առաւել դիւզա-
ցի ժողովրդոց համար փափագելի և օգտա-
կար համարուած է . վասն զի տան մի երկ-
րագործ աշխատաւորները որչափ շատ լինին ,
այնչափ աւելի կ'ընդարձակեն իրենց վարու-
ցան . և արդեանց մեծ շահեկանութիւն կ'ըս-
տանան :

Շինական ընտանիքը շատ ցաւ կը զգան . և
տան աւերումն և քանդումն կը դուշակեն
եթէ ընտանեաց բաժանումն պատահի . և
բազմ մեծ կը համարին . յորժամ տան ծերունի
նահապիտ ողջ է , ու կը կառավարէ որդիք-
ները և թոռները , նմանապէս մայր տան-
տիկին իւր հարսները և աղջիկները . որչափ
փառք ու պարծանք կը համարին , երբ նո-
րածին մանուկներու օրօրոցներով կը լեցուի
և կը ցնծայ տունը : Դեռ մանուկ էի , աստի
իբր 45 տարի յառաջ կը պատմէր հայրս . որ
իւր ուղեւորութեան մէջ Մշոյ Հացեաց դա-
ւառը մի դիւզական մեծ ընտանիքի հիւր եղած

է և զարմացեր է երբ քսանի չափ նորածին տղոց օրօրոցները համրած է . թերեւս ամբողջ ընտանեաց թիւը Յակովբ նահապետի ընտանիքէն աւելի եղած են :

Սակայն նկատել պէտք է , որ ամէն բաժանումն ընտանեկան բարգաւաճման արգելք չէ . անշուշտ կարեւոր է , որ ընտանեաց ճիւղերը բաժանուելով նոր նոր ընտանիքներ կազմեն . ինչպէս Եւրոպիոյ քաղաքակիրթ աշխարհ աւելի բարուք դատած է . որ չափահաս զաւակները բաժանուելով ուրիշ ընտանիքները կազմեն : Այլ այս դրութիւնը միայն յարմար և օգտակար է այն ազգաց ու քաղաքացի ժողովրդոց , ուր ազատութիւն դատտիրակութեամբ հանդերձ յառաջ գնացած է . և ուր բաժանեալ զաւակները հայրենի տնէն միայն ըստացուածոց ժառանգութեան բաժին առնելով՝ դուրս չեն ելներ , այլ և միանգամայն դիտութիւն , արուեստ և դատտիրակութիւն , որոց ժառանգութիւնը՝ առաւել անկորուստ և մեծայարգի է :

Իսկ մեր հայրենի աշխարհին և նոյն իսկ դաղթական Հայոց համար ընտանեկան անդէպ բաժանումն միշտ մնասակար է . մանաւանդ երկրագործ ժողովրդոց համար , որոց

ուժ՝ արդիւնքը՝ ընտանեկան միութեան ու միաբան աշխատութեան մէջն է . եթէ բաժանուին՝ միացեալ ղօրութիւնը կը ջլատի և իսպառ ուժաթափ կը լինին : Ընտանեկան նահապետները միութեան հրաշքը՝ նոյսյ դարէն ի վեր փորձառութեամբ ճանչցած են . Ուստի այդ առաքինի տան ծերունիք իրենց մահուան օրը վերջին կտակը միշտ այս կաւանդեն ողջ ընտանեաց . որ նօքա սիրով ապրին , միաբան կենան , և չբաժնուին , շէն տուն չաւերեն : Թերեւս փորձառութեան հետ Աւետարանէն եւս սորված են այդ միութեան բարձրագոյն դաս , թէ « Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ կործանի , և տուն բաժանեալ յանձն՝ աւերի » :

Թողունք արտաքին պատճառները . որ պատահար են . ինչ է արդեօք ներքին պատճառը , որ կը խռովէ տունը և ընտանիքը կը բաժանէ . այդ ինքնին յայտնի է՝ ատելութիւն , նախանձ , ու վայելմանց անհաւասարութիւն . խստութիւն , աչառութիւն , անհաւատարմութիւն , անվստահութիւն , ի վերջոյ մեծերու անխոհեմ ու յոռի ընթացք և փոքրերու ստահակութիւն և այլն : Այս և սոյն-պիտի առիթներով կը խռովի տունը , և կը

բաժնուին զաւակներ ծնողքէն , եղբայր եղբորէն և մերթ եւս երկու ամուսինք իրարմէ :

Արդեօք ի՞նչ է հնար և դարման , որ ապրին և վարին միշտ սիրակապ միութեան և խաղաղութեան մէջ . նոր աշխարհ կուսուցանէ որ դորա միակ դարմանն է՝ մարդոց կատարեալ կրթութիւն տալ . չէ թէ միակողմանի կրթութիւնը , այսինքն մարդոյն կէսը կըրթել , կէս մասին ըյս տալ , և նորա միւս կէսն մասն թողուլ կոյր՝ , խեղճ , ստրուկ և ապուշ : Իմացնել կուզեմ մարդոց երկու սեռին առանց խտրութեան կրթութիւն տալ իւրաքանչիւրին իւր կոչման պատշաճ . որպէս զի ընտանեաց մէն մի անդամը , իւր իրաւունք , իւր պարտիքը ճանչնայ , իրարու խօսքը հասկնան , միաբան խորհին , միաբան ընթանան առանց կաղալոյ . այր կամ կին , ծնողք կամ զաւակները , հարսն կամ սկեսուրն :

Այսպէս երբ նոր աշխարհի մէջ հաւասար կրթութիւն պէտք է ընտանեկան միութիւնը պահելու համար . մարդ կը զարմանայ թէ . հապա ի՞նչ բան էր և ի՞նչ զօրութիւն , որ հին աշխարհի նահապետական կեանքի մէջ անխղելի կը պահէր ընտանեկան միութեան կապը :

Զարմանալ պէտք չէ , այդ միութիւնը պա-

հելու համար, բաւական էր տան կառավարնա-
հապետին հայրական պատկառանք. մեծ տան-
տիկնոջ ժրագործ տնտեսութիւնն, զաւակաց
ակնածութիւն և մեծարանք առ ծնողս, հարս-
ներաց հլու հնազանդութիւն, և քան զամէն
աւելի՛ կրօնի երկիւղածութիւն և աստուած-
պաշտութեան հաւատքը :

Այս կամայական և ազատ առաքինութիւնք
նահապետական ընտանեաց համար իբրեւ բը-
նական օրէնք և նախնական վարուց բարի
ժառանգութիւն համարուած էր. որ աւան-
դաբար յորդուոց յորդիս կը ձգէր ու միշտ կը
ջանային անեղծ և անարատ պահել. որոց
մնացորդ նշխարները դեռ հայկական աշխար-
հին մէջ կերեւին. մանաւանդ հողագործ ժո-
ղովրդոց մէջ :

Սակայն աշխարհ և ժամանակը ամեն բա-
նը կը յեղաշրջեն. արեւմտեան նոր քաղաքա-
կրթութեան կեանքը դէպ արեւելք կուգայ հե-
ղեղի պէս. նոստանդնու Պօլսոյ և ծովեզերեաց
քաղաքաց ընտանեկան հին կեանքը ողողեց.
Ո՛վ կարող է թումբ քաշել այս հեղեղին դէմը.
անշուշտ այս հեղեղը պիտի երթայ հասնի
մինչեւ Մասեաց ոտն՝ Նոյին դերդաստանը և
ողողելով պիտի քշէ հետ ամսի առ հասարակ

բոլոր ազգերու հին կեանքը, Երանի՛ թէ մեր կեանքի միայն յուր մասն տանէր, ոչ, պարզ և ուղիղն եւս իմիասին կը տանի. շատ քաջ է այն ազգ եւ ընտանիքը, որ յուրն կը թողու և իւր նախնական կեանքին լաւ և ուղիղ մասն պինդ կըմբռնէ: Նկատել արժան է. որ արեւմտեան քաղաքակրթութեան այս հեղեղին շուրջ շատ խառնուրդ ու պրդտոր է. չարն ու բարին, լոյսն ու խաւար, ազատութիւն և անկրօն դիտութիւնը՝ իւր հետ զուգընթաց է: Ուստի Հայոց ընտանիքը պէտք է այժմէն իրենց աչքը բանան դիտութեան լուսով և բարի դաստիարակութեամբ պատրաստուին. միայն այսու կարելի է քաղաքակրթութեան խառնուրդէն բարի մասն ընտրել: Իսկ եթէ լոյս և դաստիարակութիւն թողու, ապուշ ու տգէտ լինելով բարի մասըն ընտրել չգիտնայ, իւր բերան բանայ հեղեղին դէմ, ամէ՛ն ամէ՛ն ասեմ՝ քեզ, մըտադիր ընթերցող, Հայոց ընտանեկան կեանքը պիտի խեղդուի, աւա՛ղ կարդամ այն ընտանեաց, որ վախճանակ ի մի կողմ վախչելու, հեղեղի հոսանքին առաջ կեցած փորձ կը փորձեն. կը տեսնան իսկ իրենց աչքով որ շատ ընտանիք խեղդուելով իրենց դիակա

ները դեռ այսօր վստիորի ծովուն երեսը կը տատանին. որով ջնջեցաւ իսպառ իրենց ընտանեկան սեռն ու ճեռն :

Այնպէս չրկարծենք թէ այդ արեւմտեան հեղեղը՝ միայն արեւելեան ընտանիքները կը խեղդէ իւր զեղխութեան հոսանաց մէջը, «չ, այդպէս չխորհինք՝ հաւաստի լինելով, որ նոյնիսկ Եւրոպիոյ քաղաքակիրթ աշխարհին մէջ շատ ընտանիքները կը խեղդուին ու կը ջնջուին. միայն նոքա կապրին ապահով, որոց փրկութեան տախտակը միայն ընտանեկան կրթութիւնն է :

Հետեւինք ու հաւատանք ուրեմն թէ այդ է միայն նա և Հայոց ընտանեաց փրկութեան ապաւէն, թող ամէն ընտանիքը գրկէ այդ կրթութեան փայտը, որ Ֆրիստոսի կենաց փայտին պէս պիտի պատսպարէ զինքն :



ԱՄՈՒՆՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԳԵԱՆՔԻՆ

ԽԱՓԱՆԱՐԱՐ ԶԵՂԾՄՈՒՆՔՆԵՐ



ՄԱՐԴԻԿ , որ ամուսնութեան պտուղ և արդասիքն են իբնութենէ , և բնապէս կը սիրեն ամուսնութիւնը . 'ի բաց թողլով այն բացառութիւնք , որով մարդն իւր ազատ կամաց իրաւամբ կամ ուխտիւ կամ ուրիշ արդարացի առիթներով խոյս կուտայ ամուսնութենէն :

Ուստի երբ աշխարհիս մարդոց ամենամեծ մասն կը սիրեն և կը պատուեն ամուս-

նական կեանքը և կը խայտան իրենց նախահօր պէս երբ առընթեր տեսնան իրենց նախատիպ պատկերը . զոր Աստուած մենաւոր մարդոյն իբրեւ ընկեր, օգնական և զուգակից տուաւ : Առ այս վկայ է աշխարհիս ընդհանուր ամուսնական և ընտանեկան կեաքն . թէ մարդիկ ընդհանրապէս կը ցանկան ամուսնանալ, որդիս ծնանել, ընտանիքը կազմել, միշտ կենդանի պահելով իրենց տան փառքն և տոհմական յիշատակն :

Իսկ արդ եթէ այս այսպէս է ինչպէս որ է ճշմարիտ . այլ եւս ինչ կան մարդոյն առաջ խափանարար տռիթները :

Ընդարձակ մտքով եթէ քննենք շատ բազմապատիկ են, որք առ հասարակ մարդոյն հնարած զեղծմունքներն են թէ ներքին և թէ արտաքին . որոց գլխաւորները թուեմքեզ, դու ինքնին խելամուտ եղիր, և ահաւասիկ : Սանձակոտոր ազատութիւն, անառակ կեանք, զեղխութեան պերճանք, չըքաւորութիւն, ստրկութիւն, ծառայական վիճակ, պտնդխտութիւն, քաղաքային օրէնք և երկրին հանգամանքները և այլն . որոց վերայ ես միայն համառօտ պիտի խօսիմ, մընացեալը կը թողում . որ դու ինքնին ժողո-

վուրդի կեանքի մէջ տեսնաս և խմաստա-
սիրեո :

Մեր ժամանակը վկայ է թէ ինչպէս ոմանք
սանձակոտոր ազատութեան մէջ ցանկասիրու-
թեան ընդարձակ ասպարէզ գտնելով, այլ
եւս հարկ չեն տեսնար համեստ ամուսնու-
թեան սուրբ կապով միայն մի ամուսնոյ հետ
կապուիլ : այլ առանց ուխտի և դաշին ,
առանց եկեղեցւոյ օրհնութեան , սուրբ և
ողջախոհ առաքաստէն դուրս ամէնուրեք
կը գտնեն իրենց ցանկութեան կրից յադուրդ
ու ճարակը՝ և այնուհետեւ մարդկային ամօթն
արհամարհելով արձակ ու համարձակ վարիլ
կուզեն աշխարհիս օրինակարդ ընկերութեան
մէջ . որպէս թէ շը լինէին մարդոց համար
պարտք և իրաւունք , շը լինէին ամօթ և
պատուոյ զգացումն . մարդիկ մոլի սիրով ըն-
կերանային առանց տիրապէս հայր ու մայր
կոչուելու , և այն դժբաղդ անծին կամժը-
նած մանկիկները դատապարտուէին իրենց
ապօրէն ու մեղապարտ ծնողաց պատճառաւ
կամ արեւ չտեսնալով չքանալ , և կամ իբրեւ
անհայր անմայր անծանօթ որբերը՝ աշխար-
հիս հրապարակին վերայ անտերունչ մնալով
եկեղեցին միայն դժար ու հոգար զիրենք :

Վասնզի սանձակոտոր ազատութեան կեանք
 ընտանեկան չէ. ոչ համեստութեան մէջ պա-
 տըսպարուած է և ոչ եւս ամուսնութեան վը-
 կայագիր ունի. կամ այն սպիտակ անմեղու-
 թեան ծածկոյթը, որ կը ծածկէ մարդոյն
 առականք: Նա մերկ կը շրջի հրապարակի
 մէջ. թէ գիտուն և միանգամայն իմաստակ
 է. Շնական փիլիսոփայութեամբ կը համոզէ իւր
 միտքը, և թոյլ կուտայ որ իւր անժուժկալ
 կերքը ազատօրէն վարի. եթէ նուաստ ու
 սինլիքոր է, նա իւր ռամկութեամբ ոչինչ
 չզգար իւր պատուոյ և անուան համար. թէ
 հարուստ է, ազնուական է, կը կարծէ թէ մա-
 մոնային զօրութիւնը կտմ անուան փառքն ու
 վարկը կարող են ծածկել իւր առականքն.
 և մերթ եւս ամբարհաւան մտօք կը ծաղրէ
 մարդկային ակնածութիւնը և մեղադրանքն.
 մանաւանդ նոքա, որք կը համարին զիրենք
 Եւրոպիոյ քաղաքակրթութեան հետեւող զա-
 ւակները, և իրենց մեծ ուսմունք, կեանքն ու
 զբաղանքն են սիրավառ վիպասանութիւնք
 և այլն: Այսպէս ահա սանձակոտոր ազատու-
 թիւն և անառակութիւնը՝ խափանարար կը
 լինին ամուսնութեան:

Զեղխութեան մոլութիւնը թէպէտ անառակ

և անհամեստ կեանքին ճարակելի նիւթն է .
ասկայն այս նիւթն սոսկ արտաքին անառա-
կութեան համար չի ճարակիր . այլ նոյն իսկ
ընտանեկան կեանքին մէջ աւելի եւս կը ճա-
րակի կեանքի ու անտեսական պիտոյից համար .
որ այնչափ բազմապատիկ շատցած են . որոց
մէջ գրեթէ խեղդուած է ամուսնութեան պէտք
ու կարիք . Մի թէ չե՞ս հաւատար ընթերցող ,
թէ Հայ ընտանիքներէն շատերը պերճ ու փա-
ռասէր ղեղխութեան մէջ պարանոցաթաղ եղած
են : Եւ ի՞նչ է նոցա սրտի ու սիրոյ հաճոյք .
գիտե՞ս , շքեղ տուն , թանկագին կահ կարա-
սիք , կառք ու սիգաճեմ ձիերը , անբաւ զարդ-
անհուն նորասիրութեան ձեւերը , սընա-
պարծ ցուցամոլութիւն , դբօսասիրութիւն ,
ունայնամիտ տենչանք և այլն : Այս ամէն
պերճանք՝ մի մեծ բանակ կազմելով կը զինու-
թին պարզ կեանքին դէմ և կը յաղթահարեն
ամուսնական սէրը . ինչպէս մարախին բանա-
կը ցորենի արտերը կսպառէ . նոյնպէս այդ
պերճանքն է , որ կուտէ կսպառէ ամուսնու-
թեան բաժին սեղանին հացն . ոչ հարսին
օժիտ կը թողու և ոչ փեսային վաստակ : Եւ
ի՞նչ պէտք է երբ այս կարգի մարդիկ ղեղխ
ու մեղկ կեանքը աւելի նախադաս ու հաճո-

յական կը համարին քան ամուսնութիւն և ընտանիք :

Դու չե՞ս տեսնար , ընթերցող , այն ընտանիքը , որ առանց խնայելոյ ամենայն շրուայութեամբ կը հողան զերդիութեան անպէտ պէտքերը և կը մոռնան ամուսնութեան կենաց պէտքն ու պարտիքը . զարդարասիրութեան բուռն տենչ՝ ամուսնասիրութիւնը մեռուցէր է : Չգիտեմ զ՞սլ առաւել մեղադրեմք . անփեսայ օրիորդն թէ անամուսին երիտասարդն . որոց մինն կը պատտխանէ թէ ես հաճոյանալու համար զարդ կը սիրեմ . կամ թէ ես կին եմ , 'ի բնութենէ զարդն իմ վայելութիւնս է . իսկ միւսն եւս իբրեւ իրաւացի փաստ յառաջ կը բերէ թէ նոյն իսկ ես էլ այդ զարդին համար կը խորշիմ ամուսնութենէն , նախատեսելով թէ ամուսնութենէն յետոյ ինչպէ՞ս հողամ ընտանիքը և ինչպէ՞ս կարենամ փայտ հասցունել զերդիութեան կրակին . որ շատ ընտանեաց տուն վառեց մի խիր դարձուց . դեռ աւերակները կը միան ծուխ կելլէ . ես կը տեսնամ եւ այդ փորձերէն իրաւունք չունիմ խելաբերիլ և զգուշանալ ամուսնական վիճակէն և այլն :

Թող շարդարանան , երկուքն եւս հաւա-

սար մեղադրանաց արժանի են . որոց դատաստան ու վճիռը գիտեն որոշել մեր ընտանեկան կեանքը դատող իմաստուն դատաւորները :

Շատ զարմանալի է որ երբ զեղև մարդիկ ամուսնութենէն կը խորշին , ընդհակառակն չքաւոր ժողովուրդ , մանաւանդ գիւղացի ընտանիքը ամուսնութիւն կը սիրեն . ոչ նախատեսել կուզեն և ոչ ապագայի հոգ ու հաշիւը կընեն . իբրեւ հասարակ առած կը խօսին իրենց մէջ , « Ամուսնանանք , հացն Աստուած կուտայ » . և հարսանեաց սեղանին վերայ դարձեալ այս օրհնութիւն կուտան . « Աստուած շատ հաց տայ մեր փեսային ու հարսին » : Գիւղացի հողագործ ժողովուրդը անխորհուրդ չէ , իւր անուս վիճակի մէջ նախատեսութիւն ունի : Նա ամուսնութիւն կը սիրէ , որպէս զի ընտանեաց մէջ աշխատաւոր մշակները շատնան . նորա համար շատ պէտք են մանչեր ու աղջիկներ : Նա միշտ այնպէս կը դատի , որ ընտանեկան հարստութեան աղբիւրը՝ ժրջան զաւակներն են . սորա համար է , որ հարկաւոր ու կանոնաւոր ամուսնութիւնը աւելի հասարակ ու շինական ժողովրդոց մէջ ընդհանրացած է քան թէ քաղաքակիրթ կարծուած ժողովրդոց ու աղնուականաց մէջ :

Սակայն աշխարհիս տնտեսագիտաց կարծիքին հետեւելով՝ պէտք է համոզուիմք թէ չքաւորութիւն միշտ խափանարար է ամուսնութեան . վասն զի չքաւոր ընտանիքները թէ և սիրեն ու բաղձան ամուսնութեան . այլ կարող չեն բարգաւաճել կամ ամուսնութիւնը արգապաւորել . ֆորձառապէս կը տեսնամք ահա մեր հայրենեաց ժողովուրդի կեանքին վերայ . որոց չքաւորութիւն ու տառապանքը միայնգամայն խափտնարար եղերեն ամուսնութեան և բարգաւաճման : Ահ , թէ որ հաց չըլինի՝ մայրերը անօթի կըմնան . և երբ մայրերը անօթի մնան , նորածին մանուկներու կաթ կը ցամքի : Երանի՛ թէ այս վիճէր միայն չքաւորութեան արկածն , թող աղքատութիւն տառապէր զիրենք , միայն թէ երկու ամուսինք իրարու հետ անբաժան ապրէին : Ո՛չ , չքաւորութիւն չի խնայեր , նորապսակ ամուսիններն անգամ քաղցր հայրենիքէն , սիրոյ գիրկերէն հանելով ՚ի պանդըխտութիւն կը վարէ . այսօր քսան հազարէն աւելի մեր հայրենեաց պանդուխտ զաւակները կը տառապին մայրաքաղաքիս մէջ , հինգ , տասն տասն և հինգ և մինչեւ քսան երեսուն տարի օտարութեան մէջ տառապելով՝ որոց շա-

տերն եւս հայրենի հողէն և իրենց նախնեաց
գերեզմանէն զրկուելով՝ օտար երկրին ու
հողին տակ կը թաղուին. . ո՛վ կը տնկէ նո-
ցա վերայ մի խաչքար և կը գրէ նոցա յի-
քերու իր : Եթէ ստուգիւ վիճակագրեմք Հա-
յոց ժողովուրդին այս պանդխտութեան չար-
չարանաց վիճակը , շատ ողբալի է . վասնզի
տիրապետող չքաւորութենէն կըսպառին ու
կը չքանան ընտանիքը ու հետեւապէս կը նը-
ւազի Հայոց հին ու բազմաճոխ ազգը :

Չքաւորութեան հետ մեծապէս խափա-
նարար են ամուսնութեան ու բարգաւաւաճման
նաեւ երկրին հանգամանքները թէ բնական
և թէ պատահական . այսինքն հող , ջուր ,
օդ , ժողովուրդին բարոյական և նիւթական
կեանք , տիրող կառավարութեան օրէնքները
և այլն : Սոսկ հաւատալով չենք խօսիր , ահա-
ւասիկ կը տեսնամք , որ գիտութիւն և քաղա-
քավարութիւնը մարդոց ընտանեկան կեանքը
կը բարւոքէ . ժողովուրդին զաւակները օր
ըստ օրէ կը բազմապատկին . ամեն տարի Եւ-
րոպայի ամէն ազգերէն հարիւր հազար ըն-
տանիքները գաղթական կերթան դէպ յԱմե-
րիկայ : Իսկ Ասիական աշխարհը կը թափու-
րանայ ժողովուրդէն . պէտք չէ երբէք զար-

մանանք ու հետազոտենք, քանզի սորա պատ-
ճառները խիստ յայտնի են : Աշխարհ, որոյ
Ժողովուրդը դեռ տգէտ է, անուս է, անար-
ուեստ է, կեանքն՝ իւր հնութեան մէջն է,
ազատութեան յառաջդիմութեան տարերք չեան-
նի, կը ճնշուի կը հարստահարուի թէ իւր
ձեռքով թէ օտարին, իւր հացը դառնութեան
հաց է, իւր ջուրը՝ կարօտանաց, իւր օրերը
վըշարմբեր են, իւր կեանքն ապերձանիկ . նա
կը դողայ միշտ այն ամեն արհաւիրքէն, որ
զինքն չըլապատեր են . ինչպէս կարելի է յու-
սալ թէ այդպիսի դառն բախտի վիճակեալ
Ժողովուրդը . հարսանեաց թմբուկ զարնէ,
պար խաղայ, ամուսնանայ, ընտանեաց հայր
վինի, Ժողովուրդին թիւ յաւելու, ազգ, հայ-
րենիք բարգաւաճի ու բարձրանայ :

Հայ Ժողովուրդին այս անյուսալի վիճակը,
որ մեծապէս արգելք ու խափանարար է իւր
ամուսնական կեանքին և բարգաւաճման . հա-
մար, այլ ես տակաւին կը մխիթարուիմ մեր
հայրենի Ժողովրդոց ընտանեկան կեանքին վե-
րայ, որ թէպէտ տառապեալ է, աղքատ է
թէ հայրենեաց և թէ պանդխտութեան մէջ .
սակայն որչա՛փ քաղցր ու նուիրական պար-
տիք է նոցա համար ամուսնասիրութիւն և

ընտանիք : Նոյ նահապետի հարազատ թոռ-
ները նոքա են տիրապէս , որ չեն մոռնար
իրենց մեծ պապուն այն սուրբ յիշատակ-
ներէ որ նահապետական կեանքը ժառան-
գութիւն թողած է իւր մնացորդ զաւակաց :
Այդ ժառանգութիւն ինչ է , գիտե՞ս , գանձ
չէ , ոսկի և արծաթ չէ , ադամանդ չէ , այլ
դրախտի ամուսնական օրհնութիւնը , որ Ադա-
մէն սկսեալ նահապետէ առ նահապետ անց-
նելով հասաւ մինչեւ Յարեթի ու Հայկայ տու-
նը . որոյ մնացորդ զաւակները այդ Աստ-
ուածապարդեւ հարստութեան տէր և ժա-
ռանգորդ են :

Դու չե՞ս զարմանար մտախորհ ընթերցող ,
թէ ինչպէս այնչափ բարբարոս Գարշաւանաց
երեսէն , այնչափ սպառսպուռ կոտորածոյ և
աւերմանց երեսէն , և այնչափ ժամանակ ժա-
մանակ գաղթականութեանց երեսէն , տակա-
ւին շէն մնաց Հայկայ տուն . թէեւ իւր
փառաց շուքը կողոպուտ տուաւ . բայց շատ
պինդ պահեց այս օրհնութիւնը , որով մնաց
ու դարձեալ պիտի անջինջ մնայ Հայկայ տուն
և ընտանեաց յիշատակ Հայոց աշխարհէն :

Ո՛վ դուք անմահ ընտանիք հայրենեաց .
խնամով պահեցէք այդ սուրբ օրհնութեան

աւանդը , որպէս զի աճի կենդանի մնայ Հայկայ տան նահապետական սերունդը :

Ինչպէս տեսանք թէ ստուգիւ չքաւորութիւն հարստահարութիւն, և պանդխտութիւնը ստուգիւ մեծապէս խափանարար են Հայ ժողովրդոց ամուսնական կեանքին. այլ այս կարգին հետ նկատել արժան է նաեւ դաղթական Հայոց վիճակը , թէ արդեօք նոցա համար ի՞նչ են խափանարար առիթները . որ հայրենիքէն դուրս մեծ մասամբ մայրաքաղաքի մէջ կը բնակին . որք ազատ են հարըստահարութենէ և պանդխտութենէ : Այս կարեւոր կէտն իբրեւ վիճակագրական խնդիր պէտք է ուշադրութեան առնումք :

Պատմութիւն կաւանդէ թէ Կոստանդնուպօլսոյ դաղթական Հայոց թուականը Յովակիմ Պատրիարքին օրէն կըսկսի . որ հինգ հարիւր տարուան դրեթէ կը մօտենայ : Այս միջոցը հինգ դար է ամբողջ . Կայսերական քաղաքին մէջ բնակող դաղթական Հայոց աճումը մինչեւ ո՛ւր հասած է : Ես այնպէս կը կարծեմ տասն և հինգ կամ շատ շատ աւելի քան հազար ընտանիք , հազիւ կը կազմեն . որ պէտք էր կրկնապատիկէն եւս աւելի վնէր : Եւ ինչ է այս նուազական թուոյն պատ-


ճառը . պատճառներ շատ ու բազմադիմի
են , թէ տնցելոյն և թէ ներկայ ժամանա-
կիս մէջ :

Եթէ պատմութեան միտ դնենք , Պօլսոյ
գաղթական Հայոց անցեալ կեանքը ոչինչ
տարբերութիւն չունէր բուն հայրենեաց ժո-
ղովուրդի կեանքէն . վասն զի հին բարբա-
րոտական արշաւանքներն ինչպէս միշտ քան-
դելով աւերակ կը դարձնէին մեր հայրենի երկ-
րին ընտանեկան պարտէզները , այսպէս նաեւ
գաղթական հայերը Պօլսոյ մայրաքաղաքի նա-
ւահանգստին մէջ առանց ալէկոծութեան չի
մնացին . այլ միշտ քաղաքական փոփոխու-
թեանց ենթարկուելով՝ բարւոք վիճակ չու-
նեցան և իրենց ընտանեկան կեանքն առանց
բարգաւաճելոյ մնաց :

Ներկայ ժամանակիս մէջ թէպէտ հին խա-
փանարար առիթները վերջացած են , սակայն
նոր աշխարհը սրիշ խափանարար առիթներ
հանեց երեւան , որ քան զհինն դառն ու դժ-
ուարին է : Եւ ի՞նչ է այս , դարձեալ կրկնեմ
քեզ , ընթերցող , պերճանք և զեղխութիւնն է .
որ իւր անողոք արշաւանքներով քանդեց և
դեռ պիտի քանդէ գաղթական Հայոց տուն
և ընտանիք , երբ պերճանք և զեղխութիւն

կը քանդեն, հասլա ինչ բան կարող է շինել
 և վերջացնել միանգամայն այդ խափանարար
 պատճառները. և բուժիչ դարմանն ինչ է այս
 աղետայի հիւանդութեանն, Շատ խօսեցայ և
 դարձեալ նոյն կրկնեմ. դորա զօրաւոր դար-
 մանն է միայն, որ խելաբերելով զգաստա-
 նան դաղթական Հայոց ընտանիքը, իսկ եթէ
 տակաւին ծերոց խրատները քամահրեն, բա-
 րոյախօս դաստիարակաց խօսքերուն չհամոզ-
 ուին, տնտեսագիտաց հաշիւները մերժեն, և
 շարունակեն իրենց կորստեան ճանապարհ,
 այնուհետեւ այլեւս ոչ ինչ դարման կայ զի-
 րենք ուղղելու. բայց միայն ապագայի թըշ-
 ուառարեր օրերը. յորում նոքա պիտի վաղ-
 վաղեն դէպ ՚ի զգաստութիւն, յիշելով Դա-
 լիթին խօսքը. թէ « Յաճախեսցին հիւան-
 դութիւնք նոցա, ապա վաղվաղեսցին » : Դա-
 լիթ Յակովբայ տան և նորա յամառ ընտան-
 եաց համար խօսեր է այս բանը. իսկ կա-
 տարումն Հայկայ տան վերայ եւս կը յար-
 մարի, Կաղօթեմձեզ համար Հայոց դաղթական
 ընտանիքներ. բացվի ձեր զգաստութեան աչ-
 քը, դուք ներկային մէջ տեսնաք այն կորս-
 տարեր օրն, տեսնաք ու բարւոքէք ձեր ընտա-
 նեկան կեանքը : Այս միայն կաղօթեմ ձեզ

համար տառապեալ որդիք հայրենեաց . որ
գուք ազատ մնաք այս աւերիչ զեղխութենէն ,
ձեր փառքն ու պերճանք թող լինին միայն
հայրենեաց հողն ու դաշտ , ջուրն ու բերա-
զան ծաղիկները . եզնամող , մաճն ու հարօր և
շինականին անպաճոյճ խրճիթն :



Է.

ԶՆՏԲՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԻՐԱԿՈՒՆԻՔ

Կ Ե Ն Ա Կ Ի Ց Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Յ .



ԻՆՉՊԷՍ տեսանք գրախափ ընտանեաց նը-
կարագրին մէջ, որ Տէր Աստուած թոյլ տը-
ւաւ Ադամայ որ ինքնակամ ազատութեամբ
ինքն իւր կենակից ընկերն ընտրէ. և երբ
նա ընդ այս դժկամակելով վարանեցաւ՝ չգըտ-
նելով մի պատշաճագոյն ընկեր տարասեռ
անասնոց կարգէն. յայնժամ խնամակալն Աստ-
ուած կինն ՚ի կողէն ընտրելով՝ հարանացոյց
Ադամ փեսային հետ. որ իւր անդրանիկ ըս-
տեղծուած ամենասիրելի որդին էր. Եւ ով

պիտի լինէր Աղամայ համար հարսնընտիր հայր-
երբ նա ամուսնական ծնողք չունէր . մի մի-
այն իւր ծնող և հայր Արարչապետին խնամա-
կալութիւնն էր :

Ուստի կենակից ամուսին և հարսն ընտ-
րելու իրաւունքը՝ ամուսնացող փեսային ան-
ժըխտելի իրաւունքն է . ինչպէս և հարսին
անբռնադատ և յօժարամիտ հաւանութիւնն ,
վասն զի հարսն ստրուկ չէ , այլ իրրեւ ազատ
ընկեր իւր փեսային նոյն հաւասար իրաւուն-
քըն ունի , որ իւր ազատակամ հաւանութիւնը
նա եւս նուիրէ փեսային : Որոյ դեղեցիկ օրի-
նակը կը տեսնամք Ռեբեկային վերայ . զի երբ
հարսնախօս ծառայն Արրահամու Եղիազար
կը պնդէր առանց յապաղելոյ հեռեւեալ օրը
Ռեբեկայն առնելով ճամբայ ելնէ , հարսին
ծնողք և եղբայր Լարան աղաչեցին զինքն որ
կոյսն Ռեբեկայ այլ եւս տտան օր մնայ իւր հօր
տունը . և երբ չկարացին համոզել զինքն՝
պատճառեցին Ռեբեկայէն եւս հարցնել թէ կը
յօժարի՞ երթալ . թերեւս այնպէս կարծեցին
նոքա որ կոյսն առաւել ընտրէ ծնողական սէր
քան փեսային անձկութիւնը : Եւ երբ կան-
չելով կը հարցնեն թէ երթամ , պատկառոտ
կոյսն խկոյն կը պատասխանէ , սյո՛ կերթամ :

և իսկոյն ծնողք զիջանելով կուղևորեն զիրենք : Այս հարսնախօսութեան դէպքը իմաստասիրել կուտայ մեզ թէ նահապետական դարուն մէջ կինը որչա՛փ ազատ էր , կնոջ ազատութիւնը շատ հին իրաւունք է . Եւրոպիոյ իրաւագիտութիւնը զոյն նոր չի հնարեց , այլ միայն վերանորոգեց :

Բայց կարող չենք ժխտել թէ ծնողքն ևս մեծ իրաւունք ունին այս պարագային մէջ . իբրև հայր ու մայր , իբրև փորձառուք և խելահաս : Վասն զի բազում անգամ տեսնուած է . անցելոյն և ներկային մէջ շատ ապացոյցներ կան , որ թէ փեսայոյ և երիտասարդն և թէ կոյսն յովով անգամ կը վրիպին իրենց ազատակամ ու եռանդավառ ընտրութեան մէջ : Իսկ ծնողաց ընտրութիւնը դուն ուրեք կը սխալի և սորա պատճառը լսիսս պարզ է . վասըն զի թէ երիտասարդն և թէ կոյսն դրեթէ միշտ կրկց բերմամբ և բուռն սիրոյ զգացումով կը ահսնան ու կը հաւանին և շատ անգամ աչքը կը գլխթէ զիրենք : Իսկ ծնողք ծանր խորհրդով ընդ երկար հետազօտութեամբ հազիւ ուրեմն կը հաւանին և կընտրեն : Այլ ևս կը խօսիմ այնպիսի ծնողաց համար , որ արգարև . ընտանեաց դրոխ բարի հայր և

բարի մայր հանդիսացած են , և որ արթուն
 և աչալուրջ են , գիտեն լաւապէս որոշել
 իրենց զաւակաց ամուսնութեան բախան : Բայց
 շատ մեղադրանաց արժանի են այն ծնողք ,
 որ կամ աչալուրջ և խոհական ընտրութիւն
 չունին և կամ այլ և այլ շահու և գաղտնի
 հանգամանքներէ ստիպեալ իրենց զաւակնե-
 րը նոյն խկ իրենց ձեռքով զոհ կուտան ան-
 յարմար ամուսնութեամբ չխնայելով և չը նա-
 խատեսելով ապագայ ընտանեկան աղէտն :

Ամուսնական ընտրութեան մէջ առաջին ըզ-
 դուշաւոր պայմանն է , որ առանց արենակցու-
 թեան լինի ինչպէս օրինադրած է Աստուա-
 ծային օրէնքը և Եկեղեցւոյ հարց կանոնա-
 կան սահմանը : Այս օրէնքը թէ և կարծեն
 ոմանք թէ դրական է , կամ մարդոց մտացա-
 ծին դիւտ . սակայն ոչ միայն բնական է , այլ և
 բանաւոր մարդոյն համար նուիրական և սուրբ
 է . նովաւ է , որ մարդոյն աղնուութիւնը կը
 բարձրանայ և կը զանազանի անազգի և խառնա-
 զոյգ անասնոց կարգէն և քաջաւոյգ կը բեղմ-
 նաւորին ընտանեկան տարտիղին մատաղա-
 սունկ ծառերը : Արենակցական ամուսնութիւնը
 ոչ միայն Եկեղեցւոյ օրինաց բարոյապէս հա-
 կառակ է , նա և բնուէն միասակար է աղ-

նուասերունք ընտանիք կաղմելու . և առ այս միաձայն կը վիճայեն հին և նոր աշխարհ, տղէտ և իմաստունն սու հասարակ . և արդի ժամանակիս քաջափորձ ընադէտները և բժիշկները փորձով կապացուցանեն աղգակից ամուսնութեան չար հետևանքները :

Որչա՞փ անբարի է մեր ժամանակը . յորում այս վսեմ օրինաց դիրը սկսեր է հետզհետէ եղծանիլ և հին զեղծմունքն օր ըստ օրէ կը բաղմանայ ազգին մէջ . զոր վերջացուց Մեծն Ներսէս , և ս.աժանելի աշխատութեամբ հաղիւ հաղ կարկատեց սյդ օրինաց ցանկը : Այլ դիտե՛ս ուշիմ ընթերցող , թէ ո՞չք էին Հայոց ազգի կարգէն այդ Ատուածագիր ցանկ խըրամատող ձեռք . հասարակ ժողովուրդ չէր , աղքատ ընտանիք չէին . հասոյա Հայոց նախարարներ, և իշխանազուն ընտանիքը . որք առանց ակնածութեան կը հետեւին Նկեղեցւոյ սահմանագրութեան դէմ և հայրապետին հովուական գաւազանը խորտակելով՝ կամուսնանային . զաւակները կամուսնայնէին մերձաւոր ազգախառնութեամբ և սորա պատճառը չէ թէ միայն իշխանական պերճութիւնն էր , այլ առաւել վատ ազահութեան նախանձը . որ տոհմական հարստութիւնը պահուի ու չը ժառանգէ զայն ժողովուրդին արժանաւոր զաւակը :

Դատեցէք, ժողովուրդ Հայոց, այս եղծումըն, որ այժմ ևս կը տարածի ազդին մէջ. ով է պատասխանատու. նոքա որ սոնքացեալ հպարտանալով իրենց զօրութեան վերայ կըստահակին այս օրէնքին դէմը, չէ մեք եկեղեցւոյ պաշտօնեայներս, որ չկրելով մեր այն վեհ նախնեաց սաստող ու նախանձաւոր հոգին անկարող կը լինիւք հսկել օրինաց ցանկին վերայ, այլ կը խոնարհիմք ժամանակի կեղծաւորութեան հետը և սորա անունը կը դնեմք խոհեմութիւն, քաղաքականութիւն, ժամանակի պահանջման վարմունք, և մերթ ևս երբ յաջողի օրէնք ծանրագնով վաճառել, այդ եւս կը համարիմք մեզ համար պարծանք, գործունէութիւն և ազգին շահաբերութեան մի գիւտը: Երբ ապիկար հովիւներս գաւազանին իրաւունքը մի կողմ դնելով՝ կը թոյլադրեմք. որ գործուին այդ զեղծմունքները, գու մի թէ իրօք կը սրտմտիս, ժողովուրդ Հայոց: Այո՛ պահ մի կը զայրանաս կը բամբասես կը զերը՝ ցոյց տալով թէ օրինաց շատ նախանձաւոր ես. շուտ կանցնի քո այս զայրոյթ գու յետոյ կը մեղմանաս ու կը մոռնաս առջի գատաստանդ ու կըսկսիս զմեզ և մեր օրինազանցութիւնը գովել՝ թէ ժամանակի աղատու

Թեան համեմատ վարուեցաւ, թէ ազգասիրութիւն գործեց, հոգ չէ թէ օրինաց ցանկը փոքր ինչ քանդուեցաւ. ազգին նիւթական շահն ևս նկատել պէտք է և այլն, թողունք այս դատաստանը ուրիշ անգամ տեսնալու, դառնանք ճառիս նպատակին վերայ:

Ամուսնական ընտրութեան երկրորդ պայմանն է համեմատութիւն երկուստեք կողման հանգամանաց. համեմատութիւն հասակ առ հասակ. համեմատութիւն վիճակ առ վիճակ, համեմատել պէտք է նաեւ երկու ամուսիններու բարքն ու վարք. և երկու անմեղձաւոր ընտանեաց կեանքն ու յարմարութիւնը: Ամենայն զգուշութեամբ երկուստեք կողմէն նախապէս զուգակշռել պէտք է այս կարեւոր հանգամանքները ու այնպէս հաւանութիւն տալ իրարու: Ապա թէ ոչ շատ անգամ ինչպէս յաճախ կը տեսնամք ընտանեկան կռիւներ, բաժանումներ, անյարմար ու անպատշաճ խնամութենէն յառաջ կուգան ու կը խանգարեն ընտանեկան հանդարտ ու խաղաղ վիճակը: Այս դժուարին ասպագայէն ազատելու համար, նոր խնամի եղող ընտանեաց պարտիքն է, որ չը մոռնան երբէք համեմատութեան չափն ու ճշդութիւնը, դիտնալով թէ բովանդակ տիե-

զերքը համեմատութեան շափով կը կառա-
վարուի : Որչա՞փ անբնական է և մեծ խիղճ,
երբ բռնութիւն կամ հրասլոյր և կամ թէ շահ
կը ջանան իրարու հետ պատուաստել երկու
ամուսինները, որ մին դալար նորատունկ է և
միւսն հինաւուր հաստացեալ ծառ, որ աշնան
մօտ է, իւր տերեւներ դեղնած պիտի թօթա-
փին, բունը փտած է, և ստեղունք դօսանալ
սկսած են : Օրհնեալ լինին մեր եկեղեցւոյ սահ-
մանագիր Հայրերը, որ օրինօք հաստատեր են
կոյս ընդ կոյսի, այրին ընդ այրւոյ : Ամուսնու-
թեան այս համապատշաճ օրէնք դեռ մեր
հայրենի դաւառներէն շատերը երկիւղա-
ծութեամբ կը պահեն : Իսկ Պօլիս և ուրիշ
ծովեզերեայ քաղաքները այդ օրէնքը իբր
հին ու անպէտ համարելով բարձի թողի եղած
է ժողովուրդէն և միանգամայն եկեղեցւոյ
հայրերէն :

Եթէ մէկն յառաջ բերէ, եթէ որ կարին նո-
րապսակ երիտասարդի մը ամուսին մեռնի տա-
րածամ, նա պարտաւոր է մի այրի կնոջ հետ
ամուսնանալ :

Այդ հարցմանն՝ ես ալ մի հարցումն յառաջ
բերեմ, եթէ Նոյնպէս ապա՞ծամ մեռնի փե-
ռայն՝ այրի մնայ իւր հարսն, որոյ կեանք նոր

բացուած գարնան պէս դեռ ծաղկահասակ է , կաղաչեմ , որ խօսիս ինչ է քո արդար դատաստանը . դու որ խիղճ կընես նորատի փեսային համար . նոյն խիղճ չե՞ս զդար նորածաղիկ հարսին համար , և կուզես , որ նա անամուսին , անպտուղ սեւաքօղ երթայ մինչեւ ի գերեզման : Եթէ փեսայն կանձկայ որ դարձեալ կոյս ամուսին մի առնէ կամ ինքն կուսին փեսայ լինի . արդեօք այրի հարսն իրաւունք չունի՞ այդպէս անձկանալ . բիւր անդամ երջանիկ կը համարի զինքն , եթէ բախտաւորի . Թող կոյս փեսային՝ դէթ այրի փեսային ամուսին լինել , Մեծ զրկանք է այս կանանց սեռին , մեծ ոճիր է տառապեալ այրիներուն , այլ ով կը լինի նոցա համար իրաւարար դատաւոր , քանի որ աշխարհիս դատաւորները այր մարդիկ են : Խօսքիս միտքը չըլինի թէ խեղաթիւրես մտադիր ընթերցող ես չեմ ասէր , որ կիները դատաւորական աթոռ նստին . այլ ասել կուզեմ բանին ճշմարտութիւն , որ ալեւոր դատաւորները , այս դատաստանին մէջ աչառելով կը վարեն , և այս բարոյական հարստահարութիւնը տակաւին պիտի ծանրանայ շատ մանկամարդկիներուն վերայ , քանի որ ժամանակ յուր ազատութեան զեղծմունքներ կը յաւելու :

Հարանընտրութեան կարեւոր պայմանները այսչափ միայն յիշելով՝ խօսինք այժմ նշան-դրութեան խորհուրդին վերայ որ հանդերձեալ պսակին նախօրհնութիւնն է . զոր կը կատարէ Եկեղեցին հանդերձ վկայներով, ցոյց տալով հրապարակաւ թէ խօսեցեալ կոյսն նշանեցաւ մի նրիտասարդի համար . այլ ևս ոչ ոք իրաւունք ունի ուրիշի համար խօսել կամ նշան տալ :

Նշանդրութեան խորհուրդ շատ հին աւանդութիւնն է, և կը տեսնամք զայն նահապետական ընտանեաց մէջ : Աբրահամ նահապետ իւր հաւատարիմ Եղիազար ծառայն ի խառան կը դրկէ իւր հայրենի աղգատոհմին տունը, որպէս զի իսահակայ որդւոյն համար հարսնախօս լինի : Տէր կառաջնորդէ հաւատարիմ ծառային. խառանու ջրհորին գլուխ կը գտնէ պարկեշտ Ռերբեկայն, հոն Եղիազար կը հաւատայ թէ կոյսն ըղձակաթ է իւր փեսային . այլ ևս չբսպասեր ծնողաց հաւանութեան . իսկոյն կը նշանէ դնելով մասնին ի մասն և ասպարանջաններն ի բազուկ . որ ի կողմանէ փեսային կողերձի առ հարսն իբրեւ ի նշան հաւանութեան և սիրոյ : Այս ընտանեկան պարզ ու անկեղծ սովորութիւնը, որ Աբրահամէն յառաջ թերևս

Նոյի ընտանիքէն սկսեալ մինչեւ ցայսօր աւանդաբար հասած է :

Երանի՛ թէ մեր հարսնախօսք եղիազար ծառային պէս հաւատարիմ լինէին , առանց կեղծելոյ , առանց նենդեւելոյ , առանց ու իցէ խարդախ միջոցներ ի գործ դնելոյ՝ սրտի պարզութեամբ կատարէին այդ զգուշաւոր պաշտօնը . որ ընտանեկան միութեան առաջին կապըն է . զոր պէտք է ամենայն հաւատարմութեամբ և լի սիրով ամրապնդել :

Նշանդրութենէն յետոյ՝ նշանուած կուսին սուրբ պարտիքն է , իւր աչքի խանդակաթսէրը դարձնել միայն նշանի մատանւոյն վերայ . յիշել , միշտ յուշի պահել թէ ինքն նշանուած է , հարս պիտի լինի . այլևս չիկայ աշխարհիս վերայ իրեն համար ուրիշ ոք բաց իւր փեսայէն , որոյ միայն պէտք է նուիրէ իւր մաքուր կուսական սէր :

Այս պարտիք փոխադարձական է , ոչ միայն հարսին համար , այլ և փեսային . որ թէպէտ ինքն աւելի ազատ է , ազատաբար կը շրջի ամենուրեք հրապարակի մէջ . այլ պէտք է փակէ իւր աչքը , ամփոփէ իւր միտքը , պահէ իւր սրտին ամբօթիւնը և ոչ զոք տեսնալ ուղէ բաց իւր նշանած կուսէն : Նա թէպէտ

չունի մատանի յուշարար, ոսկի և ադամանդ .
մատանի իւր հզօր սէրն է, որով կը կապի նա
իւր անձկալուոյն հետը, մահ և աշխարհ կարող
չեն զայն քանդել, եթէ չքանդէ իւր ձեռք և
մերթ ևս նենդաւորին դաւ :

Արեւմտեան քաղաքակիրթ ազգաց մէջ իբրեւ ընտանեկան սովորութիւնը՝ թոյլատրուած է . նշանուած կոյսն և երիտասարդն ամուսնութենէն յառաջ կարող են իրարու հետ յաճախ և ազատաբար տեսնուիլ, խօսիլ և դքօսնուլ ընկերութեան մէջ և առ տնին : Պօլսոյ և ուրիշ մի քանի քաղաքաց մէջ ևս մտեր է այդ ազատ վարմունքը և հայ ընտանիքն ևս սկսած են սոյն ազատութեան վաւիարիլ : Սակայն այսպիսի ազատ վարմանց ու տեսութեանց մէջ, կատարեալ կրթութիւն և դաստիարակութիւն պէտք է, առաւել ևս կրօնի երկիրազածութիւն և պատկառանաց շնորհը :

Թող չպարծի արդի աշխարհ թէ իւր ուսեալ և կրթեալ զաւակները Յակովբ նահապետի չափ ժուժկալութեան շնորհ ունին, որ եօթն տարի ամբողջ իւր նշանած ու սիրեցեալ Ռաքէլին համար հովուական ազատ կեանքով ժուժկալեց թառանու արձակ դաշտերուն մէջ : Այս պարզ հովուին սքանչելի ժուժկալութեան

վերայ չգիտեմ արդի ազատավար երիտա-
սարդու թիւնը ինչ դատաստան կընէ, կը զար-
մանայ, թէ ծաղր կարձակէ որ Յակովբը ապուշ
ու անզգայ մարդ եղեր է :

Իսկ մեր հայրենեաց այլ և այլ դաւառնե-
րու նախնական սովորութիւնք մանաւանդ քա-
ղաքներու մէջ դժուարութեամբ կը թոյլադ-
րեն այդ ազատ վարմունքը : Բայց շինական
կեանքի մէջ բնապէս և առ հարկի ազատ թող-
ուած է թերևս նահապետական դարէն իվեր :
Վասնզի գեղերու փոքր վիճակ, դաշտային ազա-
տավայր կեանք և աշխատութիւն միշտ կը նե-
րեն, որ գիւղի աղջկունք բացերես խառն
չբըջին երիտասարդաց հետ. որոց համար գիւ-
ղական պարզ կեանք դաշտեր, լեռներ, աղ-
բիւրներու դլուխները կը համարուին իբրև
հասարակաց պարտէզ. ուր ընկերաբար կը
վարին կը տեսնուին և կը խօսին. միայն թէ
նշանուելէն յետոյ՝ կոյսն պարտաւոր է իւր
պատկառանաց քողով ծածկուիլ միշտ ՚ի պա-
տիւ փեսային. և միանգամայն ցոյց տալով թէ
ինքն նուիրեալ է և այլևս ազատ չէ :

Բայց դարձեալ գիւղական պարզ ընտանե-
կան կեանքն ևս ազատ չէ պատահական զեղծ-
մունքներէ. ուր մերթ ընդ մերթ առևան-

գութիւնք կը լինին . որոց ըստ մեծի մասին պատճառը ծնողաց խտրասիրտ յամառութիւնը և ընծայասիրութեան բաղձանքն է . որ շատ ու զանազան պարզեւները կը պահանջեն փեսային կողմէն . որով միայն կը զիջանին և կը հաւանին իրենց աղջիկը տալ : Եւ երբ այս վատ սակարկութիւն չի յաջողի և միւս կողմէն երբ կոյսն ու երիտասարդը սրտիւ կասլուած են իրարու հետը , անշուշտ սէրը կը յաղթահարէ և առեւանգութիւն տեղի կուտայ : Այս պարագային մէջ որչափ որ առեւանգող երիտասարդը մեղադրանաց արժանի է , այլ առաւել մեղապարտ կը համարուին աղջկան ծնողքը , որ իրենց ազատ զաւակը իբրեւ գերի ստրկաբար ՚ի վաճառ կը հանեն ոտնհարելով մարդոյն և սիրոյն պատիւը . որոյ թանգ և արժանաւոր գինը՝ միայն փեսային բարոյական արժանիք և սէրն է և ոչ թէ ուրիշ նիւթական վճարք :

Կարգն եկաւ , չի մոռնանք . խօսինք նաև Պօլսոյ և ուրիշ քաղաքաց ընտանեկան սյսնորամուտ , օտարուսումն և վատթար սովորութեան վերայ . որոյ սակարկութեան եղանակն առաւել պարսպաւելի է : Վասնզի անդ երբ դաւառացի գիւղական ընտանիքը հարսնախօթեան մէջ իրենց աղջիկները ՚ի վաճառ կը հա-

նեն . աստ քաղաքակրթութեան մէջ բնակող
 ընտանիքը՝ երիտասարդները ՚ի վաճառ կը հա-
 նեն , քեզ հրաւէր կը կարդամ ազգի դատա-
 ւորները , դատեցէք ու վճուեցէք . այս երկու
 վճառահանութեան եղանակէն ո՞րն է առաւել
 վատթարագոյն . երկուքն ևս հաւասար ստոր-
 կութիւն չէ՞ : Սակայն շինական ընտանիքը ,
 իւր ռամկավարութեամբ հանդերձ թերեւս
 արդարանայ քաղաքակրթութեան առաջ . որ
 կնոջ պատիւ և արժանաւորութիւնը բարձրա-
 ցոյց . դուցէ բնապէս զգալով այս գիւղացի
 ժողովուրդը թանկագին վաճառել կուզէ զայն :
 Իսկ մեր քաղաքակրթ ընտանիքը երբ երի-
 տասարդները ՚ի վաճառ կը հանեն ի՞նչ միտք
 ու նպատակ ունին . արդեօք այնպէ՞ս կը հա-
 մարին թէ այր մարդ առաւել բարձր ու թան-
 գագի՞ն է , յառաջ բերելով այն բանը՝ թէ Պողոս
 գնահատեր է , այր մարդը՝ դլուխ կնոջ անուա-
 նելով . անշուշտ գլխոյն պատուականութիւն
 բարձր է . պէտք է մեծագնի վաճառել , Երա-
 նի՛ թէ այդպէս լինէր , այր մարդիկ ճանչնային
 իրենց նախապատուութեան պարտիքը , ճանչնա-
 յին ամուսնական սիրոյն անգին արժանաւո-
 րութիւնը և զայն փոխէին նիւթական դրամին
 և ընչից հետը :

Այլ դիտեմ ես, ձեր նպատակն այդ չէ, ո՛վ դուք շահաւիճառ ընտանիք. կաղաչեմ մի զայրանայք, թէ այս անունով կը կոչեմ զձեզ. շահադիտութիւն հրապարակի վաճառանոցէն ելաւ և ձեր սիրտը մտաւ, ամուսնական սէրը մեռցուց. ամուսնութիւնը առեւտուրի փոխեց. դուք օրիորդին չափազանց օժիտներով կամ սակարկեալ դուամարով և այսպիսի անարդ ու նուաստ միջոցներով կուզէք ձեր որդւոց ապագայ կեանք պատրաստել: Մեր իմաստուն նախահայրը միայն մի անօժիտ կին բաւ համարեց իբրև իւր կենակից ընկեր և զայն բարոյական կեանք կոչեց, Դուք Աստուծոյ այս պարգեւած կեանքը շատ չը համարելով՝ կուզէք որ կնոջ բերած նիւթական կեանքո՛վ ապրիք. կուզէք որ կինը իւր հաց իւր հանգերձը, իւր հայրենի տընէ՛ն բերէ, վա՛շ, որչա՛փ շատ դո՛հ կը լինիք եթէ իւր էրկան համար մեծագումար դրամագլուխ մի ևս հետը բէրէ և նուիրէ. հոգ չէ թէ սիրտ և սէր չը նուիրէ. հոգ չէ թէ կրթութիւն և կնոջ վայելուչ արժանաւոր ձիրքերը չունենայ:

Թողում ձեր ծնողքը, ուղղակի ձեզ հետ խօսիմ. ո՛վ դուք ամուսնացող երիտասարդք Հայոց, չդիտեմ ձեր հայրեր, մայրեր և ընտա-

նիքը, ձեր ամուսնութիւնը շահավաճառութեան միջոց կը համարին, և բարուք կը դատին անանց ձեր քրտանց՝ ձեր բազդը պատրաստել, դուք կը հաւանի՞ք, կը զիջանի՞ք և կը նուաստանայ՞ք այնչափ, որ կնոջ հացով ապրիք, կնոջ շնորհիւ ընկերութեան մէջ պատիւունենաք և կին պարծի թէ ես հարստացուցի զայրս և այլն :

Եթէ ասէք թող մեր կիները մեզ հարստութիւն բերեն. թող նոցա բարոյական արժանաւորութիւնը պակաս լինի. այդ հաշիւը ներկայ աշխարհիս մէջ աւելորդ է. մարդիկ ինչպէս կուզեն թող դատեն :

Եթէ այսպէս, ուրեմն ցոյց կուտաք, թէ պարտուց և իրաւանց կշիռ չունիք. պատուոյ զգացումն չունիք. արութեան վայելուչ մեծանձն ոգի չունիք, Յոյց կուտաք նաև թէ անդործ էք. անարուեստ էք, անվաստակ էք. պարապորդ կը շրջիք, բախտի միայն սիրահար էք. հայրենի արհեստները կը մերժէք, ցածութիւն կը համարիք. որպէս թէ մտքով, կրթութեամբ բարձրանալով ազնուացած էք. երկաթադործի, կօշկակարի և դերձակի խանութէն անցնիլ չէք ուզեր. դէպ ի Բարձր դուռը կը հայիք, կառավարութեան պաշտօնները կու-

դէք . դոյզն քրտինքով ամսական ստանալ կը բաղձաք . չը տեսնալով նոցա վիճակը , որոց կեանքն և սկզբունքն այդ է միայն : Կամ գէթ դիջանելով վաճառականութեան և կամ դրադրութեան կը ցանկայք : Բարի է ձեր այս ցանկութիւնը , միայն թէ դրամագլուխ կը պակսի :

Արդեօք սորա համար դուք ամուսնութիւն կը սիրէք . թերեւս այդ միջոցով կարենաք մի դրամագլուխ ձեռք բերել . երանի՛ թէ կարենայիք զայն իմաստութեամբ 'ի դործ դնել , ելանի՛ թէ բախտի այն կորստական հրապարակը մոռնայիք . ընտրէիք միայն հասարակաց շահաւաճառութեան վաստակը , ինչ որ արդար և ապահով է :

Երկտասարդք Հայոց , դուք սովորական խօսք մի ունիք , զոր յառաջ կը բերէք իբրև իրաւացի փաստ . ուստի տրտունջ բառնալով կըսէք . թէ մեք հարսնցու օրիորդներէն որչափ հարստութիւն պահանջեմք . այդ դարձեալ նոցա տարապայման պճնասիրութեան համար է . այլ քննենք արդ թէ պճնասիրութիւնն ևս որո՞ց համար է : Փաստաբանող կիները քաջ պատասխան կուտան , թէ մեր պրճնասիրութեան պատճառը՝ միայն մեր վայելչասէր բնաւորութիւն կամ խաբուսիկ նորասի-

րութիւն չէ , ինչպէս կը կարծուի , այլ առաւել այր մարդոց աչքին հաճոյականութիւնն կը վարէ զմեզ . միշտ արտաքին պճնասիրութեան կերպերով հաճոյանալ :

Ուրեմն յայտ է թէ դուք ևս հրապուրուած էք և իրօք կը սիրէք պճնասիրութեան ցոյցերը . միթէ կիներն ապո՞ւշ են , փորձել չդիտեն : Ապա թէ ոչ իշխանութեան կշիռը ձեր ձեռքն է . չափ ու սահման դրէք , դուք այր մարդիկ էք . կնոջ տիրական գլուխ էք , հեղինակութիւն ունիք , հանճար ունիք , ուսեալ էք , կրթութեամբ կը պարծիք . շահավաճառութիւն , վաստակ , գանձ , տնտեսութիւն , ամէն բան ձեր կամաց ձեռքն է , աշխատեցէք , հասկցուցէք կնոջ , որ պճնասիրութիւնը՝ ձեզ համար հաճելի չէ . հասկցուցէք թէ ունայնասիրութիւն է , կարճատուութիւն է , սնտի մրսխանք է , տնաւերութիւն է , վախճանը չքաւորութիւն է , և ի վերջոյ ընտանեկան բարեկեցիկ կեանքն ու երջանկութիւն կը բառնայ և այլն :

Հասկցուցէք նաև թէ կնոջ ճշմարիտ փառքըն ու զարդն արտաքին փայլող ու մաշածոյ հանդերձին վերայ չի կայանար , այլ առաւել նորա ներքին ոգւոյ արտափայլող գեղեցկու-

թեան վերայ . որ է համեստութիւն , անկեղծ
ամուսնասիրութիւն , հաւատարմութիւն , եր-
կիւղածութիւն , հնազանդութիւն , զաւակաց
դաստիարակութիւն , տանտիկնութիւն , և տըն-
տեսող խնայութիւն , և այլն : Յոյց տուէք թէ
առաքինի կնոջ նկարագիրն այս է , և իսկապէս
այս է միայն նորա ճշմարիտ գեղեցկութեան
փառքն , որ ոչ կեղծանի և ոչ ծաղկի նման կը
թուամի :

Իսկ եթէ տակաւին չհամոզուին կիները ,
դուք անպարտ էք . թողէք , ձեռնթափ եղիք
թող նոքա ունայն զարդին և զեղխութեան
հետն ամուսնանան , որոց անձնատուր եղած
են սրտով ու հոգւով :

Այլ դուք սպասեցէք , երիտասարդք Հա-
յոց , ժամանակ բերաւ այս զեղխութեան օրե-
րը , ժամանակ դարձեալ պիտի բերէ զդաս-
տութեան օրերը . յորում դուք և կիները
պիտի սթափիք առ հասարակ այս նոր խելա-
գարութենէն , և անադան ուրեմն պիտի ճանչ-
նաք , ձեր անցելոյն յոռի ընթացքը և պիտի
գիտնաք թէ ճշմարիտ ամուսնութեան պայ-
մանը սէրն է . որ սերտ կը կապէ երկու ամուս-
նեաց սիրտերը ի միութիւն , ադամանդ ոս-
կի , և այլն հարստութիւնները կարող չեն պինդ

պահել այդ սուրբ կապը, երբ դոքա սպառին՝ իսկոյն կը քանդուին այն ամէն կեղծեալ կապերը. որ կամ փեսային ճոխութիւնն և կամ հարսին հարուստ օժիտները կը կապեն: Ես տեսայ Հայոց Պատրիարքարանի դատարանին մէջ և կը վկայեմ այսօր թէ այդպիսի կապերը որչա՞փ դիւրախզելի են: Վասնզի երբ ամուսնական սէրը՝ նիւթին վերայ հաստատուի՝ նիւթը կը սպառի, սէրը տեղի կուտայ, իսկ երբ ընական պարզ և ճշմարիտ սիրոյ վերայ հաստատուի, մինչ ի դերեզման անշարժ կը մնայ միութեան շէնքը, և ոչ երբէք սպառելով կը չքաւորի սիրոյ հարստութիւնը: Երջանիկ են այդ սիրոյ միաւորեալ ամուսինքը, որ իրենց ընտանեկան կենաց հիմն՝ միայն սիրոյ վիմին վերայ կը հաստատեն՝ իմաստութեամբ խորհելով՝ թէ այդ կենդանի սիրոյ հիմն է, որ կարող է միայն անկործանելի հաստատուն պահել ընտանեկան կեանքին երերուն շէնքը՝ աշխարհիս հողմերուն և հեղեղներուն բաղխման առաջ:

Բաւ համարելով այսքան՝ կաւարտեմ հարսնախօսութեան ճառը, կը յորդորեմ զձեզ և կաղօթեմ ձեզ համար, երիտասարդք և կուսանք Հայոց, որ դուք զգաստութեամբ խորհիք. դառնայք ներկայ կորստեան ճանապարհ-

հէն ի բաց թողուք արտաքին նիւթական կա-
պերն . ճանչնանք ամուսնական սիրոյ բարձր
խորհուրդը . և միայն եկեղեցւոյ պատուիրանին
համեմատ սուրբ սիրով կապուիք . զոր կամ-
բայնդէ Աստուծոյ բանին հզօր ձեռքը , որով
միայն կապեց դրախտի ընտանիքը :



ՀԱՐՄԱՆԻՔ

ԵԻ

ԹՈՐԵՐԳ ՊՍԿԿԵՆ



ՀԱՐՄԱՆԻՔԸ՝ պսակի սուրբ խորհուրդին հրապարակական ու հանդիսաւոր արարողութիւնն է . և շատ վայելուչ է՝ թէ որ ասենք մարդոյն Նոր Կենաց մուտն և տօնահանդէսն է . ուր կը համախմբին շնորհաւոր ուրախակըցութեան համար , ազգականք , բարեկամք , ու դրացիք : Այս մարմնաւոր խմբին հետը կը խմբակցի Եկեղեցւոյ հոգեւոր խումբն . և իւր օրհնութիւն տալով կ'օրհնէ թագւոր փեսային և թագուհի հարսին պսակը և Աստուածային օրհնութեամբ կը նուիրագործէ երկու ամուսնացեալոց դաշնադրութիւնը , զոր ի մի մարմին

զուգեւելով երկու լծակից ամուսինները՝ կը յայտարարէ թէ այսուհետեւ անբաժանելի են։ Միայն քահանային ձեռք չէ որ կը կապէ զպսակն այլ պէտք է հաւատալ թէ Աստուած դրախտին վճռով միացուց զիրենք . մարդ կարող չէ բաժնել մինչեւ 'ի մահ և գերեզման։ Այս խորհրդական դաշնագրին վերայ իբրև վկայ ձեռն կը դնեն . խաչն իւր-թեւով, Աւետարանն իւր բանիւն, պաշտօնեայք օրհնութեամբ և սոցահետ ժողովուրդը միաձայնելով կը դռչէ ամեն եղիցի՛ եղիցի՛ :

Դաւիթ իւր սաղմոսին երգը հարսին ականջ նուագելով՝ կը հրաւիրէ զինքն 'ի տունն փեսային . « Լո՛ւր դուստր և տե՛ս , խոնարհեցո՛ զունկն քո , մուռա զժողովուրդ քո և զտունն հօր քո , զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ » : Իսկ Սողոմօն իւր բարձրախորհուրդ երգով բառաւել կուտայ փեսային առ հարսն . « Ահաւասիկ կաս , գեղեցիկ մերձաւոր իմ . աչք քո աղաւնիք . բա՛ց 'ի լուութենէդ քումմէ » :

Եկեղեցին այսպէս աւարտելով պսակին մեծ խորհուրդը՝ այսուհետեւ ներելով կը թոյլուգըրէ որ հարսներք սկսին իրենց պարերդութիւն և թմբուկը : Այդ ևս առանց նշանակութեան չէ . զոր վայելուչ կերպիւ կը բացատրէ

Շնորհալի Սուրբ Հայրաստեոս իւր Ընդհանրա-
կան Թղթոց մէջ . Թէ հարսանեաց Թմբուկն
բարձրագոյնելով ձայն կուտայ լսող ժողովուր-
դին ու կիմացնէ . որ հարսանիքը խաւարին
տակ ծածկուած դաղտնի չարութիւն չէ . այլ
Եկեղեցւոյն առաջ , լուսոյն առաջ , հրապարա-
կի մէջ , անպատրուակ ճշմարտութիւն է : Ահա-
ւասիկ և մեք մեր ուրախութեան Թմբուկը
զարնելով իբրև մուկտիկ բարձրածայն կը քա-
րողեմք . Թող լսէ ու տեսնայ բոլոր ժողովուր-
դը : Վասնզի ամուսնութեան զաւակները մի-
այն ծնողաց սեպհականութիւն չէ , այլ և ժո-
ղովուրդին կը վերաբերի . ժողովուրդին իրա-
ւունքն է , յիշէ ու ճանչնայ իւր նորածին ան-
դամները . Թէ արդեօք հարազատ ծնունդ են
նոքա սուրբ և պարկեշտ ամուսնութեան , Եկե-
ղեցւոյ և ժողովուրդին զաւակները պէտք է
սուրբ ամուսնութեան յայտնի դրոշմն ունե-
նան . և ժողովուրդը այդ իսկական դրոշմով
ճանչնայ իւր զաւակները . ապա Թէ ոչ , ոչինչ
զանազանութիւն չէր լինէր պոռնկորդւոյն և
սուրբ ամուսնութեան ծնունդներու մէջ :

Կը խորհիմ Թէ աշխարհիս ուրախութեան
այլ և այլ մեծամեծ հանդէսները . կարելի է
համեմատել հարսանեաց ուրախութեան հետը :

Ոչ թագաւորաց թագադրութեան աշխարհա-
խումբ հանդէսը, ոչ պալատներու և իշխա-
նաց մեծակոչ խրախճանք, և ոչ ևս ժողո-
վրդոց դասին զուարճական խնճոյքները ար-
ժանի են համեմատելու: Ես այնպէս կը համա-
րիմ թէ հարսանեաց սոսկ մի թմբուկը՝ իտա-
լական նուագներէն ուրախարար է. և շինա-
կանի փեսայն՝ բարձր է թագապսակ թագա-
ւորէն: Վասնզի աշխարհիս այլ ամեն ուրա-
խութիւնք միայն զբաւական զբօսանք են
մարդոյն ունայնասէր մտաց, յորում պահ մի
հաճոյք, հրճուանք, փառք կը լղգայ. այլ երբէք
չանցնիր. սրտի ցանկութեան անհուն բազ-
ձանքը՝ դարձեալ կուգայ և կը տիրէ մեղամտեղձ
տխրութիւնը:

Իսկ հարսանեաց ուրախութիւնը իւր սուրբ
նպատակով հանդերձ՝ մարդոյն կենաց համար
տիրապէս կեանք է և ուրախութիւն. զի միոյն
մէջ կեանքը իւր անչափ ցանկասէր տենչանք-
ներով վերջապէս կը մաշի և կը սպառի. բայց
միւսին մէջ կեանքն անթառամ կը մնայ, և
Նկեղեցւոյ պարտէզ իւր նորաբոյս ծաղիկներով
կը ծաղկազարդի: Թէպէտ մարդոյն կենաց
աշուն կը հասնի և կը թօթափէ զայն դերեզ-
մանի, մէջ ինչպէս դեղնած տերեւն ի ծառէն:

Սակայն առաքինի մարդ, որ հարսանեաց օրհնութեամբ իւր տոհմական ընտանիք և սերունդը կենդանի կը պահէ՝ նա միշտ կապրի և կենդանի կը մնայ. զի նորա կեանքը յաջորդաբար իւր զաւակները կը շարունակեն :

Խօսինք այժմ հարսանեաց ուրախութեան եղանակին և պայմանին վերայ : Ճշմարիտ է, որ հարսանիքը ընտանեկան ուրախութեան մեծ օրն է . ո՛վ կարող է ասել, մի՛ ուտեր, մի՛ խմեր, մի՛ երգեր, մի՛ պարեր, մի՛ զուարճանար, զի այդ ամէն հարսանեաց ուրախութեան կարեւոր պայմաններն են, միայն թէ չափով կշռով և պարկեշտութեամբ լինին :

Երանի՛ թէ ծնողք, որ հարսանեաց կաղմութեան հանդիսադիր են և հարսնեւորք, որ կամ ազգական և բարեկամ են առ հասարակ՝ լաւ ճանչնային հարսանեաց նշանակութիւն, պատիւ և նորա խորհրդական մեծութիւնը, որով թերեւս մեծ զգաստութեամբ զգուշանային անմեղ ուրախութեան հետը՝ մեղք չի խառնել, Եւ դու գիտե՞ս, ընթերցող, թէ ի՞նչ է այս մեղք, որ հարսանեաց մէջ գիտես թէ մարդիկ սովորած են գործել և մեղք չի համարել, Այս մեղքն է անչափաւորութիւնը ամէն վայելմանց մէջ, զեղխութիւն սեղանոյ,

զերդխութիւն այլ և այլ հանդերձանաց, զերդխու-
թիւն արբեցութեան . և այլ այսպիսի զերդ-
մունքները , յորոց շատ անդամ կուիւ կը ծընա-
նի , և հարսանեաց տուն՝ սգոյ տուն կը դառ-
նայ . մերթ ևս երկու լանամիներու նոր ընտա-
նեկան ազդակցութեան կապը կը խղէ : Արբե-
ցութիւնը միայն կուի չի հաներ , այլ երբեմն
ևս անհամեստ կերպեր և շարժմունքները յա-
ռաջ կը բերէ . զոր օրինակ անպարկեշտ խեղ-
կատակութիւնք՝ ծաղրածութեան համար . ան-
վայել և լիսի խենեշանքները , որք առ հասա-
րակ պարկեշտութիւն և պատկառանք սիրող
ընտանեաց համար պէտքէ զղուելի համարուին .
և խորչին այդպիսի կատակերդու հարսնեւոր-
ներէն . որ հարսանեաց պատիւ և ընտանեկան
ուրախակցութիւնը խաղ կը համարին . քաղա-
քավարութեան, վայելչութեան շնորհը կարհա-
մարհեն , և միանդամայն դայթակղութիւն կը
լինին պարկեշտ ընտանեաց և իրենց մատաղ
զաւակներուն . որք բնապէս ծաղր կը սիրեն
և միշտ հակամէտ են կատակով զբօսնուլ , Յո-
ռի խեղկատակութիւնը միայն տղայոց համար
հաճոյական խաղ կամ զբօսանք չէ . այլ առա-
ւել տղայամիտ մարդկանց , որոց ճշգրիտ օրի-
նակը կը տեսնուի թատրոններու մէջ : Երբ ՚ի

վերջոյ զաւելտական խաղ մի կ'սկսի, ինչպէ՛ս
ամէնքն ի միասին ծաղր կարձակեն: Զարմանալ
պէտք չէ. զի մարդիկ յաւէտ ծաղու և կա-
տակի կեանք կը սիրեն քանթէ լուրջ, ծանր և
դժաստ կեանք: Չմեղադրենք ժողովրդական
ընտանիքը, թէ ոմանք իրենց հարսանեաց ուրա-
խութեան օրը միայն դիտուածով այդ խեղկա-
տակութեան զեղծմունքները կը սիրեն. երբ
աշխարհիս պալատականաց, իշխանաց, ազնուա-
կանաց հաճոյական կեանքն խեղկատակութիւն
է. սորա համար է իսկ, որ խեղկատակ աղ-
ուէս ու կապիկ միմոսները նոցա դռները կը
յաճախեն:

Խօսիլ չեմ՝ ուզեր ինչպէս խօսեցայ ու գը-
րեցի վերը, որ հարսանեաց տօնը լուրջ և ան-
ձայն լռութեամբ կատարուի. ո՛չ. Եկեղեցին
ներելով կը թոյլադրէ, որ հարսանեաց մանկունք
երգեն ու պարեն, մինչդեռ վերսայն ընդ նո-
սա է, ինչպէս կը խօսի Ռիսուս. միայն թէ Քը-
րիստոնէական պարկեշտութիւն, ընտանեկան
պատիւ, և վայելուչ քաղաքավարութեան պար-
տիքները չմոռցուին, կարծելով թէ հարսա-
նիքը՝ ծայրայեղ ազատութիւն և ուրախութիւն
կը նշանակէ. որոյ վախճանը միշտ տրտմառիթ
հետեւանքներն են: Յաւով ու փորձառու

Թեամբը կը խօսիմ. որ հարսանեկան չափա-
զանցութիւնք՝ ոչ միայն Թաղւորին Թաղն
ու պսակ և քողածածուկ հարսին պատկա-
ռանքը կը քամահրեն. այլ և Եկեղեցւոյ սուրբ
խորհուրդի վեհութենէն չակնածելով՝ առանց
երկիւղածութեան կը վարին: Բաւ չէ այս, շատ
անգամ ևս պսակադիր սուրբ տաճարի դաւ-
թին մէջ Բաղդասարի արբեցութեան խրախ-
ճան կը կազմուի. արբեցողաց բարձրաձայն
աղաղակներով՝ պաշտօնէից աղօթքին և շարա-
կանին օրհներգութեան ձայները կը խանդար-
ուին :

Այս ուամիկ և դռեհկական վարմունքը դը-
րեթէ քիչ ժամանակ յառաջ առ հասարակ
տիրած էր Հայոց այլ և այլ դառաւունքու մէջ,
բայց արդի ժամանակը բաւական չափաւոր-
ուած է, և այս զգաստութեան շնորհը՝ յայտ
է որ դստրոց և ուսմունքը իրենց լուսով վոքը
ի շատէ ծաւալեցին. մեր ժողովրդոց վերայ .
և ժամանակին անձկութիւնը պարտաւորաց
Հայոց աղքատ ընտանիքը իրենց յոռի ընթաց-
քը ուղղել, և Թողուլ այն հին ու դռեհկական
սովորութիւնները, Թողուլ նաև եօթնօրեայ
հարսանիքը, այն զեղխ ու շուայլ ծախքերը .
որ միայն ուտելու և խմելու համար կը պատ-

բաստուէին . հարսանեաց տունը իւր ամէն լիութենէն կը դատարկուէր , Ո՛վ չի գիտէր թէ եօթնօրեայ հարսանեաց պատրաստութիւնը բաւական կը լինէր թերեւս մի ընտանիքը մինչեւ երկու տարի չափաւոր կեանքով պահել : Ես չեմ յիշեր մեր գաւառացի ազգայնոց թէ քաղաքացի և թէ գիւղացի ընտանեաց այն մասն , որ պարտքով հարսանիքը կընեն . պարտքով այդ անպէտ ծախքերը կը հողան . կանցնի հարսանիքը , և ուրախութիւնը կը տեւէ մի փոքր ժամանակը , և ահա փեռայն կը պարտաւորի թողուլ ընտանիքը և նորահարսին ամուսնական քաղցր սէրը՝ երթալ ի պանդխտութիւն , հողալ իւր պարտքը և միանգամայն խեղճուկ ընտանեաց պարէն հայթայթել : Երկու պսակաւորաց համար այս միջոցն քանի՞ դառն ու դժուարին է . փեռայն իւր պանդխտութեան մէջ , հարսն իւր սեւաքօղ առագաստին մէջ . սրտամաշ անձկութեամբ օրերը կ'անցընեն . որոց կեանքը լի է ամենայն դառնութեամբ . մանաւանդ երբ պանդուխտ ամուսին իւր պարտիքը կը մոռնայ , և իւր վշտացեալ կինը հացի կեանքէն եւս կը զրկէ , սիրոյ կեանքը զլանալէն յետոյ : Ես չեմ ուզեր այս կեանքին դառնութիւնը իւր ամէն մասերով

նկարագրել. այլ կը թողում՝ այլում տեղով
դորա ախուր պատկերը հանել. կը թողում
նաև որ մեր պանդուխտ եղբարքը այդ կեան-
քին դառնութիւնը ինքնին ճաշակելով զգան .
խղճան ու ճանչնան իրենց ամուսնական սուրբ
պարտիքները :

Ժամանակ և ժողովուրդի զարգացումն հա-
մառօտեց եօթնօրեայ հարսանիքն թէ դաւա-
ռաց և թէ նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ . ու-
տելեաց և ըմպելեաց ընդունայն ծախսերը գը-
րեթէ կը վերջանան հետզհետէ : Սակայն ժա-
մանակն և անկատար ազատ քաղաքակրթու-
թիւնն՝ ղեղխութեան և շռայլութեան ուրիշ
մասերը աւելի բազմապատկեց , հանդերձի և
նորասիրութեան այլ և այլ պերճանքները . ոս-
կէկիտուած, ադամանդեայ և այլն մեծագին քա-
րերով մատանի , պսակ , ոսկեշղթայ մանեակ
և այլ Եւրոպական նորանոր զարդերը մտցուց
մեր ընտանեկան կեանքին մէջ . որով շատ ըն-
տանիքը այդ ճոխ հանդերձանաց պատրաս-
տութեան համար ձեռնթափ լինելով՝ կը կասին
ամուսնական կեանքէն . որպէս թէ ադամանդ-
և ոսկեզարդերը՝ ամուսնական կեանքին հա-
մար հացին չափ կարեւոր պիտոյք են :

Առաւել զարմանալին և ցաւալին այն է , որ

հասարակ ժողովրդական ընտանիքն ևս այդպերճանաց բաղձանքն ունին առանց կշռելոյ իրենց չափն ու վիճակը, կը կարծին թէ ազամանդ ու ոսկեզարդն անհրաժեշտ օժիտներ են հարսին, և թէ այս ինչ կամ այն ինչ հանդերձանքները պէտք են հարսանիք կաղմելու համար: Այդ ապրուստի կարօտ ընտանիքը այնպէս կերեւակայեն և կերազեն միշտ թէ՛ կօշկակար, երկաթագործ, դերձակ և արհեստաւոր ժողովուրդները կարօղ են աշխարհիս պալատականաց, հարուստ ազնուականաց հետը միցիլ և նոյն պերճութեամբ ու կեանքով ապրել: Մեք չինք մեղադրեր, դիտենք թէ մարդոց բաղձանքն ազատ և անզուսպ է. այլ ինչ օգուտ ունի այդպիսի բաղձանաց ձկտումն. երբ զմարդն բուն կեանքի հացէն և ամուսնութենէն կը զրկէ: Ինչ օգուտ ունին նմանապէս հարսանեաց պատրաստութեան այն մեծամեծ հողերը, երբ ամուսնութենէն յետոյ ընտանեկան կեանքին վերայ բազում հողերը կը յաւելուն, հացի աշխատաւորներն մարմնով մաշուելէն յետոյ՝ չարաչար հողածութեամբ ևս հողի և կեանք կը մաշեն: Եւ թէ հարցնես թէ ինչո՞ւ կը մաշիս, նա քեզ պատասխան կուտայ, թէ կին ածի, ամուսնացայ, ծախուց հաշիւ ծան-

բացաւ . վասնզի ճօխ հարսանիք արարի , Ֆրանսիական սեղան յօրինեցի , թողլով Հայոց դինին , Պօրտոյի շիշերով շատ կենաց բաժակները պարպեցին հարսնեւորք , քսան տեսակ կերակուր և ուրիշ անուշեղէն համեմները պատրաստեցի և այլն : թող այս ' որչա՞փ դումար վատեցի՝ աղամանդի , ոսկեղարդուց և այլ կերպասեղէն զգեստուց համար : Ամբողջ գրամագըլուխս գրեթէ ոչնչացաւ , երջանիկ պիտի վենէի՝ թշուառացայ : Խեղճ նոր ամուսնացող երիտասարդը անադան ուրեմն կը զղջայ կըստըրջանայ իւր ընդունայն ծախքերուն համար . երանի՛ թէ նախատեսութեամբ դուշակէր այդօրը , իւր հարսանիք և այլ ամուսնական ծախսերը , ու չտեսնէր այդ նեղ ու դառնաբեր ասպադայն . որ հարսանեաց ուրախութեան յաջորդող տխուր հողածութեան կեանքն է :

Վերջ տանք հարսանեաց ճառին , և խրատ տանք ձեզ , Հայոց ընտանիք , նախատես ու սրատես եղիք . այդ չար ասպադայն հարսանիքէն և ամուսնութենէն յառաջ զգուշակեցէք . թողէք հարսանեաց զեղխութեան սէտքերը , թողէք զարդուց շուայլական սլերճանքները , ճանչցէք պատուական և սուրբ ամուսնութեան ճշմարիտ պայմանները . որ ոչ հարսանեաց մե-

Ժամերժ պատրաստութիւնքն են, ոչ ոսկին է, ոչ ադամանդ է և ոչ ևս շքեղ զարդերու ցուցամոլութիւնք: Դոքա իբրև փուշ կը հեղձանեն ամուսնացելոց ծաղկեալ սէրը: Մի հաւատաքնոցա, որ այնպէս կը կարծեն թէ կընով արտաքին շքեղ զարդը՝ կը յաւելու սէրը և կը զօրացնէ. ո՛չ, այդպէս չէ. փորձ և աշխարհ վկայ թող լինին, որ զարդն ու պերճանքը սէրը կը նուաճեն. սորա համար է որ շատ անդամ շատ ընտանեաց կեանքէն ծաղիկ սէր կը ցամքի և կը թօշնի, երբ կնով զարդն ու պերճանք պակսին:

Ուստի աղօթել պէտք է այդպիսի ընտանեաց համար որ զդատտանան, ամուսնութեան ներքին ու ճշմարիտ սէրը՝ արտաքին պաճուճանաց հետ չի խառնեն. ստոյգ կշռելով և համեմատելով, որ զարդի պաճուճանքը ամուսնական ամբիժ սիրոյն հետ երբէք կշիռ և նըմանութիւն չունի: Բիւր մեղադրանաց արժանի է այն կինը, որ կը դբժէ և կը մերժէ զսէր, և զարդն առաւել կը խնդրէ: Իսկ բիւր գովութեանց արժանի է այն կինը, որուն համար զարդ, պերճանք, ադամանդ, ամենայն ինչ իւր ամուսին և նորա սէրն է և պատիւը:



Թ.

ԿՈԶՈՒՄՆ ԼԱՐՍԻՆ

ԵԻ

Փ Ե Ս Ա Յ Ի Ն



ԱՅՍ կոչումն սուրբ և նուիրական է, Արարչին տիրական օրէնքն է, Դրախաի օրհնութեան ձայն է, Երկու զուգակցաց միութեան հրաման և հրաւերն է, որով զհարսն 'ի մայրութիւն կը կոչէ, փեսայն 'ի հայրութիւն :

Երկու պսակաւոր ամուսինք այս գորովալի և խորհրդական բարձր անունները նոր կ'ստանան, և տիրապէս այն օրէն՝ երբ իրենց անդրանիկ զաւակը աշխարհի կընծայեն: Շատ յարմար է թէ որ ըսենք, թէ այդ անդրանկածին պտուղն է իւր ծնողաց կնքահայր և անուան նադիրը, որ առաջին նուագ երբ լեզուն կը

բացվի և կը թնթովէ, իւր առաջին սիրաշարժ բարբառը՝ հայր և մայրն է։ Չկան աշխարհիս վերայ այլ անուանք, կամ զանազան վայելուչ և փառաւոր տիտղոսները որ հաւասարին և համեմատին սոյն սքանչելի անուանց հետը։ Թագաւոր, կայսր, իշխան, ժողովուրդ, ազգ-
 ևայլն . այս մեծափառ անուանք իրենց բարձ-
 րանշան տիտղոսներով հանդերձ, ցած ու
 նուաստ են՝ հայր և մայր սիրելի ու պատկառելի
 կոչման առաջ։ Քանզի հայր ու մայր անուանքը՝
 նախասկիզբն արմատ են այլ ամէն անուանց,
 Թագաւոր, իշխան, ժողովուրդ, ազգ. հայր ու
 մայր փարելի անուանց ծնողական շառաւիղ-
 ներն են . որ նոյն միացեալ արմատէն և երկնդի
 բնէն կը բուսնին և կը սփռին աշխարհիս վերայ։

Տես դու, թէ քանի՛ յատկանիշ և խորհրդ-
 դական նշանակութիւն ունին այդ աշխարհա-
 նազ անուանք . սէր, ծնունդ, կեանք, գո-
 րով, գոռանք, գութ, որդեսիրութիւն,
 խնամք, ևայլն։ Երկու նորապսակ ամուսինք
 մինչ երբեմն իբրեւ զաւակ և սոսկ իրենց մը-
 կրտութեան անունով միայն կը կոչուէին . իսկ
 այժմ՝ այդ անուանց վերայ կը յաւելուն նաեւ
 հայր և մայր կոչումն, զաւակ ծնանելով՝ նոցա
 ընկերութեան կեանքին մէջ կը բարձրանայ

իրենց կոչումն և կը միանայ երկնաւոր Հօր հետը, որ տիեզերաց հայր ու հեղինակն է, և որ զԱդամ հայր, և զԻւան մայր իբրեւ նախածնողք մարդկութեան կանուխ ծնաւ Դրախտի մէջ իւր նորաստեղծեալ արարչութեամբ:

Ո՛վ, ի՞նչ զարմանալի է. Երկինք ու Երկիրը իմիասին կը մշակեն ամուսնական և խորհրդական դրախտն: Երկնից Հայր երկնքէն կօրհնէ. սոքա երկրիս վերայ զաւակ կըծնանին ու կածին. այլ չգիտեն թէ ո՞րպէս, Լուս լեր, բնադէտ, դու ևս չգիտես այն խոր ու անյայտ օրէնքները, թէ ինչպէ՞ս մանուկ իւր մօր յարդանդ կը նկարի ՚ի մարդ, և ո՞ր ձեռքն է, որ այդ չքնաղ պատկերը անհուն ձեւերու տիպով կընկարէ: Ամենայն ինչ բնական է, բնական օրէնքով է կասես, ու կը վճռես. որպէս թէ՛ այդ օրէնքները հրաշք չեն մեր տգիտութեան առաջ. կամ թէ այդ յաւիտենական օրէնքներուն վարիչ չիկայ, օրէնք ինքնին կը հրաշագործէ: Ո՛չ, այդպէս չէ, դու ևս խոնարհիր հպարտացող գիտութենէդ, և՛մեզ հետ խոռտավանիր ու հաւատա. որ միայն Երկնից Հօր ձեռքն է, որ մանուկներու փոքրիկ հասակները ՚ի վեր կը քարչէ. Երկրի ծնողք կաթն ու հաց կուտան. Երկնից Հայր բանա-

ւորութեան լոյս և հանճարը . սոքա ձեռա-
գործ ու շինովի հանդերձ կը պատրաստեն .
իսկ նա բնական գեղով զարմանազան կը զար-
դարէ , սոքա մեծ աշխատութեամբ ուսումն և
գիտութիւն կաւանդեն , և նա մանկան փա-
փուկ ըզեղի մէջ խելքն ու հանճար կը զե-
տեղէ :

Ահա այսպէս երկինք և երկիր միանալով
մշտապէս կարարչագործեն մարդկութեան յա-
րատեւող կեանքը . եթէ պահ մի դադրին
դրախտի ընտանեաց մէջ այս արարչագործող
և մշակող ձեռք՝ կեանքը կը մեռնի ու կըսպա-
ռի մարդն աշխարհէս :

Այսչափ մեծ և այսչափ բարձր է հարսին
ու փեսային մայրութեան և հայրութեան կո-
չումն . Երանի՛ թէ մտախորհ լինելով ճանչնա-
լին թէ յո՞ր կոչումն նուիրուած են , և թէ
ինչ նպատակ ունի մարդոյն ամուսնութեան
կեանքը . Շատ ծանծաղամիտ ու կարճամիտ
են նոքա , որ կը կարծեն թէ ամուսնութիւնը
սոսկ մարդոց մի բնական սովորութիւն է ,
սոսկ մարմնոյ հաճոյք է , կամ խաղ ու զբօսանք
և աշխարհիս շահավաճառութեան մէկ հաճո-
յական ձեւը . և կամ թէ բնաւ պէտք չիկայ
հայր և մայր անուան , աշխարհիս վերայ ռեպհա-

կան տուն և ընտանիք կազմելու. ամէն բան անորոշ անխտիր թող լինի, զաւակները՝ ժողովուրդի համարուն, ժողովուրդ՝ մարդկութեան, և մարդկութիւն առ հասարակ աշխարհիս վերայ ապրի այնպէս, ինչպէս անտառին մէջ անասունք և երկնից մէջ թռչունք, որոց ոչ տուն, ոչ ընտանիք, ոչ տոհմական սերունդ, ոչ սեպհականութիւն կան, և այլն :

Նուստ անասնաբարոյ և ամբարիշտ են այդ մոլորամիտ մարդիկ, որ այդպէս կը կարծեն, կը դատին, ամուսնութեան, հայրութեան, մայրութեան և ընտանեկան իրաւունքները ջնջել բառնալ կուզեն մարդկային ընկերուածեանէն. այնուհետեւ այլևս դանազանութիւն չէր մնար խօսուն մարդոց և անխօսուն անասնոց մէջ: Այդ մոլար կարծիքը՝ մարդոց կեանքը բանականութեանէն կը հանէ. ընկերութիւն կերծանէ, քաղաքակրթութիւն կը քանդէ. և կը թողու, որ մարդը լոկ իւր զգայական հաճոյքով վազի և ապրի :

Եթէ մարդոց կեանքը նուստանար այդչափ, չիմանային հայրութեան ու մայրութեան պատիւ. չգիտնային թէ ի՞նչ է մարդոց կոչումն հոգւոյն անմահութիւն և բանականութեան շնորհ, վաղուրեմն պէտք էր որ երթային գըտ-

նէին առիւծին անտառը և աղուեսին որջը . հարկ չէր մնար այլևս տուն ըինել, ընտանիք կազմել, քաղաք հիմնել, ընկերական կեանք վարել և այլն. որոց վերայ փոքր ի շատէ գրեցի Ամուսնութեան յօդուածին մէջ :

Երկու ամուսինք հայրութեան և մայրութեան կոչումէն յետոյ՝ ունին տակաւին իւրաքանչիւր այլևայլ կոչումներ և պարտիքք. զորքս կը թողում հետեւեալ գլխոց մէջ յառաջ բերել ըստ պատշաճի նիւթոյն . միայն աստ չեմ մոռանար յիշել, որ այդ երկու նորապատուաստ Արմաւենիքք պէտք է ամենայն խնամով և ամբիժ սիրով պատատեն զիրար, հարսն իւր համեստ քողով, փեսայն իւր բաց ճակատով . եթէ մէկն արեւ է և միւսն լուսին, երկուքն ևս առանց ստուերական բժի պէտք է փայլին անարատ սիրոյն պարզ ճառագայթներով :

Հարսին հաւատարիմ նշանաբան և բուն բարոյական և արժանաւոր օժիտը սէրն է միայն, սէր, որ անխառն է, անկեղծ է, և արտաքուստ շարեալ չէ . սէր, որ խանդակաթ սրտով ու հողւով կը միանայ սերելոյ և կեանք պահելոյ համար, և այլ ուրիշ նպատակ չունի : Աշխարհիւ բոլոր ադամանդները . բոլոր զար-

դուց պերճանքները , բոլոր հարստութեան
գանձերը թէ 'ի կշիռ բերես , ամուսնական
սիրոյն հետը չեն հաւասարիր . և երբէք ար-
ժանաւորութիւն չունին այդ նիւթական օժիտ-
ները բնական ու բարոյական սիրոյ օժիտին
տեղը բռնել :

Հարսին նուիրական պարտիքն է , որ նիւ-
թական օժիտէն աւելի հսկէ իւր բարոյական
սիրոյ օժիտին վերայ , չտալ երբէք զայն՝ կողո-
պուտ , եթէ միանգամ կողոպտուեցաւ , այ-
նուհետեւ շատ դժուարին կը լինի զայն դար-
ձնել վերստին : Նոր ամուսինք իբրեւ բա-
րոյական ճարտարապետ պէտք է որ սիրոյ
հիմն ամրապէս ձգեն . եթէ առաջին անգամ
քանդուի , այլ ևս հազար օժիտ կարող չեն զայն
հիմնել ու հաստատել :

Ամուսնական սէրն անդին է , անդիւտ է ,
և քան զմահ զօրաւոր է . իւր կոչումն սուրբ և
խորհրդական է , նորա պատկեր պարզ և մա-
քուր է . թող չաղարտեն նորա պայծառ երեսը
սիրոյ այլանդակ վիպասանները : Սիրոյ ճշգրիտ
պատկերահան Սողոմօն է . վայելուչ է որ հար-
սըն ու փեսան փոխադարձ սիրոյ ձայնով եր-
գեն առ միմեանս նորա խորհրդական երգը .
' Դիր զիս իբրեւ զկնիք 'ի վերայ սրտի քս ,

և իբրեւ զմատանի՝ ի վերայ բազկի քո, վասնզի հզօր է սէ՛ր իբրեւ զմահ, Այո, հզօրագոյն է սէր երկու ամուսնաւոր սիրելեաց մէջ, երկու շնչով կը շնչէ, երկու սրտով կը միանայ, երկու լեզւով կը խօսի, երկու ոգւով կապրի, երկու կեանքով կը զօրանայ. եթէ մին պակասի՝ սէր կը մեռնի. զի սիրոյ կեանքը երկու սրտից միութիւնն է:

Ուրեմն ամուսնացելոց մեծ կոչումն և պարտիքն այն է, որ երկուստեք կողմէն սիրոյ միացուցիչ վէճն անշարժ և անբաժանելի պահեն. ոչ ոք կարող է այդ վէճը շարժել, եթէ ինքնաշարժ լինելով չգլորի: Նոր ամուսնացելոց սէր դարնան եղանակն է. նորատունկ դրախտ է. ծաղկազարդ բուրաստան է. զոր ամենայն խնամով պէտք է կանանչ ու մշտադալար պահել. և չթողուլ երբէք, որ կամ ներքին ատելութիւն և կամ օտարաշունչ նենդութեան խորշակը փչէ ու խամրէ սիրոյ կանաչութիւնը. և թօթափէ ամուսնութեան դրախտի վարդի թուփն իւր սոխակովն հանդերձ. ինչպէս հին բանսարկուն Եդեմ դրախտին մէջ Աստուծոյ նոր ընտանիքը դաւաճանեց, մահ բերաւ աշխարհը: Գիտնալ պէտք է թէ այդ բարակ սեւ օձն՝ սիրոյ և միութեան յաւիտեանական ոսոխն ու թշնամին է:

Յիսուս սպաննեց հին օձն , բայց նորա օրինակին հետեւող արբանեակները դեռ կը շրջին աշխարհիս վերայ . և սողալով կը մտնեն ընտանեկան դրախտի հարսնարանը , թոյն թափելով հրապուրիչ լեզուով , սիրոյ կեանք և քաղրութիւն 'ի մահ 'ի դառնութիւն կը փոխեն :

Ուստի ամուսնասէր փեսայն , որ ընտանեկան համեստութեան և հաւատարմութեան առաջին հսկող պահապանն է , եթէ կուզէ , որ ազատ մնայ օձերուն խորամանկութենէն՝ թող նախազգոյշ լինի , յիշելով դրախտի պատմութիւն և արկածն . յորում այն պահուն մէջ Նւային կը մօտէր թելադիր օձն , երբ նա միայնակ կը շրջէր ու կղբօսնուր դրախտին դաւաստանը ու կը դիտէր մի առ մի գեղազան ծառոց պտուղները : Նա յայնժամ հրապուրեցաւ , երբ տեսաւ մի նոր ծառի պտուղը . որ հաճոյ էր աչաց հայելոյ և գեղեցիկ 'ի տեսանել :

Աշխարհ իրաւունք կուտայ փեսային , որ իւր հարսին ճանապարհը հսկելով 'շրջափակէ . այլ ո՛վ պէտք է փակէ ու կապէ փեսային ճանապարհ և ոտքը . երբ նա արձակ է , ազատ է , կը շրջի ամէնուրեք : Հաւատարմութիւնը հաւասար է ամուսնական պարտուց և իրաւանց

մէջ . և արդարութիւն բողոք կը բառնայ , եթէ փեսայն ինքն ևս պահապան չը վնի իւր անձին վերայ , չփակէ իւր անջքը հրապուրիչ առարկայէն՝ նոյն առաքինութեամբ մրցելով . և կրից ծարաւով չխմէ օտար աղբիւրին ջուրը , բաւ համարելով իւր սեպհական աղբիւրը ինչպէս կը խրատէ Սողոմօնին առակը : Ամուսնական հաւատարմութեան սուրբ պարտիքը ամենայն հաւատարմութեամբ պահելու համար բաւական չեն միայն աչք և հսկողութիւնը . այլ առաւել ևս լուսաւոր և մաքուր խիղճ , պատուոյ զգացումն , ապագային ամօթ և չարաղէտ հետեւանքն ևայլն :

Եւ ինչ են այդ ընտանեկան աղէտաբեր հետեւանքները . գնա՛ ի դատարանն և կը տեսնաս . զի այդ ամօթալի գործոց վախճանը մինչեւ հոն կը հասնին . որ երբ պատահին երկու ամուսնեաց մէջը՝ սէրն անդէն կը մեռնի , միութիւն կը քակուի , նախանձուն կրակը կը խանձէ սիրտերը , երկու ամուսինք իրարու դէմ անհաշտ ատելութեամբ կը վարին . և այնուհետեւ տես դու , ընտանեկան կազու կռիւ կ'սկսի . բողոք , դատաստան , մի զմիով անպատկառ չարախօսութիւն , և մերթ ևս չարաչար զրպարտութիւն , չխնայելով բնաւ ամուս-

նական պատուոյն , ամենայն ինչ մերկաարանոց հանելով, ընտանեկան քօղին տակ ծածկըուած ամօթն և այլն : Հուսկ ապա այս հետեւանքներուն վախճան կուգայ պատիժ , տոյժ , և տան բաժանումն . որով ընտանեկան քաղցրը ու խաղաղ կեանքը թէ նիւթապէս և թէ բարոյապէս ապերջանիկ կը լինի . բաժանեալ ամուսնեաց պատիւն ու վարքը կաղարտի ընկերութեան մէջ և եկեղեցւոյն առաջ :

Եթէ կան ամուսնական կեանքին մէջ ուրիշ շատ դառնահամ ճաշակները . զոր օրինակ աղքատութիւն , թշուառութիւն, զրկանք, զաւակաց կորուստ, և մերթ ևս նոցա, ստահակութիւն և աշխարհիս այլ և այլ պատահար ճախորտութիւնք և այլն . որք շատ անգամ ընտանիքները մոխրի վերայ կը նստեցնեն . սակայն երբ ամուսնեաց սէր կենդանի է , քաղցրը է , այդ ամէն դառնութիւնները կանուշացնէ , մոխրին կեանքը , դրախտ կը լինի , ապերջանկութիւնը՝ երջանկութիւն կը դառնայ :

Իսկ երբ մեռնի ու դառնանայ մտերիմ լծակիցներու սէրը՝ այնուհետեւ աշխարհիս քաղցրութեան ամբողջ ճաշակները , երջանկութիւն իւր ամէն հանգամանքներով թէ իմիասին դանկարող չեն դառնացած սէրը յանուշութիւն փոխել :

Եթէ այսպէս և այսչափ աղետարեր է ամուսնական սիրոյ մահն ու դառնութիւն . որ իբրեւ օձահար թոյն ամբողջ ընտանեկան կեանքը կը թունաւորէ . ուրեմն ո՛վ Հայոց հարսներ և փեսաները , ձեր մեծ կոչումն և հաւատարմութեան սուրբ պարտիքն այն է . որ անմեղութեամբ չըլիք աշխարհիս ընտանեկան դրախտին մէջ . խղճի արթնութեամբ խոյս տուէք այն ազատաչըլիկ մարդոց խորամանկութենէն . որ եթէ ուսեալ վիպասան են՝ դրախտի օձէն աւելի գիտեն խորամանկել . և թէ ռամիկ ու գռեհիկ են՝ գիտեն չամաչել :

Եւ դուք մանաւանդ , Հայոց դաղթական ընտանիք , որ քաղաքակրթութեան մօտ կապրիք , որ թերեւս մերթ կը յիշէք Հայաստանի հարսներաց քօղն ու եօթնամեայ անխօս լըռութիւն . և փեսաներու յօտին կացեալ գօտէպինդ բարեւն , որ պատրաստ կը կենայ ըստասաւորելու հիմար թէ և ազնուական լինի . չգիտեմ ձեզ ի՞նչպէս կը թուի Հայկական ընտանեաց այս կերպն . կը հաւնի՞ք թէ կարհամարհէք իբրեւ վայրենութիւն համարելով նոր դարուց ազատ աշխարհին առաջ :

Այնպէս համարեցէք , ես կը լռեմ . բայց դուք կը հաւատա՞յք , և կը կարծէ՞ք , որ ազատ

աշխարհին ազատութեան ճշմարիտ զաւակներըն էք : Դու ծանիր զքեզ , և ես գիտեմ քո այժմեան կեանք և կրթութիւն . դեռ խանձարուրէն նոր ելար , ազատութիւն կը կանչես . դեռ գայթ 'ի գայթ դետնի վերայ ուղիղ քայլել չը գիտես՝ ազատութեան չուանին վերայ ելեր կը ճօճա՞ս , չունելով ձեռքդ դաստիարակութեան այն ձողն ու կշիռ . որով կարենաս անկասկած թաղալ ազատութեան բարակ լարին վերայ :

Ուշ կը դնէ՛ք , Հայոց ազատասէր ընտանիք , ձեզ քանի մի խրատ տամ ու կնքեմ այս ճառը : Չեմ խօսիր ձեզ , որ հին թանձր քոչ ձգեցէք նոր հարսին գլխուն վերայ , որ նա կորանայ ու չկրնայ ազատութեան լոյս տեսնալ , և կամ ընտանեկան կեանքին մէջ կարգել խօսուն մարդոյ լեզուն , որ նա կամաւ համր լինի : Չեմ ասեր որ փեսայն ևս գօտէբարեւ ծառայէ ստորակարգ սպասաւորի մի պէս :

Այլ այս միայն կասեմ քեզ , որ ծայրայեղ ազատութեան չուանէն վար իջնաս , դու ինքնին գիտես թէ վստահ չես տակաւին համարձակ խաղալու . դու տեսար և կը տեսնաս թէ քանի՛ քանի՛ ընտանիքները այդ հրապուրիչ չուանէն վար ինկան ու ջախջախուեցան . որոց կորստական փորձը թող քեզ խրատ լինին :

Այլ գիտեմ, ու քաջ համոզուած եմ, դու միանգամ այդ չուանին վերայ ելար . աշխարհի խրատ և Աւետարան կարող չեն զքեզ վար իջուցանել . դու այդ ազատութեան խաղ պիտի շարունակես առանց դորա վտանգէն խուսափելու , և կասես , թող տուէք զիս ազատ , ազատաբար խաղամ և խաղալով վիմ , որո

Առաքինութեան ասպարէզ ելած չես , որ թոյլատրէի և ներէի քեզ այդ , ոչ ոք կը հաւատայ թէ այդ օրինակ միջոցը զքեզ ազատութեան մէջ կը կրթէ . թերեւս ասել կուղես , թողէք , որ մեծամեծ մնասներով և զոհերով խրատուիմ :

Աւա՛ղ , դեռ բաւական չե՞ս համարիր թէ անցելոյն և թէ ներկային մէջ Հայոց ընտանեկան զոհերը . աւելի ապահով , բարի , և բնական չէ՞ , որ նախ բարւոք դաստիարակութեամբ կրթուիս . ազատութեան դժուարին արուեստին և իւր ամէն պայմաններուն մէջ քաջավարժ լինիս . և ապա վստահապէս ելնես այդ ազատութեան չուանին վերայ . յայնժամ ցոյց տաս աշխարհին առաջ թէ՛ Հայոց ընտանիքն ևս գիտէ պարկեշտութեամբ ազատութեան խաղ խաղալ առանց կործանելու :


Թ.

ՓՈՒԿԱԳԱՐԶ ՊԱՐՅԵԲԵ

ԵԻ

ԻՐԱԽՈՒՔ

Ա Ռ Ն Ե Ի Կ Ն Ո Ջ



ՏԻԵՋԵՐԱՅ կարգադիր Արարիչը՝ բնու-
թեան անյեղի օրէնքով ինչպէս աշխարհիս
ամէն բան կշռով ու չափով կարգադրեր ու
հաստատեր է . նոյնպէս առն և կնոջ պարտիք
և իրաւոժողը լիովին բաժաներ է այն օրէն երբ
մարդն աշխարհիս վերայ ծնաւ : Ոչ ոք կարող
է նախախնամութեան կարգադրութիւն շրջել
և փոխել :

Նորա իմաստութիւնն է , որ զկին՝ կին ըստերղծեր է , և տուեր է նմա ՚ի բնութենէ ծնողական բուռն սէր , մեծագորով սիրտ , դիւրաշարժ զգացումն . որպէս զի զաւակ ծնանի մայր լինի , մայրական սիրով ու կաթով սնուցանէ զայն , եթէ չը լինէր կնոջ սրտին մէջ այս հզօրագոյն սիրոյ զգացումն , նա վաղուց կը խուսափէր ամուսնական կեանքէն , յիշելով ու հոգալով երկանց ցաւն ու վիշտ :

Նախախնամութեան ստերղծող հանճարը կինը լի սիրով և փափկութեամբ կազմեր է , իսկ այր մարդը հուժկու բազկով և ուժով . նա ևս հայր և ծնող է , սէր և ծնողական դորով ունի միայն թէ կնոջ և մայրական սիրոյն հետը կարելի չէ համեմատել :

Ուստի այր և կին իրենց բնական յատկութեամբ և չափով միանդամայն Աստուծոյ և աշխարհիս ընդհանուր օրինաց համաձայն պարտք և իրաւունք ունին , և այս այն օրէն կ'սկսի երբ սուրբ ամուսնութիւնը զայր և զկին իրարու հետ կը կապէ կամաւոր և ազատ դաշնադրութեամբ :

Եւ ի՞նչ է այս փոխադարձական պարտք և իրաւունքը . որ ընդհանրապէս երկու իրաց մէջ կը կայանայ : այն է բարոյական և տնտե-

սական կենաց մէջ՝ հաւասար արդարութեամբ ։
Բարոյական առաջին մեծ պարտիք առն և կը-
նով՝ ամուսնական սէրն է ։ զոր ամուսնութեան
իրաւունքով փոխադարձարար կը պահանջեն
իրարմէ ։ զի որչափ սիրէ կինը՝ նոյն չափով
իրաւունք ունի սէր պահանջել իւր ամուսինէն ։
և որչափ սիրէ այր՝ նոյն չափ խանդակաթ սէր
կը պահանջէ իւր կնոջէն ։ միայն այս փոխա-
դարձ հաւասար սէրն է ։ որ սիրոյ կենակից
երկու ամուսինները ՚ի միութեան կը պահէ ։
որոց վերայ նախորդ ճառին մէջ խօսեցանք
բաւական ։ աստ միայն պէտք է ուրիշ Յնացած
մասերու վերայ խօսիմ՝ որ ամուսնական և
ընտանեկան կեանքին վարչութիւնն է ։ և այս
բարոյական վարչութեան պարտք և իրաւունքը
սուրբն Պօղոս այս կերպով կը բաժանէ ։ Նա
այր մարդը՝ գլուխ կանուանէ կնոջ, որով իրա-
ւունք կուտայ ։ որ գլուխ տիրէ, վարէ ։ հրա-
մայէ ։ և այլն ։ Կնոջ իբրեւ պարտքը՝ հնազան-
դութիւն կորոչէ ։ բարձր և խորհրդաւոր օրի-
նակ մի տալով ։ Թէ ինչպէս եկեղեցին՝ Յիսու-
սին հնազանդ կը լինի ։ նոյնպէս և պէտք է ։
որ կանայք հնազանդ լինին իրենց էրիկներուն ։
Թող ոչ ոք այնպէս կարծէ ։ Թէ իրաւախօս
Առաքեալը ինքնին իբրեւ հեղինակ և դատա-

ւոր այնպէս կը վճռէ ամուսնացելոց պարտք
և իրաւունքը :

Ո՛չ . Պօղոս , որ միշտ ֆրիստոսի հողւով
կը խօսէր , այս վճռին դասը՝ հին դրախտի
պատժական վճռէն կուսանի և կաւանդէ եկե-
ղեցւոյն : Քանզի Տէր Աստուած երբ յանցա-
պարտ նախակնոյ համար պատիժ տնօրինեց .
որ ցաւով ու տրամութեամբ ծնի իւր զաւակ-
ները՝ յարեց նաև այս բանը , թէ « Առ այր
դարձ քո լիցի և նա տիրեսցէ քեզ » : Չգիտեմ
մարդ կարո՞ղ է իմաստասիրել , և այս բացորոշ
խօսքէն հանել սոյն հետեւութիւնը . այսինքն
եթէ մեր նախամայր կին առաջին մեղապարտ
չը լինէր՝ անշուշտ իւր հաւասար ազատութեան
իրաւունքը պահելով՝ Ադամայ տիրապետու-
թեան տակ չէր ստրկանար :

Բայց Յիսուս և Աւետարանը կնոյ կորուս-
եալ իրաւունքը դարձեալ իրեն տուին . որոյ
համար կը յայտարարէ նոյն Պօղոս թէ՛ « Այ-
սուհետեւ չիք խտիր , ոչ արուի և ոչ իգի .
զի ամենեքեան դուք մի էք 'ի ֆրիստոս Յի-
սուս » : Որով ցոյց կուտայ թէ ամէն ֆրիս-
տոնեայ հաւատացելոց պարտք և իրաւունքը
միեւնոյն է , հաւասար է Աւետարանի ազատ կը-
րօնին առաջ : Պօղոսին այս բանը , որչափ որ

կինը իւր հին ստրկութենէն կը հանէ . այլ չի ջընջեր նորա հնազանդութեան պարտքը , որ բնական և բարոյական է :

Իսկ Եւրոպիոյ քաղակրթութիւնը, որ դարձեալ Քրիստոնէութեան շնորհիւ յարգեց այս ազատութեան սկզբունքը՝ անդր քան զչափն բարձրացոյց կնոջ արժանաւորութիւնը, ճանչցաւ նորա պատիւն և իրաւունքը , այն ինչ արեւելեան ազգաց մէջ դեռ շատ մասամբ ըստորկացած է խեղճ կնոջ վիճակը իւր ամէն իրաւունքներով :

Խօսինք այժմ՝ Առաքեալը երբ կնոջ համար հնազանդութիւն կը պատուիրէ , արդեօք այնպէ՞ս է . ինչպէս ժողովուրդը՝ բռնակալ իշխանին , զինուոր՝ զօրապետին , օտրուկ ծառայն՝ իւր տիրոջ : Ո՛չ , այդպէս չէ . կին ոչ բռնակալութեան հպատակ է, ոչ զինուոր է և և ոչ ստրուկ ծառայ : Կին իւր ամուսնուոյն ազատ ընկեր ու հաւասար լծակիցն է ամենայն իրաւամբ : Ուստի կին ազախին չէ . այլ տան տիկին և թագուհի . թէպէտ եւ այր մարդ թագաւոր լինի , իշխան լինի , տէր և գլուխ լինի , բնաւ իրաւունք չունի և կարող չէ այնպէս իշխել , ինչպէս կիշխեն աշխարհիս այլ և այլ տիրող գլուխները իշխանական գաւազա-

նով, վասն զի ընտանեկան կեանքին ու վար-
 չութեան մէջ իշխանական սուր, ոստիկանու-
 թիւն և դաւազան չկայ. այլ միայն սէր,
 խնամք և միութիւն. Եւ ինչպէ՞ս կարելի է,
 որ այր մարդ բռնակալ լինի կնոջ վերայ, չա-
 րաչար ճնշէ ու նուաճէ իւր կեանքն և ընկերը,
 երբ տիրապէս ճանչնայ թէ կինը բարոյապէս
 իւր մարմին, իւր սիրտ և ոգին է, և ամուս-
 նական կապակցութիւնը՝ մի թիւ է, երկու
 չէ. և միթէ հնա՞ր է, իրաւունք է, որ մարդը
 ինքզինք և իւր իսկ անձին ազատութիւնը իր-
 բեւ օտարի՝ բռնակալէ, և մինչեւ իսկ հարուա-
 ծէ, չարչարէ և խեղդէ, կարծելով թէ իրա-
 ւունք ունի. որովհետեւ ինքն զօրաւոր և ու-
 ժաւոր է թէ բազկով թէ բանիւ. և միանգա-
 մայն աշխարհիս ատեանը իւր ձեռքն է. եթէ
 կին իւր զրկանաց համար բողոքէ, ո՞վ է իւր
 իրաւունքը լսող և դատաստան տեսնող, դարձ-
 եալ ինքն է դատաւոր ու վճռատուն: Հոն
 չէ արդար Յիսուս, որ անտէր կնոջ դատը
 պաշտպանէ և յանդիմանէ փարիսեցւոց անի-
 բաւութիւնը, որ կեղծաւորեցան իբրև օրի-
 նապահ, մեղաւոր կին մի նորա ատեան հանել
 ուր տեսող Դատաւորին առաջը՝ իրենք կնոջմէն
 աւելի յանցաւոր ու մեղաւոր էին:

Սուրբն Պօղոս այր և կնոջ դատաստանին մէջ անիրաւ դատաւոր չէ . երբ մի կողմէն կընոջ կը պատուիրէ , որ նա հպատակ ու հնազանդ լինի . միւս կողմէն ևս խրատելով կը յորդորէ . « Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի և զանձն իւր մատնեաց վասն նորա » : Որով կուսուցանէ բարձրախօս Առաքեալը . որ այր մարդիկ Յիսուսի սիրոյն և անձնանուիրութեան հետեւելով նորա չափ առաքինանան . ընտանեաց սիրոյն և ազատութեան համար մինչև ի մահ անձնանուէր լինին :

Առանց խորհուրդի չէ երբ անձնուիրութեան այս մեծ պարտիքը՝ այր մարդոյն բաժին կը հանէ Առաքեալը . թերևս այսպէս կը դատարնա . որ աշխարհիս իշխանական իրաւունք , սուր , կռուոյ ասպարէզը՝ այր մարդոց ձեռքն է , ու փառաց մրցանակը՝ նոքա միայն կընդունին . պարտաւոր են ընտանեաց համար մեռնիլ ինչպէս կը մեռնին հայրենեաց համար . և բարոյական հայրենիքն՝ ընտանիքն է : Այրեր միայն չեն մեռնիր . կիներն ալ կը մեռնին , երբ հաւատն և կրօն ի զէն կը կոչէ . միթէ չմեռա՞ն ու գերի չվարեցա՞ն Ե. դարու՝ Հայոց առաքինի կանայք . որոց առաքինութեան հան-

դէս պատմագրելով կը հռչակէ Սուրբ Եղիշէ
Հայրն , և Եկեղեցին շատ կին նահատակներն
ունի :

Ուրեմն պէտք չէ բոլորովին տկար համարել
զկին , կարծելով՝ թէ նա մի հողակերտ և դիւ-
րաբեկ անօթ է . նա երբեմն հրացեալ երկաթ
կը դառնայ երբ Սուրբ Կրօնին , ամուսնոյն և
զաւակաց սէր զինքն կը բոցավառէ ու կը մզէ
առ ամենայն վտանգ :

Ամուսնական միութեան մէջ այր և կինը՝ մի
մարմին է . այլ կինը գլուխ չէ . կը հաւանինք
հողեխօս Առաքելոյն , թէ կնոջ գլուխ այրն է .
սակայն ո՛վ կարող է մտաբերել թէ ուրեմն կինը
նորա ոտքն է , պատուանդան է և այլն : Ո՛չ ,
կին այր մարդոյն նուաստագոյն մասն չէ . այլ
նորա կողի բուն միջակէտէն է . նորա սրտին
հողւոյն մօտ . յորմէ Արարչապետին իմաս-
տութիւնը խորհրդով մի ոսկր առաւ և ամուս-
նական մարմինը լրացուց , Եթէ համարիմք ,
դարձեալ այր մարդ իբր տէր ամուսնական
կեանքին մէջ , միթէ իրաւօ՞նք ունի խստու-
թեամբ իշխել , տիրապետութեամբ վարիլ ,
կամ կարծել թէ կինը իւր ստացուածն է և
կամ արծաթագին ծառայ : Եթէ զօրութիւն
ունի , բուռն են իւր բազուկները . նա մի թէ

իրաւո՞ւնք կըստանայ ջարդել ու փշրել իւր կողին մի տկար ոսկրը . իւր կեանք բառնալ ու շիմանալ : Եթէ կը համարի զինքն իբրև հանճարեղ , իմաստուն , խոհական , քաղաքագէտ , աշխարհավար և այլն . իւր պարտիքն է իբրև նախաթոռ բաղմելով ընտանեկան դերգաստանին գլուխն՝ կինն ևս իւր խորհրդակից առնելով կառավարեն իմիասին ընտանեկան կեանքը :

Իսկ եթէ իրաւապէս կը ճանաչէ , որ կինք իւր կենակից ամուսին է , մինչև ցմահ դաշնակից ընկերն է . իւր աշխատութեան հաւասար լծակիցն է , բախտին ու ապերջանկութեան մէջ անբաժանելի կարեկիցն է , իւր մահուան ու շիրմին վերայ լացող ողբերգուն է , իւր թողուցած որբ զաւակներուն խնամատար մայրն է , իւր գերեզմանն օրհնող և յիշատակն անմահ պահող ջերմեռանդ այրին է . ուրեմն պէտք է գիտնայ , երբ ամուսնասէր կինը այս պարտիքները կատարէ , այլ ևս ի՞նչ պարտք կը մնայ :

Երկու ամուսնացելոց փոխադարձական պարտիքները մինչև ՚ի գերեզման տեւելով անդրևս կանցնին : Վերը պահանջեցինք այր մարդէն սէր և անձնանուիրութիւնը . միանգամայն զերկուցինք , որ իւր ուժը և զօրութիւնը չը չափէ կնոջ տկարութեան հետը . պէտք է իրաւապէս

պահանջենք, որ կինն ևս իւր չափով և ուժով անձնանուէր լինի ու հաւատարմապէս հատուցանէ իւր փոխադարձ պարտիքները : Սէր՝ սիրոյն փոխան, անձն՝ անձին փոխան, կեանք՝ կեանքին փոխան, խնամք՝ խնամոց փոխան, սիրտ՝ սրտին փոխան, հաւատարմութիւն՝ հաւատարմութեան փոխան :

Թող այս, կնոջ համար մի առանձին պատուէր եւս կայ, որ է Առաքելոյն պատուիրած կատարեալ հնազանդութիւն դէպ ամուսին իւր : Վասն զի երբ այր մարդուն իրաւունք չը տուինք որ նա բուռն դաւազանով չիշխէ, նոյնպէս իրաւունք չենք տար կնոջ, և ոչ մի օրէնք այդ իրաւունք կարող են տալ, որ կինը առանց դաւազանի չհնազանդի :

Այո՛, կնոջ պարտիքն է կատարեալ հնազանդութիւն առանց բնաւ ստրկանալոյ. չէ թէ այն պատճառաւ որ նա ընտանեկան կեանքին մէջ անոյժ և անզէն թողուած է, այլ առաւել բնութեան և խղճի օրէնքը զայս կը պահանջեն ի կրնոյէն :

Այս աշխարհիս վերայ ուժովներ կը տիրեն թէ բարոյապէս և թէ Ֆիզիքապէս, և տկարները բնականաբար կը խոնարհին : Նոյն կը տեսնամք նա և ընտանեկան կեանքին մէջ. յորում

կինը ստիպուած է հպատակել և խոնարհել :
Վասն զի ինքն չէ թէ ուժին կողմանէ միայն
տկար է , և զինակիր բազուկ չունի . հապա
մտաւորական զօրութիւնն ևս անհաւասար է և
նոյն մասին մէջ ևս կերեւի յայտնի իւր տկա
րութիւնն :

Մորա համար այր մարդիկ կը դատեն զինքն
իրբև կարճամիտ , անխորհուրդ և մանաւանդ
անհոգ և անհեռատես : Միայն բացառութիւն
համարել պէտք է այն մեծ դիւցազնուհի կի
ները , որք թէ հին պատմութեան և թէ նոր
քաղաքակրթեալ աշխարհին մէջ հանճարով ու
քաջագործութեամբ փայլեր են և այսօր նոր ՚ի
նորոյ կը փայլին Նւրոպիոյ այլ և այլ ազգաց մէջ
իրբև դաստիարակ , իրբև մատենագիր և իր
բև ժրագլուխ և տնտեսող կին :

Ոչ ոք կը տարակուսի թէ կինն ևս այր մար
դուն պէս բանաւոր ու մտաւոր է : Եթէ մշակուի
նորա միտքը՝ նա կարող է հաւասար յառաջա
դիմել . բայց նկատել արժան է , որ կինը իւր
տկար ոտքով մինչև մի փոքրիկ բլուրի գլուխ
հազիւ կարող է բարձրանալ . կին կարող չէ
Նեւտոն և Հերշել լինել երկնից աստեղատունը
դիտելու համար : Գիտութիւնը տաժանելի աշ
խատութեան վաստակ է . արդէն երկանց վըշ

տով չարչարեալ կինը յանձն կառնո՞ւ այդ գիտութեան ցաւոց երկունքն ևս կրել . և միթէ իրաւո՞ւնք է , որ մայր մռնայ կաթն մանկան , սէր ու դժուանք զաւակաց և պարապի բարձրագոյն գիտութեան , բաւ և շատ է նորա համար դաստիարակութիւն , ընտանեկան կրթութիւն և տնտեսութիւն առտնին կառավարութեան :

Այլ ճանչնալով մեր աշխարհ , մեր ժողովուրդ և մեր կեանքը՝ հարկ է , խոստովանիմք , որ այր մարդիկ ևս պակաս կարճամիտ չեն կնոջն . և նոցա այս կարճամտութիւն պիտի տեւէ , քանի որ մայրեր կարճամիտ են . և ո՞վ չի գիտեր , թէ կարճամիտէն՝ կարճամիտ կը ծնանի , լուսաւոր և քաղաքակիրթ աշխարհը սորա դարման միայն այս գտաւ . որ նախ մայրերու կարճամտութիւն կրթէ ու բժշկէ դաստիարակութեամբ . որպէս զի նոքա կատարեալ և առողջամիտ զաւակ ծնանին :

Երանի՛ թէ երկու կարճամիտ տմուսիները իրարու չպատահէին . որով ընտանեկան կեանքը կը դառնանայ իսպառ . Եթէ միայն կին կարճամիտ լինի և այր մարդ բանգէտ և խոհեմ . իւր վերայ կը մնայ բարոյական մեծ պարտիքը , որ ամենայն խնամով ու երկայնամիտ համբ-

բութեամբ դարման տանի իւր կենակցին կարճ-
մտութիւնը բժշկելու համար :

Իսկ եթէ այր մարդն է կարճամիտ , որ յու-
լով անդամ կը պատահի . յայտ է յայնժամ այդ-
պարտքը իմաստուն և խոհեմ կնոջ ըրածին կը
մնայ . որ քաղցր հոգատարութեամբ դարմանէ
իւր ամուսնոյն կարճմտութիւնը :

Բարի և ժրադուլիս կինը , միայն արժա-
նաւոր ամուսնոյն համար իւր բարոյական պարտ-
քերը չի կատարեր , այլ և նոյն իսկ անարժանին
համար . որ չէ թէ միայն բնապէս կարճամիտ
է , այլ և խստաբարոյ , դատան և ստամբակ
մարդ է . այսպիսոյ համար ևս իւր վայելուչ
պարտիքները նա չի մոռնար . այլ 'ի դորժ կը
դնէ և կը ջանայ միշտ իւր ընկերին խոստութիւ-
նը ողոքելու . որպէս զի չխուովի , ամուսնական
սէր , չը վրդովի տան խաղաղութիւն , և չը բամ-
բասուի ընտանեկան պատիւն :

Հարկ չէ կրկնենք . ինքնին յայտնի է թէ
սիրաշահական այս պարտիքները միայն կնոջ
յատկացեալ չեն . զի մերթ ևս բարի այր մտր-
դուն կը պատահի կին չար , կամակոր , լեզուանի
ու անզգամ . յորմէ Սիրաք իմաստուն լաւ կը
համարի խոյս տալ և անապատին մէջ անընկեր
ապրիլ : Սոսկայն ճշմարիտ Գրիստոնէութեան

սիրոյ և մարդասիրական օրէնքը պարտք կը դնէ ամուսնացողին վերայ, որ իւր զընկերը ողոքելով շահի : Մանաւանդ երբ Աստուծոյ Առաքեալը կը խրատէ , որ հաւատացեալ ամուսին՝ իւր անհաւատ ամուսին շարձակէ . թէ այր լինին նոքա և թէ կին : Որչափ հնար է , պիտի ջանան նոքա միացեալ կեանքը չի բաժանել . անբաժան կենակցութեամբ ապրիլ և միշտ իրարու պակասութեանց համար ներողաբար վարուելով զիրեար ողոքել ու շահել թէ ամուսնական սիրոյն և թէ ընտանեկան օգտին ու բարւոյն համար :

Բաւ կը համարիմ այսքան , թէ առն և թէ կնոջ բարոյական պարտուց և իրաւանց մասին համար . այժմ կը դառնամ փոքր՝ի շատէ գրել նիւթական և տնտեսական մասին վերայ . յորում մի և նոյն փոխադարձ պարտիքներով պէտք է վարուին երկու ամուսինք հաւատարիմ աշխատութեամբ :

Երբ կը տեսնամ հողագործի արտի մէջ , որ մի դոյգ ամուրակից եղները լծուելով գետին կը հերկեն , երբ կը տեսնամ , որ միակտուր լծընփայտ՝ եղներու վզի վերայ հաւասար դրուած է . որպէս զի հաւասար քալեն և հաւասար ուժով հարօրը քաշելով վարեն արան . ճիշտ այս

բնական օրինակէն՝ բարոյական օրինակ հանելով, կարի՛ պատշաճ է ընտանեկան կեանքին մէջ թէ առն և թէ կնոջ աշխատութեան պայմանները որոշել ու չափել :

Ընտանեկան ազարակին մէջ երկու դժբաւոր աշխատաւորներ կան . որոց համար ցփնչ բառին նշանակութիւնը շատ յարմար ու ճիշտ է . որ ցոյց կուտայ առն և կնոջ հաւասար կեանք և ընթացքը :

Այր մարդ արտաքին վաստակաւորն է , և այս է ՚ի սկզբանէ անտի նորա աշխատութեան բաժին ու պարտիքը : Իսկ կին մարդը՝ տան տիկինն է . և նորա պարտիքն է արդար ու հաւատարիմ տնտեսութիւն : Այր՝ հաց ու հանդերձ կը բերէ , կինը կը մատակարարէ . այր՝ շահավաճառութեան խանութ կերթայ, կին առ տնին գործոց մէջ կզբաղի . այր՝ զանազան դժուար արհեստներու մէջ մարմնով ու մտքով միանգամայն չարաչար կը խոնջի , իսկ կնոջ մեծ ու առանձին արհեստն է տան կառավարութիւն , իմաստուն տնտեսութիւն , և մայրական դաստիարակութիւն :

Եթէ իրաւապէս դատելով խօսինք, աշխարհիս ընդհանուր կեանքին մէջ այր մարդոց աշխատութեան բաժին շատ ընդարձակ , ծանր ,

դժուարին ու տաժանակիր է . մինչդեռ կնոջ
 բաժին անձուկ շէնքին տակը շրջափակուած՝ մի-
 այն առ տնին աշխատութիւնն է : Թող այս , այր
 մարդ քաղաքականութեան մէջ մեծամեծ ծանր
 հոգերով կղբաղի . աշխարհ կը կառավարէ ,
 ղէնք կառնու , պատերազմի դաշտ կերթայ ,
 արիւն կը թափէ , հայրենիքը կը պաշտպանէ
 և այլն : Մերթ ևս կը սփառուի գողութեան
 ոճիր գործել թէ ընտանեաց սիրոյն և թէ զա-
 ւակաց կարօտութեան համար՝ որով քաղաքա-
 յին օրէնքը ղինքն առանձին կը դատապարտէ
 բանտարկութեան պատիժ կրել , որ գողու-
 թեան հացն իւր ընտանեաց հետն ի միասին
 կերաւ : Թողում , չեմ յիշեր այնչափ զարմանալի
 դիւտեր , մեծաշան արուեստները . որք մի-
 այն այր մարդոցն հանճարին և ձեռքին հը-
 րաշալիքներն են :

Արդ իբրև մի կողմ՝ այսքան կը ծանրանայ
 այր մարդուն չարաչար աշխատութեան զբա-
 ղանքն և հաւասար պարտուց կշռոյն նժարը կը
 վայրահակի . որով ամուսնական ընկերութեան
 մէջ՝ միոյն իրաւունքը առաւել բազմապատկե-
 րով կընկճէ զկին պարտուց բեռն տակը :
 Բայց տեսնանք , մի թէ ապիկար կնոջ վաստակն
 ու պարտիքները թեթեւ են :

Մեք գիտենք, Մովսէս և հաւատքը կը պատմեն թէ վշտահար կինը՝ Դրախտի օրհնութեան հետը՝ մի անէծք ևս ժառանգեց. այսինքն ամուսնական սիրոյ քաղցրութեան հետը՝ ճաշակել նաև դառն երկունք ցաւոց. որով նա դատապարտեալ է իւր ծննդաբերութեան մէջ ցաւ կրել ու զաւակ ընծայել աշխարհի ընկերութեան համար :

Չգիտեմ, ուղիղ դատաստանէն կը վրիպի՞մ եթէ ասեմ ու վճռեմ կնոջ համար, թէ իւր այս անփախուստ ցաւոց պարտիքը՝ այր մարդուն բովանդակ աշխատութեան դէմ հաւատար և շատ է : Ձեմ յիշեր նաև, որ մերթ ևս ցաւոց ու վշտաց մայր խեղճ կինը՝ իւր ծննդական բուռն ցաւոց մէջ կը մեռնի . կամ անմայր կը թողու իւր թշուառ տղեկն ի խանձարուրո կամ հետ իւր ի դերեզման կը տանի :

Ո՛ւր թողունք ասպա կնոջ երկայնամիտ հոգատարութիւն իւր զաւակաց համար . որ ծընած օրէն սկսեալ մինչև պատանեկութեան հասակը, նա սրտով և կեանքով կը մտչի . այն ինչ հայրը՝ տղուն լացէն ձանձրոյթ կը դդայ, կը զայրանայ և փոխանակ փայփայելու՝ օրօրոցի քովէն փախուստ կուտայ :

Այո՛, խոստովանիլ պէտք է, թէ ծնողա-

դական սրտին ու գորովոյն մէջ՝ կին կ'առաւելու-
քան զայր միշտ պատրաստ լինելով՝ անտրտունջ
կրել զաւակաց ցան ու կարիքք . մանաւանդ
երբ ճշմարիտ ու հոգացող մայր է և լիովին կը
ճանչնայ իբր մայրական պարտիքները :

Քայց իրաւունք կը պահանջէ, որ սա ևս
խոստովանիմք . զի երբ կնոջ երկայնմտութիւն
առփնին անձկութեան մէջ կամիտփի . այր
մարդուն մտածութիւնը՝ խիստ կընդարձակի
արտաքին դրազանաց չարաչար հոգերով . յորս
այնպէս կը տեսնուի փորձիւ, որ կինն անհոգ է
և այս անհոգութեան համար չարաչար կը
դատեն զինքն : Սակայն ես խօսիմ, դու դա-
տաստան արա, ուշիմ ընթերցող . կնոջ անհո-
գութիւնն ի բնութենէ՞ է, թէ այր մարդիկ թո-
ղեր են, որ կինը անհոգ լինի ու չմտածէ, թէ
ընտանեկան սրահէն դուրս ի՞նչ կայ աշխարհիո
մէջ և ի՞նչ կը գործեն այր մարդիկ :

Ես այնպէս կը կարծեմ, որ կնոջ անհոգու-
թեան պատճառը՝ մեծ մասամբ այր մարդիկ ե-
ղած են, որ կամ այրական, ինքնահաւան հպար-
տութեամբ կնոջ կարեորութիւն չտալով՝ նա
սովորեր է անհոգ մնալ . կամ մեծամտութեամբ
սարկութիւն և նուաստութիւն կը համարին կնոջ
խորհուրդ տալ, կամ առնուլ, և կամ օրուան

ձախորդ անցքեր պատմել և ցոյց տալ իւր վիճակի կացութիւնը : Թող այս շատ անգամ սնապարծ լինելով՝ կնոջ անհողութիւնը աւելի ընդարձակեր են :

Ուստի կինը իւր անհող վիճակէն հանելով ընտանեկան հողածութեան մէջ կրթելու համար, այր մարդիկ պէտք է զայն արժանի համարին իրենց խորհրդակցութեան, ամօթ և նուաստութիւն չհամարին իրաց վիճակը ստուգութեամբ խօսիլ ու խոստովանիլ :

Եթէ այր մարդոց իրաւունքն է ընտանեկան ու առանին գործոց վերայ խելամուտ լինել. միթէ կնոջ իրաւունք չէ՞ արտաքին իրաց վերայ տեղեկութիւն ստանալ ու գիտնալ թէ այր մարդիկ ի՞նչ կը գործեն աշխարհիս կառավարութեան ու շահավաճառութեան մէջ :

Ստոյգ է որ առն և կնոջ իւրաքանչիւրին աշխատութիւնները յատկացեալ են, զոր 'ի վերանդր գրեցինք. այլ համակամ խորհրդակցութեան մէջ երկուքն ևս սլարտական են իրենց հաշիւները տալ. մին՝ վաստակին համար և միւսն՝ տնտեսութեան : Առանց այս հաշւոյն երկու ամուսնեաց սլարտուց և իրաւանց կշիւր կը շփոթի. շատ անգամ երկու կողմի սլարտազանցութիւնք կը ծածկուին, այնուհետև այր և

կին կը ջանան միշտ կեղծելով զիրեար խաբել . միշտ ներքին վիճակը իրարմէ պահել և առերեւոյթն միայն ցոյց տալ : Այլ մինչև յերբ, կարօտութեան դժբաղդ օր կը հասնի, նոքա կըստիպուին խօսիլ . մին կը խոստովանի, թէ շահավաճառութեան մէջ կորսնցուցի, դանձարանիս մէջ դրամ չի մնաց . և միւսն՝ թէ տաշտին մէջ հաց չիկայ . մառանը պարպուած է . սնտուկիս միջի թանկագին օժիտներս վաղուց ծախած եմ, իմ այլ և այլ պէտքերս հոգալու համար :

Ուրեմն պարտազանց է այր, որ իւր կեանքի ու գործոց վիճակը թագուցանելով չի թողուր, որ իւր կենակիցն՝ իւր հետ հաւասար ընտանեկան կեանքին վերայ հոգածէ : Պարտազանց է կինը, որ իւր ամուսնոյն հոգածութեան բաժանորդ չի լինիր :

Պարտազանց է այր որ հեղդ ու պղերդ է իւր բաժին աշխատութեան մէջ . որ կը մոռնայ ընտանեաց հայն, կամ կը դեգերի գինարբուաց հետը կամ իւր հացն անառակ կեանքով կը վատնէ ու կը զրկէ ընտանիքը :


Պարտազանց է կին, որ աշխատող ու ժրագլուխ չէ . որ իւր իրկան դառն քրտինքով վաստկած հացն՝ ուղղութեամբ ու խնայութեամբ

ի տնտեսեր . այլ կամ նենդութեամբ խորե-
տով . և կամ զեխութեամբ շռայլելով յուժպէտս
կը վատնէ հացի առատութիւնը , երբէք չմտա-
ռեւերելով թէ իւր ամուսինը քանի՞ տաժանու-
թեամբ այդ հացն վաստկած է . զօրհանապաղ
ծովու և ցամաքի վերայ տքնելով տառապե-
տով : Ես չեմ յիշեր , թէ ի՞նչպէս նոքա երբեմն
պատկառին ընտանեկան պիտոյից համար ան-
պատիւ միջոցները 'ի գործ դնել . շահավաճա-
ռական գործոց մէջ խարդախութիւն խառնել .
եւ ընտանիքը թշուառութենէն ազատելու հա-
մար՝ ուրիշի ընտանիքը թշուառացնել և այլն :
Որք մերթ ևս կամ յուսահատ անձկութեան մէջ
և կտամ անձնական պատուոյ բուռն զգացմամբ՝
անձնասպան կը լինին , լաւ կը համարին մահ-
ւամբ խփել իրենց աչքը քան տեսնալ ընտա-
նեաց ողորմելի կեանքն ու թշուառութիւնն :
Պարտազանց է այր որ իսպառ կը մոռնայ
ծնողական գութն , տուն և ընտանիքը , մեռցնե-
լով իւր խիղճն ու պատիւ . 'ի բաց կը թողու-
կենակից ամուսինը և ընտանեկան պարկեշտ
կեանքը՝ կերթայ ու կապրի անառակ ընկերու-
թեան հետը , կը վատնէ իւր ամէն ինչքը կեանք ,
պատիւ ու հարստութիւնը . վերջապէս վատ-
թարութենէ 'ի վատթարութիւն երթալով նա

որ մի կը մեռնի օտար փողոցներու անկիւնը
առանց ընտանեկան ոգոյ, ու շարժանանար
փառաւոր թաղման ու հայրենի դերեզմանին :


Բիւր անիծից արժանի է այնպիսին, որ կու-
րանայ ընտանիքը . զոր Պօղոսը՝ հաւատուրաց
ամբարիշտ կը կոչէ : Այո՛, այնպիսին հանապազ
նդովք կընդունի ընտանեկան տաճարէն, որ
կարճի այնպիսւոյն կեանքը, նա շուտ բար-
ձուի աշխարհէս, որ նախատինք է ոչ միայն ըն-
տանեաց, այլ և մարդկային ընկերութեան :

Յակաւին շատ ու բազմադիմի են ամուս-
նական կեանքին մէջ առն և կնոջ իրաւունք,
պարտք և պարտազանցութիւնք . այլ մեք այս-
չադի միայն յիշատակելով շատ կը համարիմք և
կը թողումք, որ պակաս մնացելոց վերայ՝ կե-
նակից ամուսինք ինքնին իմաստասիրեն . ճանչ-
նան ու գիտնան իրենց պարտիքները ու խոր-
շին ամենայն պարտազանցութենէ :



ԺԱ.

ՄԱՅՐ ԵՐ ՂԱՅԵԱԿ



ՄԱՆԿԻԿ դեռածին երբ կը ծնի յաշխարհ
կուգայ, ո՛վ է նորա կաթնտու սնուցիչ. ծնող
մայրն է միայն, որ երկունք կրեց ու զայն ծնաւ.
Մայրական այս պարտիքը այնչափ պարզ ու
բնական է ծնողական սրտին ու գորովոյն. որոյ
համար ոչ վարժապետ պէտք է, ոչ դաս. բնու-
թիւնը իւր բուռն սիրով կուսուցանէ զայն.
Մայրենի արգանդէն ՚ի լոյս ելած տղեկը՝ առա-
ջին անգամ աչեր բանալով իւր մայր կը տես-
նայ. նա դեռ անլեզու, անբարբառ մանուկ
է, կարող չէ իւր կարօտութեան փափաղը
բացատրել. իւր կարկամ լեզուն լացն է միայն,
այդ անորոշ ձայնով նա ամէն բան կը խնդրէ.
Կաթ, գգուանք ու խնամք. կաթը՝ իւր կեանքն

է, գգուանք՝ սէրն է, խնամք՝ մայրական պարտաւորութիւնն է . զորս մանկիկը միայն իւր ծնողէն կը խնդրէ , և ուրիշ ոչ ոք չի ճանչնար, մանուկ անզօր իւր իրաւունքը լալով կը փաստաբանէ բանտարկուած խանձարուրին մէջ :

Եւ երբ փոքր առ փոքր կաճի ու կը զարգանայ մանուկն իւր նախաբարբառ ձայն՝ մայր անունը կը թոթովէ : Անշուշտ այս անուան բնախօս ուսուցիչ մայրն է . ինչպէս նաև հայր անուան : Ո՛վ , որչա՛փ սքանչելի է բնութեան այս դպրոցը . որ գգուասէր մօր անուշակ գրկարանն է . մանուկը իւր քերականին առաջին դասը՝ այդ կենդանի բնութեան դպրոցէն կը սկսի :

Ուստի ամուսնացող կին երբ զաւակ կը ծնի և մայր անունը կը ստանայ . ինչպէս նա և իւր այր՝ հայր անունը, այդ ինքնին յայտնի է բնութեան և աշխարհի օրինաց առաջ . թէ ինքն և իւր ամուսին են միայն իրենց զաւակաց ստացիչ և տէր : Այս բնական իրաւունքէն անխուսափելի պարտիք մի կը ծնի ծնողաց համար և նոցա նուիրական պարտիքն է պահել, անուցանել մանուկը կաթով, կերակրով ու հանդերձով :

Այլ աստանօր միայն առանձին մայրական պարտուց վերայ պիտի խօսիմ, և կը թողում

հայրական պարտուց մասն, որ սորա հետը կցորդութիւն չունին :

Մօր ու մանկան մէջ կամ ծնողին ու ծնելոյն մէջ այն օրէն պարտք և իրաւունք կըսկսի երբ մայրն կը ծնի, մանուկն 'ի լոյս կուգայ : Այո՛, այն օրէն պարտք և իրաւունքը մանկան հետը 'ի միասին կը ծնին . մանկան անդրժեղի իրաւունքն է՝ կաթ խնդրել . և մօր բնական պարտիքն է՝ կաթ տալ : Վասն զի մեծագութ Արարչապետը միայն այդ պարտուց համար ամէն ծնող մօր կուրծքէն երկու ստինքները կախեր է . և քանի՞ մեծ է Նախախնամողին հոգը . որ զկաթն մանկան հետ կըստեղծէ և այն պահուն կըսկսին մօր ստինքներուն երկու աղբերակները բղխել, կաթնածարաւ մանուկը իւր բերանը կաթի աղբերակներու դէմ կը բանայ :

Ուստի Աստուած և բնութեան անփոփոխ օրէնքը պարտաւոր կը կացուցանեն մայրը . որ իւր ծնած զաւակը ինքն իւր իսկական կաթով սնուցանէ : Մայր մի կարող չէ այս պարտիքը եղծել . զոր թէ բնութեան օրէնք և թէ բնական սէր՝ անեղծ գծերեն մօր սրտին և կուրծքին վերայ :

Մայր մի եթէ մտնայ այս ծնողական պարտիքը, եթէ եղծէ այս օրէնքը . այդպիսի մայր,

անգորով, զրկիչ և պարտազանց է. թող թագուհի լինի, թող իշխանուհի, կամ քաղաքացի և շինական, աշխարհիս ո՛ր կարդէն կը լինի թող լինի, նա կարող չէ արդարանալ. ոչ երկնից նախախնամութեան առաջ և ոչ երկրիս բնութեան դատաւորին առաջ, Միթէ արժանի՞ է մի կին մայր կոչուելու, երբ ստինքները լինեն կաթով, նա մանուկն՝ օտար կաթին եւ օտար գրկին յանձնէ. և կամաւ թողու, որ ցամքի ու կտրի բնատուր կաթն, Չգիտեմ, աշխարհիս մեծատանց տիկիներուն այդ մի ազնուականութեան շնորհ ու նշան է. որ մայրական այդ մեծ ու առաջին պարտիքը՝ նուաստութիւն կը համարին. որպէս թէ ամօթ լինէր այն իրենց տիկնութեան և կամ թէ այնպէս կը դատեն թէ մանկան կաթ տալը՝ աղախնական պաշտօն է. և այդ ծառայութիւնը դիեցիկ դայեկներու համար է միայն:

Մարդկային բնկերութեան ընտանեկան կենաց մէջ եթէ անօրինակ զեղծումն մի կայ՝ այս է. եթէ զրկանք մի կայ, այս է. որով մայրերը բուն իրենց զաւակները կը հարստահարեն. եթէ բանաւոր մարդ՝ անբան անասնոց առաջ կը նուաստանայ ու կամաչէ՝ այս է, վասն զի բնութեան իմաստուն Արարիչ ինչպէս

մարդոյն՝ նոյնպէս բոլոր կենդանեաց համար
դուժը՝ հաւասար բաշխեր է :

Թող տեսնան մայրերը, որ առիւծն անտա-
ռին մէջ իւր կորիւն կը դարմանէ . կո՞ղն՝ իւր
հորթիկ, մաքին՝ իւր դառնիկը, հաւ՝ իւր ճե-
տերը, ճնճղուկ՝ իւր ձագերը . այլ ևս իրա-
ւունք ունի՞ մայրն իւր կաթով չը սնուցանել
իւր զաւակը, որ իւր հոգւոյ հատորիկն է .
կամ թէ չը դարմանել այն հարազատ ծաղիկը,
որ իւր ծոցէն բուսած է, իւր արմատին ծիլն է .
ի՞նչպէս ձեռք է այն մօր ձեռք, որ կը քանցէ
այդ մատաղ ծիլն իւր բնաբոյս արմատէն և
զայն օտար արմատին հիւթով սնուցանել կուզէ :

Դիեցիկ մանուկը կը բողոքէ այս զրկանաց
դէմ, միայն յայնժամ ներելի կը համարուի մօր
համար, երբ ինքն տկար, անառողջ է և կամ
կաթին աղբիւրները ցամքած են . Բաց այս
պատճառներէն՝ չի կայ ուրիշ մի այլ զօրաւոր
պատճառը . որ իրաւունք տայ ծնող մօր, իւր
մանուկը ուրիշ մօր կաթով դիելու . որոյ անունը
դայեակ կը կոչուի, և ես ճիշտ կը հասկընամ
այդ բառին նշանակութիւնը, որ է կաթ վա-
ճառող կին :

Դայեակն ևս անշուշտ նորածին զաւկի ծնող
է . ո՛հ, մի տառապեալ մայր է նա . որ ան-

Հնարին կարօտութենէն ստիպեալ իւր մանկիկն
 մի ուրիշ մօր կը յանձնէ նուազ վարձքով, կեր-
 թայ կը դեգերի մեծատանց տուները. որպէս
 զի իւր կաթն աւելի դնով վաճառէ. որ իւր
 մանկան արդար իրաւունքն է. Ողորմելի որ-
 դեղուրկ կին պարտաւորեալ է իւր դայեկու-
 թեան վարձքէն՝ մի մասն վարձեալ կնոջ տալ.
 և մնացեալ մասովն՝ իւր ընտանեկան ապրուստ
 հոգալ. Չեղ կը թողում, Հայոց ճշմարիտ մայ-
 րեր, դուք դատեցէք, այս երկու մայրերէն
 ո՞րն է աւելի յանցապարտ. կարօտադին դայ-
 եակ, որ առ չքաւորութեանն՝ իւր կաթը կը
 վաճառէ, թէ հարուստ տիկին, որ սնուցիչ
 կերակուրներէն լիանալով ու յափրանալով թա-
 թաղուն զեղուն լցուած ստինքները աղբիւրի
 պէս կաթ կը հոսեն, և որ թէպէտ մայրական
 կոչումն ունի, այլ անխղճաբար կը խցէ այդ
 կաթնաբուխ ակները, Բարեպաշտ տիկին եր-
 օ՞ւր զրկանք իմիասին կը գործէ. զրկանք մի
 իւր բնածին մանկան, զրկանք մի ևս դայեկին
 մանկան. որոյ բաժին կաթն դրամով կը դնէ,
 Ո՛հ, աղքատիկ մօր կաթն՝ իւր խեղճ աղեկին
 կեանքն է. արդեօք տիկին մայր՝ իւր մանկան
 կեանքը փրկելու համար վշտադին դայեկամօր
 մանկան կեանքը չի՞ զոհեր. Այո՛, այսպէս է

աշխարհիս դատաստանը . երբ հզօրները զան-
զօրը կը ճըմլեն , զարմանք չէ , որ տիրոջ և
տիկնոջ մանուկը նոյնպէս խանձարուրէն սկսի
յաղթահարել ու ճընշել ծառայածին դայեկա-
մօր մանուկը :

Աւա՛ղ , և ա՛հ , որչա՛փ անբնական , որչա՛փ
անգթական , և որչա՛փ անարգ ու դժուարա-
տար է դայեկին կեանքն ու վիճակը . որոյ մայ-
րական սիրոյն և գորովոյն վերայ կը բռնանայ
թշուառութիւնը . մինչև կը ստիպուի դժբաղդ-
կինը թողուլ իւր մայրական գութն , թողուլ
իւր արգանդին ծնունդն և երթալ անասնոց
կաթի պէս վաճառել իւր կաթն . որով թերևս
կարենայ երկու կեանքը միանդամայն պահպա-
նել , և մերթ ևս իւր ամուսնոյն կեանքը . որ
կամ ծոյլ և անաշխատ կեանքի մէջ անպիտան
է . և կամ ընտանեկան պարտիքները մոռացող
մոլորամիտ մարդ է . որոյ աչքը կնոջ ձեռքն է և
կըսպասէ նորա վատտակով ու հացով ապրիլ :

Թողումք այս պարագաները , որ տկար կնոջ
համար շատ ծանր ու դառն են . աւելի դառ-
նագոյն պարագայ մի կայ , որ ՚ի ներքուստ կը
տանջէ մանկամայր դայեկին սիրտն ու ոգին :
Ո՛հ , բնական ու մայրական սիրոյն գորովն է
այն , որ հանապազ կը մորմոքէ կը կտրբտէ ծնո՞

դական աղիքները, երբ կը տեսնայ օտար մանուկ իւր գիրկը, անդէն երևակայութեան մէջ կը յիշէ միշտ իւր մայրազուրկ մանկիկը, որ աչքէն հեռացած է, մայրական կաթէն ու գրկէն զրկուած է, Նա կենդանի մայր է, քար չէ, այնչափ կը վշտակրի ու կը դառնանայ սրտին ցաւոց մէջ. որոյ անհնարին դառնութեան չափը՝ միայն մօր սիրտ կարող է զգալ ու չափել:

Ով որ մայր է թող հետաքրքիր լինելով առանձին քննէ, փորձէ դայեկամօր ցաւակիր սիրտը, թէ ինչ են նորա տխուր մտածմունքը. թէպէտ նա արտաքուստ ուրախութիւն կը կեղծէ, զուարթ կերևի, գուրգուրալով կը փայփայէ զմանկիկ, տիկին կը հաւատայ թէ իրօք մայրական սիրով կը սիրէ. չը գիտէ թէ խեղճ դայեկին սիրտը արիւնով ու ցաւով լցուած է: Մայրութեան և որդեսիրութեան բուռն գորով միշտ կը յուզեն նորա սիրտը. և կը շարժեն նորա ոգին, որ իւր բնածնունդ զաւկին ոգիէն կախուած է. ամէն վայրկենի մէջ կը յիշէ ու կը դառնանայ:

Այլ պատմեմ իբրև վկայ և ասպացոյց ասացածիս, ինչ որ մի դիտող և բարեսիրտ տիկին պատմեց ու ես լսեցի:

Մի օր մանկամայր տիկին դայեկին սենեակ

կը մտնէ այն պահուն՝ երբ նա տղուն կաթ
կուտար . և կը տեսնայ , որ դայեկին աչքերէն
կաթ կաթ արտասունք կը հոսին մանկան երե-
սին վերայ , Կը հարցնէ տիկին , թէ ինչո՞ւ հա-
մար կուլաս և ի՞նչ է պատճառ : Դայեակը թէ
և առաջին անգամ ծածկել կուզէ սրտին ցաւը .
բայց ելով ստիպէ տիկին , նա կը պարտաւորի
խոստովանիլ :

Ինչպէ՞ս խօսիմ , տիկին , և ինչպէ՞ս բացատ-
րեմ սրտիս դառնութիւնը՝ կը պատասխանէ
դայեակը , անմայր մանկիկս յիշեցի և կուլամ .
և միշտ կուլամ քեզմէ գաղտնի և առանձին .
մի գուցէ տեսնաս և կարծես , որ ցաւակիր
մօր սիրտը կը դառնացնէ կաթին քաղցրու-
թիւնը . և կամ այս աղի արտասուաց կաթիւ-
ները . որ կայլակելով աչքէս կը թափին մինչև
ի կուրծքս , և մանուկը կը ծծէ զայն կաթին
հետը : Կաղաչեմ , մի զայրանար , տիկին , դա-
յեկին կեանքը թշուառ է . ամէն ժամանակ
երբ կը յիշեմ ու կը մտաբերեմ , թէ իմ վար-
ձակալ դայեակը՝ զաւկիս կաթ կուտայ , թէ
իւր զաւկին համար իմ զաւակս կը զրկէ . վասն
զի մի քանի տարի յառաջ , մի սիրական զա-
ւակս կաթնազուրկ մեռաւ : Գիտէ՞ք , տիկին ,
այն կիները . որոց մեր զաւակները յանձնելով

մեր տնէն տեղէն կը հեռանամք և կուգամք ձեր զաւակաց համար կաթնտու կը լինիմք . ա՛հ , այդ անկարեկիր կիները միթէ մօր պէս կը խնամեն մեր զաւակները : Ո՛չ , շատ անգամ կաթնակարօտ կը մեռնեն . երբեմն ևս ծանր քուն լինելով՝ լսեղճ տղե՛կ դառնաւորին մէջ լալով՝ և կամ անկողնոյ մէջ անութեաններով կը խեղդեն . Չեմ յիշեր , որ մերթ ևս բսպառ անհող լինելով առանց հսկողութեան կը թողուն մանկիկը՝ որով այլ և այլ վտանգներու կը պատահի :

Բայց իրաւունք չունիմ այսչափ մեղադրել այդ կարօտաւոր կիները . որոնք մեզ պէս թշուառ են . աղքատութեան ու չքաւորութեան աղաղաւ կը պարտաւորին երկու դիեցիկ երախաները միանգամայն սնուցանել . որպէս թէ երկուորեակ ծնած լինին :

Վշտամայր դայեկին խօսքեր և իւր արտասուքը շատ և կարի սրտառուչ են . որուն վերայ մարդ պէտք է կարեկցելով խորհրդածի . և առաւել պէտք է տիկին մայրերը զգան և խորհրդածեն . թէ քանի՞ դառն ու դժուարին է սնուցիչ դայեկին վիճակը . երբ նա հանապաղ կաղէկիդի իւր զաւակին սիրով :

Երանի՛ թէ այդ բարեսիրտ տիկին հետա-

քրքիր լինելէն յետոյ, իւր մայրական սրտով
ու գորովով դայեկին գորովը չափէր. գիտ-
նար ու հաւատար թէ նա ևս իւր պէս մայր է,
սիրտ ունի, աղիք ունի, որ կը գալարի միշտ
յիշելով իւր հոգւոյ հատորիկ զաւակը. և մայ-
րապէս իւր անգամ քայեկին մանկիկն ևս բե-
րել տալով ստի. կին հետը սնուցանել տար.
և յայնժամ ազնուամիտ տիկին՝ տիրապէս
առաքինի մայր կը հանդիսանայր ընտանեկան
կենաց մէջ:

Ես չգիտեմ, գթասիրտ տիկնայք կարո՞ղ են
միանգամ փորձել. թէ երբ դայեկին համար
այս մեծ շնորհ լինի, ինչ ազդեցութիւն կ'անէ
նորա սրտին վերայ, ինձ այնպէս կը թուի, որ
դայեկին սիրտը յայնժամ մեծ երախտագի-
տութեամբ կը լեցուի, զուարթ և ուրախ
սգւով, ամենայն հաւատարմութեամբ խնամ
պիտի տանի տիկնոջ զաւակին. չէ թէ միայն
վարձուց համար, այլ առաւել իւր զաւակին
սիրոյն համար. զգուշանալով որ երբէք տըր-
տունջի պատճառ չիտայ, մի՛ գուցէ սորա հա-
մար իւր սիրական զաւակը աչքէն հեռացնեն:

Խնդիր է և այս, թէ երբ դայեկին սիրտը
ուրախութեամբ կը զեղու, արդեօք այս բա-
րոյական սրտահաճոյ վիճակը՝ ազդեցութիւն

չընե՞ր նորա կեանքին և առողջութեան վերայ
և հետեապէս կաթին շատութեան և զեղմանս
Սոյն կէտն ևս կը թողումք բժշկաց , թող նո-
քա վճռեն :

Գիտեմ , այս անսովոր կարեկցութեան դա-
սը խիստ դժուարին կը թուի ազնուական տի-
կիններուն . որք թերևս զրկանք համարին ի-
րենց զաւակաց համար . կամ թէ այնպէս
կարծեն , որ մի առողջ և առողջ դայեակը
կարող չէ երկու մանկիկը ՚ի միասին սնուցանել :

Առ այս ես կը լռեմ , բնութիւնը թող
պատասխան տայ . որ շատ անգամ մի մօր
երկու զաւակներ կը ծնին . երկուքն ևս՝ մի
մօր կաթով կապրին ու կը մեծնան . և միթէ
նախախնամութիւնը չէ՞ նախատեսեր , որ երկ-
ուորեակ ծնածներուն կաթ բաւելու համար՝ եր-
կու ստեանց աղբիւր բացեր է մօր սրտին վե-
րայ և երկու կաթնաբուղխ պտուկները կախեր
է նորա կուրծքէն :

Քաջայայտ է ինձ , որ այս դժուարալուր
խորհրդածութիւնը՝ զառանցանք կը համար-
ուին արդի ժամանակին և ընտանեկան փափ-
կութեան տուալ . այլ մեր փափազ և սկզբունքն
է , որ ընական օրէնք տիրէր , Աւետարանին
դժութիւն թագաւորէր . երբ աշխարհիս վե-

բայ այնպէս կը կարծուի, որ այր մարդոց
գութը նուազ է . դոնէ տիկին մայրերը գթած
լինէին ու ճանչնային իրենց մայրական պար-
տիքները : Ամէն մայր ու ծնողը լուր զաւակ
սնուցանէր այն կաթով, և այն սիրով, զոր
Նախախնամութիւնը մի միայն ծնողական ան-
հրաժեշտ պարտիքը հաստատերէ : Պարտա-
զանց է ամէն ծնող, եթէ այս պարտիքը
խղճի մտօք չի կատարէ : Թող չը խոտոռին Հա-
յոց տիկնայք . մենք չենք ասեր, որ դայե-
կութիւնը մեր ընտանեկան կեանքէն խաղառ-
բարձուի, հարուստ, ազնուական ընտանեաց
մայրերը կաթնտու լինին . այլ այս խօսիլ կու-
ղեմք, երբ փափկասուն կեանքը մոռցնել
կուտայ այդ պարտիքը, դոնէ դայեկաց վի-
ճակը՝ արժանի համարին իրենց կարեկցու-
թեան, որ կին է, աղքատ ու ցաւած մայր մի
է իրենց պէս :

Այլ որովհետև աղքատութիւնը բռնաւոր
է . աշխարհիս ամէն չքաւոր ընտանիքները
կը պարտաւորին նորա լծոյն տակը խոնարհիլ :
Աղքատութիւնը ոչ միայն այր մարդիկը 'ի ծա-
ռայութիւն կը վարէ . այլ և կիներ ու մայրերը,
որք յակամայից կը պարտաւորին թողուլ իրենց
լծակից ամուսին և անուշիկ զաւակները, ու

երթալ ազնուականաց դռները դեգերիլ . որպէս զի աղախին լինին, դայեակ լինին, իրենց և ընտանեաց կարօտութիւնը լեցնելու համար :

Այսպէս երբ աղքատ ընտանիքները առ յոյժ կարօտութեան կը մտնան իրենց երկանց զաւակները : Միւս կողմէն ևս նոր աշխարհի նոր ժամանակի փափկասուն տիկիները ճշմարիտ մայրութեան պարտիքները կը մոռնան . բուն իրենց արգանդին ծնունդն սնուցանելու անգամ մեծ ձանձրոյթ կը զգան . որպէս թէ մայրական խնամատարութիւնը՝ նուաստ և անպատիւ ծառայութիւն լինէր :


Երբ ընտանեկան մայրերը բուն ծնողական և բնական այդ պարտիքէն կը խորշին . այլ ևս ի՞նչ կը մնայ իրենց աշխատութիւն : Լճեր որ պատմեմքեզ, նոքա գիտեն անաշխատ կեանք վարել, և երբէք չը ձանձրանալ . որոց վերայ տիրեր է առհասարակ հեղգութիւն, մեղկութիւն, պարապ և օւնայնախօս ընկերական կենսակցութիւն . նոքա գիտեն անժամ այցելութիւններ մտածել, զբօսասիրութիւն հնարել . եկեղեցին երթալ, չէ թէ Աննայի ջերմեռանդութեամբ աղօթելու համար . այլ աւելի ցոյց տալ զիրենք . զիրեար տեսնալ և բամբասանաց նիւթեր ժողովել, թողունք այս, միթէ

այդպիսի մայրերը կարևոր աշխատութիւն չե՞ն համարիր իրենց համար, ժամանակի շուայլ զեղիսութեան մէջ սիրտ և հոգի մաշել, որ առաւել չարաչար դբազանք է. և որոց դերին և անձնատուր եղած են. այլ ևս ո՞ւր կը մնայ տիկնութեան և մայրութեան պարտիքները յիշել, տուն հոգալ, զաւակները բուն մայրական կաթ ջամբելով սնուցանել և այլն:

Հասցա ո՛վ դուք, Հայոց ազնուական տիկնայք, ես կը փափաքիմ, որ դուք ձեր բարեկեցիկ կեանքին մէջ՝ ձեր մայրական պարտիքները դարձեալ չի մոռնայք. երբ ձեր այրերէն ոմանք՝ ժողովուրդ կը հարստահարեն, դուք ևս աղքատ մայրերը չի հարստահարէք. նոցա զաւակին կաթը յափշտակելով, դուք ձեր խիղճը մի խարէք ու ողորէք թէ կաթին գին կամ դրակին վարձքը կը վճարէք. գիտցէք ստոյգ այդ վարձքը թէ բիւր ամբամ աւելի վճարէք, կաթին փոխարէն չէ: Եւ միթէ կը կարծէք, որ աղքատ մօր կաթն այնչափ աժան է. երբ դուք ձեր կաթն՝ նոյն իսկ ձեր զաւակին կը խրնայէք:

Ես կը հաւատամ, որ մայրերը՝ ի բնութենէ փափուկ սիրտ և խիղճ ունին. զգուշացէք որ զայն չի խեղդէք փափուկ կեանքի փուշերուն

մէջ . զգուշացէք որ դայեկին զաւակը՝ կաթ-
նասովէն մեռցնել չիտաք . եթէ երկիւղած ու
ճշմարիտ մայրեր էք՝ պէտք է երկնչիք ու
յիշէք՝ որ այդ աղքատ ու տառապեալ մօր
տէր ու դատաւոր կայ . որ մի՛ գուցէ նորա
զաւակին զրկանաց արիւնը ձեզմէ խնդրէ և գուք
յայնժամ պարտական ու պատասխանատու
մնաք : Այլ ես կաղօթեմ, որ գուք ճշմարիտ
մայրեր լինիք և ազատ մնաք այս դատաստանէն :



ԺԲ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Զ Ա Բ Ա Կ Ա Յ



ԸՆՏԱՆԵԿԱՆ կամ առանին գաստիարակա-
կան վարժոցին մէջ ո՛յք են այն բնախօս և մեծ
վարժապետները . որոց 'ի բնութենէ յանձ-
նուած է իրենց զաւակաց կըթուլթեան հոգա-
տարութիւնը :

Այդ՝ աշխարհ գիտէ . և բնութիւնը ինք-
նին կուսուցանէ, թէ ընտանեկան դպրոցին մէջ
օտար մանկավարժ չիկայ . այլ միայն նոքա են
հեղինակ ու գաստիարակը , որոց պատկառելի
և քաղցր անունը՝ հայր և մայր կը կոչուի :

Այո՛, մանուկները մի ճշմարիտ և նախախ-
նամոզ բարի հայր ևս երկնից մէջն ունին . որ-

դիրենք կրստեղծէ և կը բերէ 'ի լոյս . երկնքէն
անձրև և արև , երկրէն հաց և ջուր բաշխելով
կը պահպանէ կը սնուցանէ մանուկներու
կեանքը . նոքա կահին ու կը զարդանան , և
մեք կը զարմանամք տեսնելով , որ տհաս մա-
նուկը՝ հասակաբարձ մարդ եղաւ :

Ուստի արդար չափով չափենք ու բաժ-
նենք երկնից Հօր խնամք և ծնողաց պարտիքը :
Արդ երբ շունչ և կեանքը՝ երկնից Հօրն է ,
սքանչելի պատկերն ու կերպարանքն՝ երկնից
Հօր , արև , անձրև , հաց և ջուր՝ երկնից Հօր .
հասակն և աճումն՝ երկնից Հօր . այլ ևս ի՞նչ
կը մնայ երկրաւոր հօր և մօր բաժինն , եթէ ոչ
միայն դաստիարակութիւն :

Եւ ի՞նչ է ծնողական դաստիարակութիւնը ,
ուրիշ ոչ ինչ , այլ միայն կոյր ծնուած զաւակ-
ներուն աչքը դէպ 'ի բարին բանալ , սիրտն ու
ողին առաքինութեամբ կրթել . որպէս զի աշ-
խարհը տեսնան , մարդոյն կեանքը տեսնան ,
լոյս ու խաւարը որոշեն , բարին ու չարը ճանչ-
նան . և մեծ քան զամէն՝ զԱստուած ճանչնան
ու հաւատան , կրօն և ճշմարտութիւն ընդունին :

Եւ իրա՞ւ է արդեօք որ մանուկներն առ
հասարակ կոյր կը ծնին . ո՞չ ահա կը տեսնամք
որ պայծառ աչեր ունին . կը տեսնան ու կը

խաղան հրապարակներու մէջ, Յիթէ մանուկներն 'ի ծնէ կուրին պէս աշխարհ կուգան, այլ ևս 'ի նշ մեղադրութիւնս զիրենց ծնողաց միթէ ծնողք կարող են Յիսուսին պէս ձեռք դնել և հրաշագործելով կոյրերը լուսաւորել:

Այդպէս է, հայրեր ու մայրերը հրաշագործ չեն, նոքա կարող չեն մարմնով կոյրերը բժշկել. այլ մեր խօսքը՝ մանուկներու մտաւոր կուրութեան վերայ է: որոց բժշկութեան լոյսը՝ ծնողաց դաստիարակութեան ձեռքն է. և այդ ձեռքը՝ պարտաւոր է, որ անդուլ անդադար գործէ ընտանեկան կեանքին մէջ, և մըշակէ նորա դարաստանին նորատունկ ծաղիկները: Այդ ձեռաց պարտիքն է այո՛, որ խիէ մանուկներու սրտէն անպիտան և խտտան բարքը, սերմանէ ու տընկէ նոցա տեղը ճշմարիտ բարին և օգտակարը:

Մեք կը հաւատամք. և Դաւիթը կը վկայէ թէ Աստուած առանձին առանձին կը ստեղծէ մարդոց սիրտերը, և նոցա գլխոյն մէջ կը զետեղէ հանճարոյն ամանը: Բայց դիտենք նա և, որ այդ կենդանի ամանը 'ի սկզբան դատարկ է, երբ մարդը՝ մանուկ է ու տղայ. և ո՛վ կը լեցնէ առաջին նուազ այդ անբաւ դատարկութիւնը, թէ բարի և թէ չար գաղափարաց

նիւթերով . յայտ է թէ այդ պարապ ամանին մօտ ու մերձաւոր ձեռքը՝ միայն ծնողաց ձեռքն է . ինչ որ ուզեն՝ զայն կարող են լեցնել , եթէ բարի և եթէ չար :

Ահաւասիկ սկիզբն աստի է բարւոյն ու չարին . ապա թէ ոչ ուստի՝ կը յաւելուն բարի ու չար մարդիկը՝ մարդկային ընկերութեան մէջ . Միթէ դոցա սկզբնական աղբիւրը ընթանեկան կեանք չէ՞ : Ես վկայ ունիմ ու կը բերեմ աստ Յիսուսի վճռական բանը . որ մարդոյն սիրտը՝ բարի և չար գանձուց աղբիւր կը համարի . «Մարդ բարի , 'ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ դբարի . և մարդ չար՝ 'ի չարէն բղխէ զչար » :

Ուստի մարդ ինքնին կարող է մակարերել , թէ մարդ իւր մանկութենէն սկսեալ իւր սրտի գանձարանին մէջ հետզհետէ կընդունի թէ բարին և թէ չար . և զոր ինչ ընդունած է նախապէս՝ զայն միայն կարտադրէ դուրս նմանապէս թէ բարին և թէ չարը :

Մանուկ՝ մինչդեռ մանուկ է , չգիտէ որոշել չարն ու բարին . ինչ որ իւր ծնողաց բերնէն լսէ , և ինչ որ նոցա կեանքի մէջ օրինակով տեսնայ՝ զայն միշտ բարի կը կարծէ . և միթէ ծնողք իրենց , որդւոց համար չարկամ ,

են, թէ և իրենք չար լինին : Առ այս կը խօսի
Յիսուս իւր Աւետարանով. թէ «Դուք որ չարքդ
էք, գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձե-
րոց» և այլն :

Աւետարանին այս ակնարկութիւնը, որ երկ-
նաւոր հօր և երկրաւոր ծնողաց բարիքները
համեմատելով ցոյց կուտայ թէ քանի՞ առա-
ւել և գերադոյն է երկնաւոր Հօր տուած բա-
րիքները, և միանգամայն ևս ցոյց կուտայ թէ
երկրաւոր ծնողք՝ միայն երկրաւոր բարեաց մա-
տակարար կը լինին այս առօրեայ կենաց մէջ.
անցաւոր բարիքները և եթ գիտեն պարգեւել
իրենց որդւոց. զոր օրինակ հարստութիւն,
գանձ, հայրենի ժառանգութիւն և աշխարհիս
այլ և այլ նիւթական բարիքները :

Մեծապէս կը սխալին ծնողք, եթէ այնպէս
հաւատան. որ այս նիւթական բարիքները,
առանց հոգեկան ու բարի դաստիարակութեան.
մնայուն ու ճշմարիտ բարիք են որդւոց հա-
մար : Ո՛չ, մեք փորձիւ կը տեսնամք աշխարհիս
վերայ. որ հարուստ մեծատանց զաւակները
երբ առանց հիմնաւոր դաստիարակութեան
հայրենի մեծագանձ փարթամութեան ժառան-
գորդ եղած են. և որոց կեանք ու վարքը
պատմութիւնը շատ օրինակներով կը հանէ մեր

առաջ, զոր կարդալով կը խելամտիմք. թէ այդ-
պիսի անդաստիարակ ժառանգորդները հայ-
րենի տան հին ճոխութիւնները իսպառ վատ-
նելով՝ ՚ի վերջոյ չքաւորեր են. ազնուական
ծնելով ստրուկ մեռեր են. և փոխանակ իրենց
տոհմական անունը յարատև փառաց մէջ բարձր
պահելու՝ զայն ջրնջեր են անարգութեամբ.
անյիշատակ և անանուն դնացեր են այսարհէս:

Ուստի յետամնաց զաւակներու համար,
ստոյգ, հիմնական ու յարատևող բարիքը՝ մի-
այն ուղիղ դաստիարակութիւնն է. առանց այս
ճշմարիտ պայմանին՝ զաւակները ապագային
մէջ միշտ ապերջանիկ կը մնան: Նոքա՝ ինչպէս
կը խօսի իմաստունն, ծնողական փտեալ ար-
մատէն բուսած փուտ շառաւիղներ են: Որք
թէպէտ առ ժամանակ մի անպտուղ ծաղիկնե-
րով կը ծաղկազարդին, և այնպէս կը կարծեն
մարդիկ այքախաբ լինելով թէ այդ ընտանե-
կան դարաստանը բախտաւոր ու երջանիկ է.
կանցնին մօտէն և երանի կուտան, տեսնելով
զայն իբրև լիբանկանու անտառը բարձրացած,
կանցնին և ասլա յետս դառնալով կը դիտեն.
որ այլ ևս ոչ ոյ: Ընտանի շառաւիղներն ար-
մատովին խլուած են. մեծագանձ փարթամու-
թիւնը՝ վատթար կեանքի մէջ փճացեր է, հայ-

րենի շէն տուն՝ անշէն աւերակ դարձեր է. եթէ մնացեր է մի մնացորդ ճիւղ : այն ևս աւերակ տան փողոցի անկիւն նստած հաց կը մուրայ . անցորդներուն առաջ վկայ լինելով՝ թէ ես քանդեցի հօրս տուն : Այս է ահա վախճանը անդաստիարակ զաւակներուն , և այս է արդիւնք և պտուղը նիւթապաշտ և անհող ծնողաց :

Ո՛վ կը հաւատայ թէ աշխարհիս թշուառ աղքատները՝ ամէնքն ևս դառն ու դժբախտ դիպուածներէն մուրացիկ եղած են : Ո՛չ , այդպէս չէ , մարդիկ կը պատմեն ու կը վկայեն . և ես նոյն իսկ ներկայ կեանքին մէջ կը տեսնեմ ու կը ճանաչեմ զիրենք . որ հայրենի տան ասպարանից բարձր պատշգամէն իջեր խոնարհեր են մինչև գետնի փոշիի վերայ , չորաբեկ մի կտոր հացի անդամ կարօտ մնալով : Անշուշտ նոքա այդ անբախտ վիճակին հասնելով՝ անագան ուրեմն կուշաբերին . ինչպէս այն կրտսեր անառակ սրդին . զոր ՚ի դէմս մեր բերելով կը խօսի Յիսուս . և կամ թէ այն չարժառանգ զաւակը , որոյ համար կը պատմեն հին իմաստասիրաց բանք . թէ հայրենի տան բազմագանձ հարստութիւն շուայլաբար վատնելով մի օր առուի եզերք նստած չորաբեկ ու ցամաք հացը ջուրի մէջ թաթխելով պարկեշտաբար

կուտէր . Սոկրատ բարոյական իմաստասէրը հոն պատահելով՝ կը դիտէ և կըսէ այո բանը . « Պատանի դու , եթէ այդպէս կեցեալ էիր , այժմ զխորտիկս ճաշակէիր » :

Աշխարհիս ընկերական հրապարակի մէջ , ջուրերուն եղերքը որչա՞փ կան այնպիսի ապեր-ջանիկ զաւակները . որք իրենց շուայլ կեանքին երեսէն ազնուական բարձրութենէն ՚ի թշուա-սութիւն խոնարհեր են . որով իրենց հայրենի տան տոհմական փառք իրենց վերայ կը վերջանայ :

Այսպէս է , մշտապէս վառ չի մնար տան ճրագ . և կը շիջանի շուտով երբ դաստիարակութեան լուսով վառուած չէ : Ուրեմն զաւակաց ապագայ կեանքը՝ ծնողաց դաստիարակութենէն կախումն ունի , Յթէ ՚ի սկզբան մատաղ զաւակները բարի և ուղիղ դաստիարակութիւն ստացած են . այլ ևս տարակոյս չի կայ որ հայրենի տան ճրագ մշտավառ կը մնայ . և ընտանիքն առ հասարակ բարեկեցիկ կեանք կը վարեն :

Սակայն դո՞նէ դրենք փոքր ՚ի շատէ , թէ ընտանեկան կենաց մէջ ի՞նչ և ո՞րչափ են ծնողաց կրթական դասերը , և կամ բարի և ուղիղ դաստիարակութեան պայմանները :

Ծնողական դաստիարակութեան մէջ առաջին մեծ դաս և առաջին մեծ գիտութիւնը կրօն և Աստուածաշտուութիւնն է . և սորա միակ դասադիրքն է Աստուածաշունչ մատեանը . թէպէտ բարձր և վսեմ դաղափարներ են Աստուածաշտուութեան դաղափարները . մանուկները կարող չեն ըստ արժանւոյն ըմբռնել զայն . ինչպէս արդի դաստիարակ մատենադիրներէն ոմանք փորձառապէս կը դիտեն՝ թէ խիստ ապաժամ է մանուկներու անզօր միտքը պէպ ՚ի երկինք հանել . որ դեռ խը շրջապատ եղած երկրի բաները չդիտէ :

Ես կրնդունիմ այս կարծիքը , այլ ես չեմ խօսիր աստ այն դասերուն համար . զոր դպրոցի ուսմանց կարգին հետ կաւանդեն կրօնուսոյց դասախօսները . ես կը խօսիմ կրօնի նախակրթութեան վերայ , որ դաստիարակութեան շէնքին առաջին հիմնաքարն է . և զոր պէտք է միայն ծնողաց ձեռքը այդ երկնից արքայութեան հիմնաքարը ձգէ ու հաստատէ մանուկներու սրտին մէջ : Չեմ խօսիր նաև , որ ծնողքիրքև աստուածաբան վարդապետ ճառեն կրօնի բարձրութեան վերայ : Ո՛չ , ծնողաց դասերը շատ պարզ ու բնական են . մանուկ երկինքը և աստղերը տեսնելով՝ զաներևոյթ Աստուած կըմ-

բըռնէ . նա երկիր , ծառեր ու ծաղիկները տեսնելով հետաքրքիր կը լինի , կը հարցնէ գիտնալ կուզէ . թէ ո՞վ է երկնի և երկրի զարդարող Արարիչը , Մանուկ շատ անգամ իւր սրաբիբ աչքերը տիեզերքին վերայ ածելով ինքնին գիտես թէ ուշադիր կը լինի և իմանալ կուզէ , ի՞նչ է արև , ի՞նչ է լուսին , ի՞նչ են աստղերը և ի՞նչ է աշխարհ , ծովն ու ցամաքը :

Մանուկ իւր այս հարցարանութեան մէջ փաստ չի խնդրեր ծնողաց դասերուն . թէ և սխալ լինի՝ նա ուղիղ և կատարելապէս կը հաւատայ . բաւական է , որ ծնողք ձանձրոյթ չըզգան , այլ երկայնամիտ ոգւով պատասխանեն : ինչ որ մանուկը կը հարցանէ :

Կրօնի և Աստուածապաշտութեան դասերը՝ դժուարին և անըմբռնելի դասեր չեն . մանուկներ և պարզամիտները հաւատով շուտ կ'մտնեն զայն . վրասն զի Աստուծոյ յայանութիւնը աղոց համար է . ինչպէս կը յայտնէ Յիսուս . « Հայր , գոհանամ զքէն . զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց և յայտնեցեր աղայոց » : Այո՛ , Յիսուսի յայանութիւն սիրող աւելի Դպիրեացի ախմար ձկնորսներ էին . և գեղացի բոկոան փոշոտ մանուկներն . որ կը վազէին նորա դիրկը , ու գրագէտ Դպիրները արհամարհելով կանցնէին :

Ծնողական դասերուն մէջ ճարտարախօսութիւն , փիլիսոփայութիւն բնաւ պէտք չունի . հասլա զիջանելով՝ մանկական հասակին համեմատ հարկ է պարզ , ընտանի և սիրալիր խօսքերով աւանդել կրթութիւնը : Գիտնալով , որ տղայոց դաստիարակութեան մեծ պայմանն՝ ծնողական գորովն և բնական սէրն է . միայն թէ այդ սիրոյն մէջ չը զեղծանին ծնողք , կամ չափազանցութեամբ և կամ խիստ և անհոգ սառնութեամբ :

Այս երկու կերպ վարմունքն ևս միօրինակ մնասակար են դաստիարակութեան եղանակին մէջ : Վասն զի չափազանց սէրը՝ չափազանց աղատութիւն և համարձակութիւն յառաջ կը բերէ տղայոց դիւրագգաց և անհաստատ բնաւորութեան մէջ , այլ և այլ յոռի կիրքերով հանդերձ . որով կը լինին նոքա կամակոր , ինքնահաւան , զայրացկոտ , և սաստիկ պահանջող :

Իսկ չափազանց խոտութիւնը . կը ճնշէ և կը ջլատէ տղայոց բնաւորեալ աշխոյժ և զուարթ ոգին , որով կը բթանայ միտքը , սիրտ կը թանձրանայ և որդիական գորովն թմրիլ կսկսի : Շատ անգամ ևս կը դառնանայ : կը սրտմտի իւր ծնողաց դէմ . մանաւանդ երբ ծնողք չարաչար անարդանօք ու բրածեծով՝ դաստիարա-

կութեան հին փորձ կը փորձեն տակաւին :

Յոռի դաստիարակութեան զաւակները այս կերպով վրէժ կը լուծեն իրենց խստասիրտ ծնողքներէն , և իրենք ևս գիտես թէ օրինակ առնելով խստասպարանոց կը լինին . և կը մոռնան ծնողական մեծ երախտիք , մօրն անուշ դրկարանին կաթն , և հօր սեղանին հացն :

Ջարմանք չէ , որ անարդ դաստիարակութիւնը այս արդասիքը հանէ , և խստութիւնը՝ ուրիշ խստութիւնը ծնանի : Վասն զի ծնողք միայն մարմնով չեն ծներ իրենց զաւակները . այլ բնաւորութեամբ ևս կը ծնին . որով ընտանեկան կեանքին մէջ զաւակները բնապէս սովորած են իրենց ծնողաց բնաւորութենէն և օրինակէն փոխ առնել Սրժուոյ չափ սրատես են մանուկներու աչքը , քաջ կը դիտեն իրենց ծնողաց կեանքը և շարժումն . և ըստ այնմ կընդունին և կը հետեւին եթէ առ չարն՝ և եթէ առ բարին :

Ուստի ծնողաց ամենամեծ և սեպուհ պարտիքն է , որ բնախօս ու մտաւոր դաստիարակութենէն առաւել , բարի դործոց օրինակով դաստիարակեն իրենց զաւակները : Թող համողուն ամէն ծնողք , որ մի բարի օրինակ առաւել ազդու և ապաւորիչ է քան հազար խրատ .

և սորա բնական պատճառն այն է որ մեր աչքին զգայարանքը շատ զգայուն և ներընդունակ է . որ իբրև լայնաբաց երկփեղկ դուռն ամէն գաղափարները դէպ 'ի ներս կընդունի և կը տպաւորէ զայնս մեր սրտին և ոգւոյն վերայ :

Մանուկները թէպէտ պատանի և երիտասարդ հասակի մէջ՝ երբ ընտանեկան կեանքէն դուրս արտաքին ընկերութեան մէջ կը մտնեն, շատ չարօրինակ գայթակղութիւնները կը տեսնան, կամ կը խորշին և կամ կընդունին . բայց ամենէն աւելի չարագոյն գայթակղութիւն այն է, զոր մանուկները ընտանեկան կեանքի մէջ կընդունին - և առաւել ևս չար այն է, եթէ բուն ծնողաց օրինակներէն ընդունին : Երանի՛, հազար երանի այն ծնողաց, որ միշտ արթուն լինելով կը հսկեն իրենց կեանքին և անձին վերայ . որպէս զի երբէք գայթակղութիւն և չար օրինակ չտան՝ իրենց զաւակներուն : Իսկ վայ և եղ՛ուկ այն անզգոյշ ծնողաց, որք ընտանիք և մանուկները իբրև չմարդ համարելով՝ իրենց անբարի կեանք ու վարմունքը նշաւակ կը կացուցանեն նոցա առաջ, արտաքին և օտար գայթակղութենէն աւելի՛ իրենք իսկ գայթակղութիւն կը լինին զաւակաց ու ընտանեաց, և

նոցա ապագայ կեանքը մանկութեան մէջ կը մեռցունեն :

Յիսուս ամէն գայթաղութիւն տուողաց համար սոսկալի պատիժ կը ուզունայ, և բարւոք կը համարի, որ նոքա շուտ բարձուին աշխարհէս և իշոյ երկան կապելով նոցա պարաբանոցը ձգեն ՚ի ծով, թող մինչև յանդուհոք սուղանի ծածկուի նորա շարօրինակ պատկեր և յիշատակը մարդոց աչքէն, որ այլ ևս չը կարենան տեսնալ ու գայթակղիլ :

Ստոյգ հաւատացէք, ով դուք ընտանեացի ծնողք, որ պատասխանատու էք առաջի Աստուծոյ. և միանգամայն մարդկային ընկերութեան առաջ եթէ չարզաւակը թողուք աշխարհիս վերայ. դուք երթալէն յետոյ՝ ձեր մեղքը պարանի պէս ձեր ետեւէն ձգէք. որով ոչ միայն սոսկ մի ընտանեկան կեանքը կը զերծանէք. այլ և ժողովուրդ, ազգ, և հայրենիքը :

Այսպէս, ինչ որ յուսի դաստիարակութիւն կը քանդէ, սւղիղ դաստիարակութիւն կը շինէ. և սորա շինողք բարոյական ճարտարապետները՝ միայն ծնողքն են առ տնին կենաց ու դաստիարակութեան պաշտօնին մէջ :

Ոչ ոք թող այնպէս չը համարի և այնպէս չի հաւատայ. թէ չարութեան գայթակղութիւնը

ինքնին եկաւ մեր աշխարհ . և եղծեց ապակա-
նեց մարդկային ընկերութիւնը : Ա՛չ , չարու-
թիւն իւրաքանչիւր ծնողք բերին յաշխարհ ու
աւանդեցին իրենց զաւակաց , և զաւակները՝
թողնելուն . ու այսպէս ընտանեկան շրջանէն
սկսելով տարածեցաւ ու ծաւալեցաւ մարդկա-
յին ընկերութեան մէջ՝ չարութեան ժանա ու
ապականիչ սերմերը :

Մենք չենք խօսիր առտ սկզբնաչար նա-
խանձուն վերայ . որով առաջին մահ և դայ-
ադղութիւն մեր աշխարհ մտաւ . այլ կը խօ-
սիմք այն ամէն նորածին դայթաղութեանց
վերայ . զորս ակներեւ կը տեսնամք թէ մար-
դիկ կը ծնին զայնս ու կը բղխեն իրենց չար
դանձուց սրտէն . և կը կարծեն թէ չարութիւնը
ինքնին ծնունդ առած է , առանց մարդոյն ձե-
ռաց . զի ասաց Քրիստոս , «վա՛յ մարդոյն այն-
միկ , յոյր ձեռն դայցէ դայթակղութիւն» :

Ուստի ամեն ջանք ու խնամք պէտք է տա-
նին ծնողք բարի մշակութեամբ ընտանեկան
կեանքի պարտիզէն խլել , ու չքացնել չարա-
սերմ բոյսերը . գիտնալով , որ միայն իրենք
են իրենց պարտիզին դարմանող մշակները . ու-
րիշ ոչ ոք չիկայ :

Կարի յոյժ կը սխալին այն ծնողք , որ զա-

ւակաց դաստիարակութեան պարտուց բերը՝
 դպրոցին և մանկավարժից վերայ կը թողուն .
 որոց պարտականութիւնն՝ միայն ուսուցանելն
 է . զի մանկավարժները միայն մտքին հետը կը
 խօսին, սրտին հոգւոյն հետ բան չունին : Այդ-
 պիսի ծնողք թերևս այնպէս կը կարծեն , թէ
 առանց ծնողական սիրոյ կամ հեղինակութեան
 ընտանեկան կեանքէն դուրս՝ դաստիարակու-
 թիւն կայ աշխարհիս վերայ . և կամ թէ՛ ...ար-
 վարձկան մարդը՝ որչափ բարի ու հաւատարիմ
 կը լինի թող լինի . կարող է ՚ի բնութենէ այն-
 պէս սիրել ու կրթել ինչպէս գորովասիրտ ծը-
 նողք . որոց միայն տուեր է բնութիւնը ծնողա-
 կան սրտին բուռն սիրոյ բնական զգացումն :

Եթէ ծնողք դեռ հնապաշար մտքով այն-
 պէս կը հաւատան , որ իրենք միայն զաւակ
 ծնին . և դպրոցը դաստիարակէ , Ուրեմն Յի-
 սուսի խօսած Աւետարանական վճիռը երկբա-
 յելի է : Չի նա կը խօսի հովիւներու համար
 թէ ավարձկան է և չէ նմա փոյթ վասն ոչխա-
 րաց : Եւ դուք կը հաւատա՞ք , ո՛վ հայրեր և
 մայրերը , թէ ձեր ընտանեկան դաւթին մէջ
 ծնած այն մատաղ դասնուկներու համար ձեզմէ
 դուրս ու ձեզմէ աւելի հոգատար սիրտ և ձեռք
 կայ աշխարհիս վերայ : Ո՛չ բնաւ , կըստըջանայք

և կը խարուիք դուք . եթէ այդպէս կարծէք .
վասն զի եթէ ամէն հայր և ամէն մայր նոյն
ծնողական գորովով . կարենային բնապէս սի-
րել ուրիշին ծնած զաւակը . աստի մի ուղիղ
հետևութիւն հանելով կասեմք՝ թէ ուրեմն
խորթ մայրը չպիտի ատէր այն զաւակը , զոր
ուրիշ մայր ծներ է : Եւ եթէ տակաւին չէք
համոզուիր , ապացոյց կը խընդրէք , ուշի ու-
շով կատեցէք այն երկու մանկաբեր կիներուն
բողոքն ու դատաստանը , որ առաջին անգամ
Սողոմոնին ատեանը ելաւ : և այն իմաստուն
վճիռը արձանագրեց Սուրբ դիրքը . որոյ վերայ
աշխարհիս դատաւորները կախին :

Գիտցէք նա և ընտանեկան դատախարակու-
թեան մէջ կատարեալ կրթութիւնը՝ ծնողաց
կենդանի կեանքն է . և ոչ թէ դպրոց . այդ
գործնական կեանքը որչափ ուղղութեամբ
վարի , ուղիղ շաւղով քալէ , այլ ևս ով կը տա-
րակուսի , որ զաւակները խոտորին ծնողաց ուղ-
ղագիծ շաւղէն :

Որչափ զարմանալի է , և արժան է իսկ եթէ
ապուշ համարինք այն ծնողքը . երբ իրենք
կրթական կեանքին ուղղութենէն շեղելով միա-
կողմանի կը քալեն . և կը պահանջեն , որ իրենց
զաւակները ուղղութեամբ քալեն . որոց հա-

մար շատ յարմարագոյն է խեչախառին առակը . որ խրատ կուտար իւր ձագուն ուղիղ քալել , ճարտար ձագը իսկոյն պատասխան կուտայ . « Հայր , ես կը տեսնամ քո միակողմանի քայլեր » :

Արդ , եթէ ճշմարիտ և գործնական կրթութիւնը՝ ընտանեկան կեանքի մէջ միայն ծնողաց անխոտոր շաւիղ և ուղղավար կեանքն է . ուրեմն կնքելով մեր ճառը այս խրատն աւանդենք ամէն ծնողաց . որ նախ իրենց կեանքն ուղղեն և ապա իրաւունք ստանան իրենց զաւակները խրատելու : Վասն զի իրենք երբ կրօնի պարտաւորութեանց մէջ գաղջ և մեղկ են , թող չբսպասեն որ եիրակի առաւօտ զաւակները իրենցմէ կանուխ Եկեղեցի երթան . եթէ զեղխու շուայլ են , թող չը յուսան , որ նոքա սակաւապետ և խնայիչ լինին . եթէ արբեցող և անառակ են . ո՛վ կակնկալէ , որ որդիքները պարկեշտ ու համեստ լինին . եթէ անգործ անաշխատասէր են , ով չդիտեր որ զաւակները աւելի ևս անհոգ դատարկաշրջիկ կը լինին . և այլն :

Ահա այսպէս ծնողաց յոռի կեանքը՝ զաւակներուն կը թափանցի ինչպէս նաև ուղիղ և բարի ու աստուածավախ ծնողացն , որ թէ ընտանեաց և թէ ազգին ու ժողովուրդին համար

բարի զաւակները կը պատրաստեն և ճշմարիտ հայր ու մայր և բարի դաստիարակ կը հանդիսանան աշխարհիս վերայ, որոց յիշատակը՝ միշտ օրհնութեամբ լի է :



ԺԳ.

ԶԱԻԱԿԱՅ ՊԱՐՅԵՒՔ

Մ. Ռ. ԽՆՈՂՍ



ՄԱՆՈՒԿ կաթնկեր, որ թէպէտ նա դեռ իմացականութիւն չունի. բայց բնազդեցիկ բերմամբ մօր գրկին մէջ առաջին անգամ կզգայ և կը ճանչնայ սէր: Մանուկը, եթէ չեմ սխալիր, մօր միջնորդութեամբ և վկայութեամբ կը ճանչնայ նաև իւր հայր. և ահա սոյն ճանաչման

մէջ կը ծնի ծնողասիրութեան զգացումն և որչափ ինքն կածի ու կը զարգանայ, պէտք է այնչափ մեծնան իւր սրտին մէջ ծնողասիրութեան պարտիքը :

Եւ ի՞նչ են այս պարտիքները. ահա մի առ մի բացատրեմք յեզ : Բնական և Աստուածային պարտիք է նախ և առաջ ճանչնալ, թէ իւր կենաց և գոյութեան պատճառը՝ իւր ծնողքն են. եթէ չլինէին ծնողք, ինքն այս աշխարհիս վերայ ոչ լոյս պիտի տեսնար, ոչ արև, և ոչ մարդ պիտի կոչուէր, և կամ մարդկային ընկերութեան կարգ խառնուէր. այլ պիտի մնար չգոյութեան մէջ անձնուճի և անանուն :

Այո՛, զսպակաց պարտիքն է ճանաչել զծնողս, և ծնողական ծայրագոյն սէր չափել պէտք է. թէ չկայ աշխարհիս վերայ ուրիշ ոք, ոչ եղբայր, ոչ քոյր, ոչ բարեկամ, ոչ ազգական և ոչ իսկ ամուսին. որ զինքն այնչափ գորովով սիրէ ու խանդաղատի. անձն՝ անձին, և հոգին՝ հոգւոյն փոխան տայ, ինչպէս ծնողք : Ուստի ծնողական սիրոյ այս մեծ իրաւունքք, նոյն փոխադարձ սէր կը պահանջէ զաւակներէն. զոր սրտի մտօք պէտք է հատուցանեն ու պարտական չի մնան :

Ճանաչել և հպատակիլ պէտք է, ընտանեւ.

կան կենաց և առ տնին փոքրիկ թաղաւորու-
թեան մէջ՝ քանի՞ բարձր ու փառաւոր է ծնո-
ղաց իշխանութեան աթոռ . թէպէտ և ստրուկ
լինին նոքա , աղքատ լինին և իբրև անքաղա-
քացի շինական խրճիթին մէջ ապրին , դարձ-
եալ միշտ մեծ են ծնողք , որ քաղցր և ան-
բռնադատ սիրով կը հրամայեն . որոց կամա-
կատար հնազանդութիւն մատուցանել արժան
է . ինչպէս տիեզերք Աստուածպետական աթո-
ռին առաջ , Չկայ բնաւ օրէնք և իրաւունք մի
որ զաւակներ ազատ և անհնազանդ կացուցանէ
ծնողաց բնական ու պարտաւորիչ իշխանութե-
անն , բայց միայն Հաւատք , Խաչ ու Աւետա-
րանը , որ իւր հաւատացեալները յեկեղեցի կը
կոչէ . թողուլ և մերժել հարկ է յայնժամ ծնո-
ղաց սէր և հրամանը , Յիսուսի առաւել սիրոյն
համար , ըստ այնմ՝ թէ որ սիրէ զհայր կամ
զմայր առաւել քան զիս , չէ ինձ արժանի :

Ճանաչել պէտք է նաև թէ որդիքները որ-
չա՞փ երախտապարտ են առ ծնողս , որք ոչ մի-
այն երկանց վիշտերով ծներ են զիրենք . այլ և
բազմադիմի չարչարանքներ , տառապանքներ ,
և կարօտութիւններ կրելով՝ պահեր ու դար-
մաներ են զիրենք . որոց արիտուր և փոխարէն
պէտք է հատուցանեն որդիք երբ ծերութիւն

կը հասնի ծնողաց վերայ, կամ մերթ ևս տարածամ հիւանդութիւնք և փորձութիւնք կը շրջապատեն զիրենք: Այս դառն տառապանաց մէջ ո՛վ մխիթար պիտի լինի ծնողաց սրտին: Եթէ ոչ զաւակները, որոց անհրաժեշտ պարտա-կանութիւնն է, ամենայն սիրով դարման տանել ծնողաց մինչև գերեզմանին դուռք. և ձեռքով ՚ի հող դնել նոցա խոնջեալ գլուխ և աշխատեալ անձն:

Բարեծնունդ և օրհնեալ զաւակները մինչև ցվախճան ծնողաց ամէն պարտիքները կատարելու միշտ յօժարափոյթ են: Բայց արդի ժամանակիս Հայոց ընտանեկան կեանքին մէջ կերևին շատ անգամ անխրատ, ապիրատ, անգութ, աննուէր, ստահակ, անհնազանդ ծնողաց, անհաւան և անառակ զաւակները. որք հօր և մօր անկշիռ երախտիք, խնամք, գութ և սէր ոտնհարելով ինքնամերժ կը լինին հայրենի տունէն, ուր որ մոլեկան կիրք զիրենք կը վարէ: Նոքա անձնատուր կը լինին. վատաբարոյ ընկերաց և կը վարեն անառակ կեանք ու վարք. և ինչպէս ճշդրիտ կը նկարագրէ Աւետարանին առակը, նոքա իբր ծառայ և սարուկ խողարած կը լինին, զեղիս և զազիր կե-նաց մէջ թաւալելով. ոչ միայն կը վատնեն հայ-

րենի ժառանգութիւնը . այլ և հոգին, մտքին
 առ հասարակ անարդ. ցանկութեան և վատթա-
 րութեան մատնելով կը կորուսանեն . Չգիտեմ
 կա՞ն արդեօք այդ անառակ դասէն ոմանք,
 որ անառակ որդւոյն օրինակին հետեւելով մտա-
 բերեն հայրենի տուն ու հացալից սեղան և որ-
 դիութեան ազատ կեանք . յետոս դառնան այդ-
 չարավար տղմալից կեանքէն, զգաստանալով
 դան խոնարհին ծնողաց դժոյն առաջ ու վերջս-
 տին ստանան իրենց նախնի փառքն ու պատիւ .
 Չգիտեմ նա և թէ այսպիսի դարձող ու ստըլա-
 ցող անառակաց համար պիտի գտնուի՞ն այն-
 պիսի վեհանձն ու որդեսէր ծնողք . որ երկ-
 նաւոր Հօր նմանելով ընդառաջին և ողջադու-
 րելով համբուրեն անառակ զաւակին կորացեալ
 պարանոցը . թէ աններող խստասրտութեամբ
 ծնողական սիրոյն և դժոյն դուռը փակելով
 թողուն, որ տարամերժեալ թշուառ զաւակը
 հայրենի տան դռան առաջ ինկած Ղազարոսին
 պէս անտերունջ և սովատանջ մեռնի, Եւ ի՞նչ
 կընեն յայնժամ փառասէր ու խստասիրտ ծը-
 նողք . իսկոյն կը հաշտուին անշունչ դիակին
 հետը, մեծ պատուով և շքով յուղարկաւորու-
 թեան հանդէս կը կաղմեն և կը թաղեն անա-
 ռակ որդին իբրև մեծատան զաւակ :

Մի՛ կարծեր դու, ընթերցող, թէ այսպիսի եղերական դէպքեր կամ անառակ զաւակները չըկան Հայոց ազգին մէջ. այլ թէ խելամուտ լինիս, մեր ազգային կամ ընտանեկան կեանքին մէջ մտնես ու շրջիս, պիտի տեսնաս շատ կարդացող անառակ որդիները. մանաւանդ Քիւզանդիոնի և այլ ծովեզերեայ քաղաքներու մէջ. ուր որ կը կարծենք թէ քաղաքակրթութիւն, դպրոց, ուսումն յառաջ գնացած են, Այո՛, այդ այդպէս է. բայց անդաստիարակ յառաջադիմութիւնը մեր ընտանեկան կեանքը չի բարւոքեր. ինչպէս քսան տարիներէ ՚ի վեր սկսեալ մինչ այսօր թէ փորձով և թէ օրինակով մեք կը տեսնամք և կը համեմատեմք ազգին անցեալն և ներկայն:

Դառնանք այժմ բարի զաւակաց ուրիշ պարտիքները յիշեցնել, Այո՛, բարեժառանգ զաւակները շատ պարտիքներ ունին առ ծնողս. թէ ՚ի կենդանութեան և թէ մահուանէն յետոյ, թէ երկրիս վերայ և թէ երկնից մէջ, օրհնեալ և գովեալ են այն բարեյիշատակ ծընունդք, որ այդ սուրբ պարտիքները անթերի կը կատարեն. որոց կեանք և վախճանը միշտ բարի կը լինի աշխարհիս վերայ և ընտանեկան բարեկեցիկ երջանկութեան մէջ. ինչպէս կը յոր-

դորէ խրատատուն Սողոմոն իւր առակախօսու-
թեամբ . թէ « Պատուեա՛ զհայր քո և զմայր,
զի բարի լինիցի քեզ » . և ընդհակառակն հայր
և մայր անարդողաց համար նզովք կը կարդայ .
« Որ անարդէ զհայր և զմայր, բիրք աչաց նորա
խաւարեցին » : Ո՛հ , որչա՛փ խստութեամբ կը
դատի Սողոմոն այն ապաշնորհ զաւակները , որ
ծնողական սիրոյն դէմ կ'ապերախտին . որոց
հատուցումն անաչառ արդարութեամբ կը վճռէ
ինքն , որ այնպիսի չար յիշատակ զաւակները
կուրնան , լոյս և արև չի տեսնան , խաւար աչ-
քով շրջին աշխարհիս վերայ . որպէս զի տես-
նան ու սոսկան հաւատարիմ ու հնազանդ զա-
ւակները :

// Ուրեմն ո՛վ դուք , որ աշխարհիս վերայ հայր
և մայր ունիք . ընտանեկան կենաց ու ծնողա-
կան դրկարանին մէջ կապրիք . թէ մեծ և թէ
փոքր , թէ անդրանիկ և թէ կրտսեր , թէ քոյր
և թէ եղբայր . առ հասարակ ձեզ յորդոր խօ-
սելով համառօտեմ՝ ճառիս միտքը և ձեր պար-
տիքները , ուշադիր եղիք : Գիտէ՛ք , ո՛վ են
նոքա որ ձեզ կեանք տուին , այս աշխարհ բե-
րին . նոցա անուն հայր և մայր կը կոչուի , և
[ձեր ծնողքն են . դուք պարտաւոր էք նոցա ;
սէրը՝ սիրոյն դէմ փոխարինել . դուք պարտա-

ւոր էք նոցա, կաթին և հացին դէմ՝ Յակովբ
 նահապետին պատրաստած խորտիկը փոխարի-
 նել. որպէս զի արժանապէս ժառանգէք իսա-
 հակայ հօր օրհնութիւնը, Դուք պարտաւոր էք
 ամենայն ակնածութեամբ խոնարհիլ ձեր ծնո-
 ղաց առաջ, հնազանդութեամբ լսել, մեծա-
 րանօք ընդունիլ այն ամէն հրամանները, որ ձեզ
 և ընտանեկան կենաց համար բարի և օգտա-
 կար են: Դուք պարտաւոր էք ողջակիղին փայտ
 շալկել, անդիմադարձ երթալ մինչեւ Բեթէլին
 լեռը և հոն թողուլ, որ ձեր թեւեր կապուին
 ինչպէս Սահակ՝ Աբրահամ սուրբ նահապետին
 առաջ: Բան մի չիկայ ինչպէս միանգամ յիշեցի
 յառաջ. բայց միայն Աւետարանի բանը կարող
 է այդ պարտուց պինդ կապը քակել. եթէ Աբ-
 րահամ թողու հաւատքը, դառնայ ՚ի իսառան
 իւր հօր թարայի տունը, պաշտէ հայրենի կուռ-
 քը. Սահակ խաչը դրկէ մնայ ՚ի Բեթէլ և Գող-
 գոթային գլուխ:

Դուք պարտաւոր էք երբ կը ծերանան և
 կը զառամին ձեր ծնադքը, դուք նոցա որդի
 մխիթարութեան և ցուպ ծերութեան լինիք.
 ամենայօժար սիրով խնամել դարմանել և եր-
 բէք չքարտմեցուցանել զիրենք: Դարձուցէք
 նաև ձեր աչքը Քամայ ժպիւրհ և հայրածանակ

օրինակէն, Նոյի պարկեշտ և երկիւղած որդւոց
պէս ծածկեցէք ձեր ծնողաց առականքը . որ
ընտանեկան տան պատիւն է . զգուշացէք,
հայր և մայր բամբաստողները՝ Աստուծոյ և մարդ-
կանց առաջ շատ մեղապարտ են :

Դուք պարտաւոր էք դարձեալ, հայրենի
տան փառք, ճրագ, տոհմական ազնուականու-
թիւնը նոյն ճոխութեան և փառաւորութեան
մէջ պահել . և ջանալ միշտ չաղարտել երբէք
ճշմարիտ ազնուականութեան պատիւը : Եթէ
աշխարհիս բախտը ձեր վիճակ այնպէս հաներ
է, որ դուք աղքատ ծնողաց զաւակ լինիք,
չատ է թէ նոցա բարոյական առաքինութիւնը
ժառանգէք, որ ադամանդէն ոսկիէն և կորըս-
տական հարստութենէն աւելի մեծ է, Գիտցէք
նա և, այն ազնուականաց զաւակները, որոնք
հայրենի տան հարստութիւնը դիւրապէս կը
ժառանգեն, այնչափ մեծ ու դուլելի չեն . հապա
այն իսկ է աւելի փառք և պարծանք, որ ձեր
ազնուականութիւնը ձեզմէ սկսի . որով դուք
իրաւամբ հայրենի տան հիմնադիր ազնուական
կը լինիք : Եւ քանի՞ դարովանաց արժանի են
այն վատ, հեղգ և անվապտակ զաւակները,
զորս կը հրաւիրէ Սողոմոն որ երթան մըջիւնին
գործունէութիւն տեսնեն : Նոքա թէպէտ կը

պարծին , թէ իրենք ազնուականաց զաւակներ
 են . բայց վատթար և վատնիչ տնտեսութեամբ
 վարուելով՝ հայրենի տան ազնուականութիւն
 իրենցմով կը վերջանայ , կը շիջանի տան պայ-
 ծառ ճրագը , Նոքա , որ երբեմն տէր էին՝ ծա-
 աայ և ստրուկ կը դառնան : Մուքացկանաբար
 կը շրջին և մերթ եւս հանգանակութիւն կընէ
 նոցա համար Եկեղեցին . ծանուցանելով թէ ճոխ
 հարստութենէ ինկած արժանաւոր և թշուառ
 անձն մի է . կը խնդրէ որ Եկեղեցւոյ մէջ ծած-
 կեն իւր անունը , երբ ինքն հրապարակին մէջ
 յայտնապէս կը մուրայ : Դուք մի այնպէս կար-
 ծէք թէ հարստութենէ ինկած ամէն դժբաղդ-
 ներն երկնից կամ աշխարհիս պատահարներէն
 են . ո՛չ , դոցա մեծ մասին անկումն՝ բուն իրենց
 վարած անչափաւոր կեանքէն է :

Բաւ կը համարիմ ձեզ համար այսչափ , ո՛վ
 հաւատարիմ զաւակներ . յուշի պահեցէք ինչ
 որ դրեցի . լիովին հատուցէք ձեր ծնողաց պար-
 տիքները . որքան Աստուած , օրէնք և շնական
 ծնողասիրութեան գութը պարտաւոր կը կա-
 ցուցանեն զձեզ , Յիշեցէք Յիսուսին բանը , « ինչ
 չափով որ չափէք ձեր ծնողք , դուք եւս նոյն
 չափով պիտի չափուիք . և ինչ որ ցանէ մարդ ,
 նոյն կը հընձէ » : Մողմանի առակը կը խրատէ

զձեզ, որ դուք ձեր հօր և մօր օրհնութիւնը
միանգամայն ժառանգէք: Բաւ չէ որ միայն
հայրն օրհնէ, վասն զի եթէ մայրն անիծէ, տան
հիմերը կը խախտուին:


Ժառանգեցէք ուրեմն երկու բերանոց օրհ-
նութիւնք. որպէս զի ձեր կեանքը և վախճանը
միշտ բարի ու բարգաւաճ լինի:

ԺԴ.

ՄԱԼ ԾՆՈՂԱԾ

ԵԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ



ՆՈՐԱ, որ կը ծնին յաշխարհ, նոքա մեռ-
նելով կերթան աշխարհէս. հայրեր ու մայրեր
կերթան. զաւակները՝ նոցա տեղը կը վտխա-
նակեն, քնական կարգն և օրէնքն այս է. թէ և
չատ անգամ մահուան տապարը անխտիր կը հա-
տանէ մատաղատունկները և հաստաբուն կաղ-
նիները կը թողու:

Ո՛վ են այդ հինաւուրց կաղնիքը. որք կը
բարձրանան ընտանեկան ծառաստանին մէջ և
իրենց համասփիւռ հովանիքը կը տարածեն ի-
րենց շառաւիղներուն վերայ. նոքա հայրեր ու

մայրերն են . որոց երբ կը մտենայ մահ իւր տապարով , զայն կը տեսնայ ծերունի նահապետ . երբէք չի սոսկար մահուան դաժան երեսէն . այլ գօտէպնդեալ կը սլաորաստուի իւր հայրական օրհնութիւն տալ ընտանեաց . և ապա վերջին շունչը պարզել :

Ինչպէս կը տեսնամք Մննդոց գրքին մէջ քանի մի նահապետաց վերջին կեանքը . որ սքանչելի օրինակ կընծայէ ամէն ծերունեաց դասին : Աբրահամ աստուածապաշտ նահապետին մահուան համար այսպէս կը սլատմէ սուրբ Գիւրք .
Թէ ճշասեալ ՚ի բարեք ծերութեան , ալեւորեալ լի աւուրքք յաւելաւ առ ժողովուրդս իւր :
Նահապետները գրեթէ բոլորն ևս ծաղկեալ ծերութեամբ ու բնական մահով կը մեռնէին , և սորա պատճառն էր՝ նոցա անսողիւտ կեանք , ողջախոհ և անարատ վարք , պարզ ու սակաւապէտ սեղան , հողագործ մշակութեան անխարդախ վաստակ և այլն . և քան զամէն աւելի Աստուծոյ օրհնութիւնը , որ բարգաւաճ կառնէր զիրենք :

Նահապետական կենաց մէջ ծերոց օրհնութիւն հայրական ու պապկենական պարտիք մի էր : Այն ինչ դաշտային վրանին տակ նահապետին վերջին օրերը կը հասնէր , նա կը ցանկար

վերջին ընթրիքը վայելել է իւր զաւակաց ձեռքէն . և աւելի անդրանկին , ինչպէս կը տեսնամք իսահակ նահապետին վախճանը , որ կոչելով զԵսաւ , ասաց . « Որդեակ , ահա առաջիկ ես ծերացած պիտի մեռնիմ . առ դու զքո նետաղեղն , գնա 'ի յորս , փափուկ որսիկ մի բեր ինձ , խորտիկ շինէ , ուտեմ ու օրհնեմ զքեզ » : Բայց ինչպէս ծեր նահապետի ցանկութիւն էր որդիքները օրհնել . այսպէս ևս որդւոց համար կարի նախանձելի էր հօր օրհնութիւն կանխապէս ժառանգել : Ուստի ճարտար Յակովբ իւր մօր խրատով փութաց ու յաջողեցաւ իսահակայ օրհնութիւնը իբրև անդրանիկ ժառանգել :

Իսկ Յակովբ նահապետի օրհնութիւնը իւր որդւոց համար շատ նշանաւոր է . որ երկոտասան նահապետները կանչելով , անդրանիկէն սկսեալ մինչև կրտսեր որդին կօրհնէ . և այս օրհնութեան նիւթը իրենց կեանքէն կառնէ . և ըստ այնմ կը յարմարէ իւր խօսքերը , և միանգամայն իբրև մարգարէ նախապէս կը դուշակէ նոցա ապագայ կեանքն ու վախճանը :

Բարինահապետ որ սուրբ ողջախոհութեան նախանձաւոր էր , չի մոռնար անդրանիկ Ռուբէնին ոճիրը . որ յանդգներէր իւր հօր ան-

կողին ելնել. ուստի կրսէ նորա համար. « իբրեւ զՂուր մի եռասոցիս ». որով թերեւս այս ակնարկութիւն կրնէ. թէ նկուն և անզօր լինիս իբրև սառուցեալ Ղուր, կեանքիդ մէջ չեռասինչայէս նոր և զօրաւոր գինին ամանին մէջ: Նոյնպէս չի մտնար Շմաւոն և Ղեւի եղբարց յիսակալ վրէժխնդրութիւնն. որք իրենց քրոջ բռնաբարութեան համար խորամանկութեամբ սուր հանին Սիւքէմայ բնակիչները անխնայ կոտորեցին: Ընդ որ մինչև ցօր Մահուն սրամըտելով մարդասէր Նախապետ կը զայրանայ իւր օրհնութեան մէջ և կասէ. « Շմաւոն և Ղեւի եղբարք, կատարեցին զանիրաւութիւն 'ի կամաց իւրեանց. 'ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն իմ. . . Անիծեալ սրամտութիւն նոցա, զի յանդուգն էր և յոսութիւն նոցա, զի խիստ էր: Կը թողում այլ ևս այս կարգին մէջ յառաջ բերել Յուդայի օրհնութիւնը, որ շատ նշանաւոր է. կորիւն առիւծոյ կանուանէ զնա. և ձեռքդ, կասէ, քո թշնամեաց թիկանց վերայ զօրանայ և այլն:

Աստի խեղամտել պէտք է թէ այդ երջանակ նահապետները, որչափ որ բարի և արժանաւոր զաւակաց համար բարձր ու փառաւոր օրհնութիւն կուտային. նոյնպէս չար և ստա-

հակ որդիքները անիծիւք յիշելով, նոյն իսկ մահուան պահուն մէջ կը յանդիմանէին զիրենք որով այդ յանդիմանութիւնն ևս օրհնութիւն կը դառնար նոցա համար և թափանցելով որդւոց սրտին մէջ կուղղէր, և ՚ի դգաստութիւն կը տանէր նահապետին մահուանէն յետոյ, Վասն զի բարի և առաքինի հօր գերեզմանը և յիշատակը ՚ի հողէն ևս կը խօսի և կը դաստիարակէ կենդանի զաւակները, Օրհնութեանը շնորհը ոչ միայն մնացորդ զաւակները կը խրատէ ու կը պահէ, այլ և դարէ ՚ի դար, տոհմէ ՚ի տոհմ հաստատ կը պահէ հայրենի տուն և գերդաստանը. եւ առ այս կը վկայէ առակախօս իմաստունն թէ « Օրհնութիւն հօր հաստատէ ըզտուն որդւոյ, և անէծք մօր խախտեն ՚ի հիմանէ: » Սողոմոնին այս վճռական խօսքը կակնարկէ, թէ մօր անէծքն ևս նոյն համազօրութիւն ունի՝ ինչպէս հօր: Բարի է, թէ որ զաւակները իրենց ծնողաց օրհնութիւնը միապէս ժառանգեն: Օրինակ մի յառաջ բերենք. եթէ մի հայր իւր մահուան օր բարի տեսնայ իւր զաւակները ու արժանի համարի իւր օրհնութեան, իսկ մահուանէն յետոյ չարանան որդիքները, և մայր՝ որ տակաւին կենդանի մնացած է՝ անիծէ զիրենք. անշուշտ այս պարագային մէջ

վերջին անէծքը՝ առաջին օրհնութիւնը կեդ-
 ծանէ իրաւամբ . վասն զի անէծք և օրհնու-
 թիւն Աստուծոյ արդարութեան ձեռքն է , որ
 առաքինի որդւոց գլուխը երկնից ցօղ կը թափէ .
 իսկ անբարի և չարժառանգ զաւակաց՝ կար-
 կուտ և հարուած : Նկատել արժան է այս . եթէ
 ծնողք ՚ի բնական գթոյն և սիրոյն վարեալ՝ օրհ-
 նութիւն կարդան ապիրատ զաւակաց . ես չեմ
 հաւատար , որ այդպիսի օրհնութիւնը՝ հաճո-
 յական թուի երկնից Հօր առաջ : որ թէպէտ
 չարեաց ու բարեաց վերայ իւր մարդասիրու-
 թեան անձրև հաւասար կածէ . այլ մերթ ևս
 կը տեսնամք , որ իւր արդար ցասումն ՚ի գործ
 դնելով՝ ամբարիշտ մարդոց տունը կը քանդէ :
 Ինչպէս քանդեց և արիւնով լուաց Աքայեաբին
 և Եղաբէլին տունը , թագաւոր և թագուհին՝
 աւերակաց մոխրով ծածկեց : Աստուած արդար-
 ութեան դատաւոր միշտ այսպէս կը դատի .
 Սօղոմոնին վճռագրով , թէ « Անէծք Յեռան ՚ի
 տունս ամբարշտաց . յարկք արդարոց օրհնին » :

Ուրեմն , ո՛վ դուք ծնողք , որ հայր և մայր
 վերհ անուան արժանացած էք . և որ աշխարհիս
 վերայ տուն և ընտանիք կը կազմէք . եթէ կը
 ցանկայք , որ ձեր վախճանէն յետոյ ձեր տուն ,
 ձեր դերդաստան , ձեր ամէն ժառանգութիւն

և ձեր գործը մշտնջենաւոր մնայ, ձեր անունը
 և յիշատակ աշխարհիս վերայ օրհնութեամբ
 յիշուի, ստոյգ և ճշմարիտ օրհնութեան պատ-
 րաստեցէք ձեր զաւակները, Մի անհոգ զան-
 ցառութեամբ սօպսէք. ձեր այս նուիրական
 պարտիքը՝ ձեր մահուան տագնապի օր կատա-
 րելու. երբ անբարբառ կը լինին մարդոյն շր-
 թունքներն ու բերանը. այլ անդստին խան-
 ձարուրէն և օրօրանէն սկսեցէք ձեր օրհնու-
 թեան դասերը. այսինքն ծնողական դաստիա-
 րակութիւն և խրատ. որ լի և զեղուն օրհնու-
 թիւն կը բերէ ամբողջ տան և ընտանեաց վերայ:

Ուստի այս անանց օրհնութեան կտակը աւան-
 դեմ ձեզ, Դուք այնպէս օրհնեցէք, որ նոքա
 երկնից իմաստութիւնը ճանչնան ու բարձր հա-
 մարին, աշխարհիս շնչաւոր իմաստութեան վե-
 բայ չի պարծենան: Օրհնեցէք, որ նոքա հայ-
 բնատուր սուրբ կրօն, հաւատք, սուրբ հարց
 աւանդութիւնն՝ անարատ ու անեղծ պահեն,
 Հայաստանեայց Եկեղեցին սիրեն. Թաղէոսի և
 Լուսաւորիչ Հօր հօտէն ու փարախէն չի բաժ-
 նուին: Օրհնեցէք, որ նոքա Աւետարանը գրկեն
 և սորվին նորա սիրոյ դասերը. եղբայր սիրեն,
 ընկեր սիրեն, մարդասէր լինին: Օրհնեցէք,
 որ ազգ սիրեն, հայրենիք սիրեն և նորա հին

անշքացեալ փառք ու յիշատակը չի մոռնան :
Նորա կիսակործան տաճարները յիշեն , նորա
աւերակաց մէջ շրջին , ողբան և արտասունք
թափեն Երասխայ , Եփրատայ և Ախուրեանի մէջ :
Օրհնեցէք , դաստիարակեցէք , որ նոքա ուսումն
սիրեն , գիտութիւն սիրեն , գպրոց սիրեն , գիրք
սիրեն , յառաջագիմութիւն պատուեն : Օրհ-
նեցէք և ուսուցէք . եթէ քաղաքացի են՝ նոր
աշխարհի այլ և այլ արհեստները սորվին . ան-
խարդախ լինին վաճառելոյ և գներոյ մէջ : Իսկ
եթէ շինական են , հող սիրեն , մաճ սիրեն , և
աշխատութիւն սիրեն . ափ մի հայրենի նուիրա-
կան ու սերիհական հողերէն ձեռքէ չի հանեն :
Ի վերջոյ օրհնեցէք , որ նոքա ամուսնասէր
լինին , անաչէն և տնտես լինին . բարի և ազ-
նուական ընտանիք կազմեն , որով միայն հնար
է որ ազգային կեանքը բարւոքի , բարձրանայ
իւր համբաւ և փառք . զոր կորացուցեր է անա-
զատ և կռփահար ստրկութիւնն :

Արդ կը մնայ մեզ , որ աշխարհիկ ընտանե-
կան կեանքէն դուրս ելնելով խիստ արժան
է նաև նահապետական օրհնութեանց հետ յի-
շել նաև այն սուրբ հարք , որ իբրև հողեւոր
ծնող կը համարուին եկեղեցւոյ որդւոց . որոց
օրհնութիւն առաւել բարձր ու համատարած

է քնդհանուր Եկեղեցւոյ բոլոր զաւակաց վերայ :
Չգիտեմ, մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ
որդիքները մեր սուրբ Հարց օրհնութիւն ժա-
ռանգեցի՞ն առ հասարակ. և կամ նոյն երանելի
Հարք թէ բնական մահուամբ և թէ արեան նա-
հատակութեամբ երբ գնացին աշխարհէս, արդ-
եօք օրհնեցի՞ն զՀայաստան աշխարհ և այնպէս
հրաժարեցան : Ո՛չ, Պատմութիւն յանդիման
կը հանէ մեզ, թէ ոմանք այդ շնաշխարհիկ հայ-
րերէն, որ Քրիստոսի հօտին անձնադիր հովիւ-
ներն էին, նոքա խռովեցան յոյժ, դարձուցին
իրենց դէմքը ասպանորհ որդւոց երեսէն ու
սրտամնաց վշտակրութեամբ մտան ՚ի գերեզ-
ման : Սուրբն Գրիգոր Սեպուհ լեռան գլուխը
անշուշտ կաղօթէր և կօրհնէր Հայաստանի որ-
դիքները . բայց միանգամայն կուլար այն ասի-
րատ որդւոց վերայ, որ դաւաճանեցին սուրբն
Տրտադը . որոյ թագն ու դաւազան մեր հայ-
րենեաց ազատութիւն բերեր էր : Արիստակէս
Ծովաց աշխարհին մէջ հայրադրութ իշխանի մի
ձեռքով խողխողեցաւ . նոյնպէս Յուսիկ և Դա-
նիէլ՝ հաւատամերժ Տիրան թաղաւորին ձեռ-
քով : Հապա մոռնա՞նք մեծն Ներսէս և Սա-
հակ պարթեւ, յորոց մին թունալի բաժակը
ինքնակամ խմեց, խմեց և դառնութեամբ անի-

ծեց այն ապերախտ դուրսը , որոյ համար Յու-
նաց կայսրութենէն թագ բերեր էր . իսկ միւս
սուրբն Սահակ անխորհուրդ նախարարաց կա-
մակորութեան և մատնութեան համար միթէ
չողբաց ու չըհառաչեց մինչեւ գերեզմանին
դուռը :

Այսպէս ահա մեր պատուական սուրբ հարք
դնացին Հայոց աշխարհէն . Եթէ նոքա Յիսուսի
հեզութեան նմանելով իրենց հալածչաց և սպա-
նողաց դէմ նոյն ձայնով աղօթեցին . « Հայր ,
թող սոցա . . . Սակայն առանց օրհնութեան
հեռացան . վասն զի անխրատ և ապառուժ որ-
դիքները չըկամեցան նոցա օրհնութիւնը ժա-
ռանգել : Որով մեր հայրենիք , մեր տուն ու
տեղը քանդուեցաւ . իւր որդիքներն և ընտա-
նիքը վարատեցան յաշխարհէ աշխարհ :

Եթէ կը հաւատայք Հայոց որդիքները , թէ
Աստուած Հայոց աշխարհի դատաստանը այս-
պէս տեսաւ ու դատեց . ուրեմն անցելոյն մեղքը
ներկային մէջ քաւելով ուշաբերիմք , ճշմարիտ
հաւատարիմ և անձնադիր հարց ու հովուաց օրհ-
նութիւնը միշտ ժառանգել , չապերախտիլ եր-
բէք նոցա դէմը . այլ ըստ Պօղոսի խրատուն
վարիմք որ կաղաչէ ճանչնալ յարդել Եկեղեցւոյ
ընտիր վաստակաւոր և տքնող մշակները , Որոց

ԺԵ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՑԱԿ

ԵԻ

ՅԻՇԱՍԱԿ



ԸՆՏԱՆԵԿԱՆ կենաց մէջ ծերունի Նահապետք իրենց վերջի օրհնութենէն յետոյ՝ վերջին անհրաժեշտ պարտք մի ևս ունին, այն է կտակը. որով յետ մահուն կանմահանայ նոցա անուն, կեանք և յիշատակ և կապրին նոքա հազարաւոր տարի, և նոյն իսկ գերեզմանին մէջ:

Կտակը տիրապէս կը նշանակէ այն սուրբ աւանդ և յանձնարարութիւնը, զոր մարդ իւր կենդանութեանը ուրիշ կտակակատար անձի մի կաւանդէ, որ յետ իւր մահուն կատարեն իւր կտակը՝ աննենդ և անվրէպ հաւատարմութեամբ: Կտակարար անձն շատ անգամ ևս իւր կտակը ինքնին ձեռօք կը կատարէ՝ ի կենդանութեան և կամ կը փոփոխէ զայն: Նա

անբռնադատ է այս իրաւանց մէջ, զի կտակը մի միայն իւր ազատ կամքէն կախումն ունի, Բայց ինչպէս կը վկայէ Պօղոս Առաքեալը՝ կտակ յետ մահուան հաստատուն է: Այո՛, այնչափ անբռնաբարելի և հաստատուն է, զոր և ոչ աշխարհիս բուռն թագաւորաց հրամանը կարող է խախտել զայն կամ ըստ կամս փոփոխել:

Թէ Սուրբ Գրոց և թէ Ազգային պատմութեանց մէջ նկատելով կը տեսնամք, որ կտակը երկու կերպ աւանդուած է, կամ իբրև բարոյական պատուէր և կամ նիւթական նուէր: Նիւթականին օրինակները կը տեսնամք շատ մեր վաղեմի և արդի յիշատակարանաց մէջ. որ բազմաթիւ աստուածապաշտ անձինք է արք և թէ կանայք, իրենց սեպհական կալուածներէն կամ հարստութեան գանձէն կտակելով նուիրած են. Եկեղեցեաց, վանորէից շինութեան և յարատել պայծառութեան, որոց առ հասարակ տէր և ժառանգորդ եղեր է ժողովուրդը առանց վաստակելոյ, Եթէ հետազօտեմք մեր նախնեաց ձեռագիր յիշատակարաններ, բազմաթիւ վանորէից ու տաճարաց արձանագրութիւնք պիտի գտնեմք, որ դոցա մեծ մասն՝ կտակաց շնորհիւ հաստատուած են առանձին տաճանձին իշխանաւոր և հարուստ ընտան.

եաց ձեռքով : Ով չի հաւատար որ Անուոյ հա-
զար և մէկ Եկեղեցիք կտակաց ու յիշատակա-
տուաց օժանդակութեամբ կառուցուած են .
որոց անունները դեռ կը նշմարուին աւերակ
ու կիսակործան տաճարներու վերայ : Եւ ոմանք
տեսներով կը զարմանան ու այսպէս կը դատեն
թէ Հայոց թագաւորութեան ճոխութիւն և
երկրի դանձերը՝ վանքերու եւ հոյակապ տա-
ճարներու շինութեան համար սպառած են :

Իսկ բարոյական կտակ ու պատուէրը , որ
խառն է լի օրհնութեամբ ու դառն անիծիւք ,
այդ ևս սքանչելի կերպով կը տեսնամք սուրբ
Գրոց մէջ :

Արք համ նահապետ իւր վախճանին մօտ
կասկածելով թէ դուցէ ինքն կանուխ մեռնե-
լով իսահակ որդին մոռնայ հայրենի տան ազ-
գակցութիւնը , պանդուխտ երկրի մէջ օտար
ընտանեաց հետ ամուսնանայ , կը կոչէ իւր հա-
ւատարիմ ծառայն և կտակաւ կը պատուիրէ որ
Քանանացւոց երկրէն չընտրէ ամուսին իսահա-
կայ որդւոյն համար . և ուխտիւ երդում կ'առ-
նու իրմէն չը դրժել այս կտակին դէմ : Նոյնպէս
Իսահակ Արքահամէն ուսեալ՝ նոյն կտակաւ կը
պատուիրէր Յակովբայ Քանանացւոց երկրի ազ-
ջիկներէն չառնուլ , այլ միայն իւր մօրենական

տան ազգակցութենէն ընտրել իւր ամուսին ,
Յովսէփ նահապետին կտակը շատ նշանաւոր էր ,
որ ցանկութեամբ կը խնդրէր ու կըսէր . թէ՛
« Երբ Տէր Աստուած այցելութեամբ կը հանէ
Խորայէլի տան ժողովուրդը Եգիպտոսէն , հանէք
և դուք իմ ոսկորներս այն երկրէն . և տարէք
ամփոփեցէք իմ հարց շիրիմներուն ծոցը :

Նահապետաց կտակէն յետոյ առաւել մեծ
և նշանաւոր էր Մովսիսին կտակը , որ իւր վախ-
ճանին մօտ բոլոր Խորայէլի ժողովուրդին կա-
ւանդէր , որ էր մի միայն Աստուծոյ օրէնք և
պատուէրները . զորս կրկնելով կաւանդէր Յա-
կովբայ տան ու ընտանեաց . երկնից օրհնու-
թիւն կը ցօղէր օրինապահ որդւոց գլխուն . իսկ
անէծք և նզովք կըսպառնար նոցա , որ ստուն-
դանալով պատուիրանազանց կը լինին :

Այլ մեր գթած Յիսուսին կտակը լի էր ամե-
նազեղուն օրհնութեամբ . զոր վերջին ընթրեաց
իրիկուն կաւանդէր իւր սիրելի խմբին և բո-
լոր հաւատացելոց . նորա սուրբ կտակը՝ սէրն
էր , զոր միշտ կրկնելով կաւանդէր , և կտա-
կագիրն Աւետարանն էր . Այս կտակագիրը թո-
ղուց Յիսուս . չէ թէ մի ընտանեաց կամ մի
ազգի համար , ինչպէս Մովսէս . այլ համայն
Եկեղեցւոյ ընտանեաց կաւանդէ իւր հայրա-

պատուէր կտակը . որ լիովի պատարուն է
երկնատուր օրհնութեամբ . զի նորա սուրբ և
անդրժեյի կտակապատուէրը՝ իւր աւանդած
հաւատքն է , ընկերսիրութիւնն է , համատա-
րած խաղաղութիւնն է , կարեկից մարդասիրու-
թիւնն է , խաչ և հալածանքն է , իսպառ համ-
բերութիւնն է , թողութիւն և ներողութիւնն
է : Եթէ մահկանացու մարդոց կտակ յետ մահ-
ուան այնչափ հաստատուն է , որչափ անմահ
Աստուածորդւոյն կտակը , որ խաչին արիւնով
և նոր յաւիտենական ուխտիւ կնքուած է :

Ուստի թէ Մովսէս , թէ Յիսուս , թէ առաք-
եալք և թէ Եկեղեցւոյ սուրբ հարք , ինչ որ
աւանդեր են . պարտաւոր կը մնան Եկեղեցւոյ
ւոյ ընտանիքը եթէ զայնս անեղծ և հաստա-
տուն չպահեն :

Թողունք այս բարոյական կտակը , որ մեր
մասնաւոր առարկայէն բարձր է . խօսինք դարձ-
եալ նիւթականին վերայ , որ աշխարհիս բախ-
տաւոր և հարուստ ընտանեաց համար մի ան-
հրաժեշտ պարտիք է : Մարդ , թէ այր և թէ
կին , երբ յիշէ իւր օրահաս վախճանը և մտա-
բերէ թէ՛ ինքն մահկանացու է և պիտի մեռնի
ու թողու այս աշխարհս , ընտանիք , սիրելիք ,
դանձ , հարստութիւն և շատ կալուածները .

իմաստուն և արդար անտես է այն մարդը, եթէ ցանկայ իւր մահուան և գերեզմանին մէջն ևս ապրիլ, եւ ի՛նչպէս, կտակաւ և բարի յիշատակով. այսինքն իւր սեփհական հարստութենէն մի բաժին հանէ ազգին. բաժին հանէ աղքատ ընտանեաց առանց երբէք զրկելոյ իւր տան ընտանիքը: Երջանիկ կը լինէր ազգը երջանիկ կը լինէր մեր հայրենիքը եթէ ազգին մէջ գըտնուած իւրաքանչիւր գանձատէր անձինքը առանց կտակի և յիշատակի չմեռնէին:

Սակայն շատ բուռն է մարդկանց մոլեկան ագահութիւնը. որ մարդոյ սիրտ և հոգին կը կապէ մինչև վերջին շունչ. նա հոգին տալու կը յօժարի, քան թէ գանձ ու ստացուածք. նա իւր անգին հոգւոյն փրկանաց համար երբէք չի հաճիր դուրնաքեայ գանձ փոխարինել. թէև հնար լինէր հոգին անդրէն վերադարձնել: Ուստի ագահ մարդոց կտակը և անյագ տենչն այն է, որ իւր գանձը իւր հետ ՚ի գերեզման տանի ու թաղէ: Եւ ճշմարիտ է այս, ապա թէ ոչ՝ ի՛նչ է պատճառ, որ աշխարհիս ագահները շատ անգամ իրենց գանձերը հողին տակ անյայտ կը թաղեն. ուր կը թաղեն նաև իրենց քարածեռ սիրտը, ինչպէս կը վկայէ սրտագէտ Յիսուս թէ. « Ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին »:

Ոչինչ զանազանութիւն չունին ազատէն նաև
 սոցալիսի մարդիկ, որ չափազանց ընտանեակէր
 լինելով վաղուան և ապագային համար հեթա-
 նոսաբար կը հողան. իրենց ամէն ջանք ու
 վաստակը միայն իրենց գերդաստանին համար
 կը պատրաստեն. նոցա համար բնաւ փոյթ չէ
 ընկերսիրութեան պարտիք և կամ ազգին կա-
 րօտ ընտանիք. Եկեղեցի, դպրոց, կտակ և յի-
 շատակ. այս ամէն՝ նոցա և այնպիսեաց մտքէն
 հանուած է, Նոքա Նախախնամութեան չեն
 հաւատար և կուրանան երկնից Հօր խնամք,
 որ ճնճղկան բունի ընտանիքը չի մոռնար. այն-
 պիսիք որ թէպէտ իրենց ժլատութեան ձեռք
 մինչև ՚ի գերեզման կը կծկեն, բայց ՚ի պա-
 տիժ նոցա՝ ժառանգորդ ընտանիքը ամենայն
 շռայլութեամբ կը բանան իրենց ձեռքը ու ան-
 խնայ կը վատենն բոլոր հարստութեան գանձը.
 որով ճոխ մեծատան ընտանիքը՝ կարօտ մուրա-
 ցիկ կը լինին. որոց բազմաթիւ օրինակներն
 անցելոյն մէջ պատմութիւն կաւանդէ և ներ-
 կային մէջ մեք մեր աչքով կը տեսնամք:

Կտակարարութեան պարտիք միայն մեծա-
 տան ընտանեաց համար չէ. այլ ազգին իւրա-
 քանչիւր անհատ անձինքը առանձին իրենց
 կտակն ունին: Արծաթով և անարծաթ կղեր-

ներք թող մէկը իւր արծաթը կտակէ . միւսն
 իւր գիրք և խրատ : թող կտակեն նոքա Եկե-
 ղեցւոյ որդիքներուն , հայրենատուր հաւատք
 և հարց աւանդութիւնք պինդ պահել : թող
 կտակեն նոքա Հայոց գաղթական զաւակներուն
 ուր որ կը լինին . Արարատ և Էջմիածնի կաթու-
 ղիկէն չի մոռնան , թող կտակեն նոքա սուրբ
 Ղեւոնդեանց ու վարդանանց խաչ և անձնա-
 նուիրութիւնը : թող կտակէ քաղաքացին իւր
 ընտանեաց՝ արհեստ , աշխատութիւն , վաճա-
 քաչահուծիւն , տնտեսութիւն , խնայութիւն և
 բարոյական կեանք : Իսկ շինական աշխատամաշ
 ծերունիքը թող այս կտակն աւանդեն ընտան-
 եաց . որ սիրեն հին նահապետական պարզ
 կեանք , սիրեն մշակութիւն , հողն ու մաճը .
 երբէք չի վաճառեն իրենց կեանքը ու հարըս-
 տութեան մշտաբուխ աղբիւրը . այսինքն հայ-
 բնի երկիրն ու գետին :

Եւ դուք ի՞նչ պիտի կտակէք , հայրենեաց
 կարօտ խեղճ պանդուխտ Հայեր . դուք կտա-
 կեցէք ձեր զաւակաց ու եղբարց . երբ օտա-
 թութեան մէջ կը հասնի ձեր վերայ , ո՛հ , մահ
 ու գերեզման : Այո՛ , նզովիւք կտակեցէք , որ
 նոքա հայրենի հողին ու երկրին մէջ տքնին ու
 աշխատին , թող չարաչար լինի , թող կռիտհա-

րին , թող հարստահարին , թող մաշին , թող մեռնին , թող իրենց գերեզման իրենց արտիկ լինի , թող չիգան այս տանջանաց տեղը . ուր ձեր ազատ եղն ու մտճ թողլով՝ բեռնակիր կը լինիք . և շատ անգամ բեռանց ծանրութենէն ձեր ոսկորները կը ճարճատին և ձեր հուժկու բազուկները կը թուլնան . երես ընդ գետին կը թաւալիք վողոցի սալայատակաց վերայ . կը բառնան ու կը թաղին զձեզ անյիշատակ շիրիմներու մէջ , ուր չեն ու չկան ընտանեկան գերեզման , ձեր պապերուն ու մամերուն խաչաքարեր և ոսկորները :


Իսկ դու , հէք Արծուիդ վաստուրական . քո կտակն ի՞նչ է . թէ որ մահն զքեզ պանդրթտութեան մէջ նետահարէ . «կամք Յեառն օրհնեալ եղիցի» կասեմ և կաւանդեմ իմ կըտակը իմ սիրելի , հաւատարիմ և մտերիմ Ազգին . որ զիս բառնան տանին այն հողին աւանդեն . և դենն զիս ի դիր հանգստեան վարագայ խաչաքարերու տակը . ուր թերևս շիրիմն ու ոսկորներս խառնուի . Եղիսէի նման սուրբ հարց շիրիմներուն հետը . ես մեղապարտ մեռեալս , արժանի լինիմ նորոգ յարութեան ննջելով ՚ի Գրիստոս հաւատով և յուսով :

ԺԶ.

ՅԱՆ ԵՐԵՅ

ԵՒ

ԻՒՐ ՄԱՐՏԻՔ



ԻՆՉՊԻՍ ընդհանուր Հայրապետ Հայոց իւրեւ ծայրագոյն հովիւ, տեսուչ և տնտես է բոլոր Հայ գերդաստանաց վերայ. և ինչպէս վիճակաւոր Եպիսկոպոսները իւրաքանչիւր իրենց վիճակին վերայ նոյն հոգեւոր տնտեսութեան պաշտօնն ունին. այսպէս ևս ընտանեկան և առ տնին Եկեղեցւոյ փոքրիկ հօտին՝ փոքրիկ հովիւներն են Տաներէց քահանայք. որոց միայն յանձնուած է ընտանեկան հոգեւոր պէտքերը հոգալ ու մատակարարել, Տաներէց, որ

Թէպէտ իւր վիճակաւոր Եպիսկոպոսին իշխա-
նութեան տակ ստրուկ համարուած է . և նոյն
իսկ ժողովուրդին առաջ այնչափ ըստ արժան-
ւոյն պատուասիրեալ չէ . մանաւանդ մեր ան-
բարեկարգ ժամանակի մէջ , յորում Եկեղեցւոյ
տնտեսութեան վաղեմի օրէնք և կանոնական
վճիւններ այլափոխուած են : Բայց Տաներէց
քահանային հովուական պարտիքն ու կո-
չումն՝ շատ մեծ , շատ նուիրական և շատ
արդիւնաւոր հոգեւոր աշխատութեան մշակու-
թիւնն է : Վասն զի նորա սեպհական պարտիքն
է , ընտանեաց նորածին երախայքը սուրբ Եկե-
ղեցւոյ մկրտարանին ջրով մաքրել ու որդեգրել
Աստուծոյ : Նորա պարտիքն է ամուսնութեան
սուրբ պսակ դնել . նորա պարտիքն է խոս-
տովանութեամբ ընտանեկան դաղտնի ու յայտնի
վէրքերը դարմանելով բժշկել : Նորա պար-
տիքն է մահուան ծանր ստուերին տակ հեծող
հիւանդը սուրբ և ջերմեռանդ աղօթքով կազ-
դուրել և հոգին հաւատով զօրացուցանել :
Նորա պարտիքն է ննջեցեալը ՚ի հող դնել ,
ու կնքել նորա գերեզմանը Խաչիւ և Աւետա-
րանով : Նորա պարտիքն է սգաւոր ընտանեաց
սուգը չափաւորել . և խրատել որ հեթանոսա-
բար չողբան յոյս ու հաւատ չունելով հանդերձ

եալ կենաց : Նորա մեծ պարտիքն է աղ-
քատ ու չքաւոր ընտանիքը՝ չէ թէ միայն սոսկ
միթիթարական խօսքերով սփոփել, այլ արդ-
եամբ իբրև ճշմարիտ հայր հոգալ նոցա պէտքն
ու կարիքը . հարուստ և ողորմած ընտանիք-
ներէն հայթայթելով՝ թշուառ տնանկին կարօ-
տաւոր զաւակները կերակրել :

Նորա մեծ և սեպուհ պարտիքն է, երկրի
վերայ իբրև երկրաւոր հայր՝ խնամ տանել բո-
լոր ծխական ընտանեաց . մանաւանդ նոցա պա-
տահար թշուառութեանց մէջ Յիսուսին նկա-
րադրած գորովալիր դթութեան տիպարը լի-
ովին յանձին բերել . 'ի բանտ դնալ, բանտա-
ւորին կապանքը դիւրացնել, հիւանդին 'ի տես
դնալ, սուրբ Պօղոսին թաշկինակով՝ նորա
քրտինքը սրբել, դեղ ու ճար գտնել . թէ քաղց-
եալ է՝ հաց տալ, թէ ծարաւ է՝ ջուր տալ . թէ
մերկ է՝ հանդերձ, և այլն : Եթէ այսպէս վարի
Յաներէց հովիւն, եթէ իւր այս պարտիքները
խզճի մտօք կատարէ, յիրաւի՝ յայնժամ տի-
րապէս Քահանայ Աստուծոյ կը կոչուի, լինելով
կատարեալ որպէս Իրկնաւոր Հայր :

Տակաւին քան զամէն առաւել մեծ պար-
տիք մի ունի Տաներէց հովիւը, զոր պէտք չէ
մտնալ, և ի՞նչ է, առ ամին հողեւոր դաս-

տիարակութիւնը . որ պէտք է հաւասար ըն-
թանայ ծնողաց դաստիարակութեան հետ , Ես
այնպէս կը դատիմ , որ կրօնի և հոգեւոր դաս-
տիարակութեան պարտիքը՝ դպրոցի վարժա-
պետին չէ , այլ Տաներէց Քահանային բաժին
է . որ պարտաւոր լինելով իբրև առ տնին Եկե-
ղեցւոյ տնտես՝ պէտք է ինքնին բաշխէ ու մա-
տակարարէ հոգևոր դաստիարակութեան հացը
ընտանեկան սեղանին վերայ . և այդ հացն է
միմիայն Աւետարան . բովանդակ սուրբ Գիրք ,
որ է կենաց բան . որոց հետը խառնել խիստ
վայելուչ է մեր սուրբ Հարց ու վարդապետաց
դիւրալուր խրատները . որք առ հասարակ
դրեթէ սուրբ Գրոց մտքին պարզախօս բացատ-
րութիւնք են :

Ճշմարիտ խօսելով , ընտանեկան հոգևոր վի-
ճակը և կեանք յայնժամ կ'երդմանի, երբ Տանե-
րէց Քահանայն տգէտ և անուս է . որ բա-
ւական կը համարի իւր պաշտօնին համար Սաղ-
մոս , Շարական և Մաշտոց . որ միայն Եկեղեցւոյ
խորհուրդներ և ծիսական կարգերը կատարե-
լով քահանայութեան բարձր պաշտօնի միւս
պարտիքները անկարեւոր կը դատի : Տաներէց
Քահանային տգիտութիւնը շատ մեղադրելի է .
թերևս փոքր ինչ այդ մեղադրանք թերթեանար :

Եթէ բարի ու անբասիր վարքով և գործնական ընտիր օրինակով տգէտ Քահանայն քողաւորելով ծածկէր իւր տգիտութիւնը, ու տգիտութեամբ այնչափ մնասակար չէր լինէր ընտանեկան կենաց, խօսքին տեղը՝ միայն բարի օրինակը քարոզելով: Բայց թէ գիտուն և թէ տգէտ Տաներէց երբ իր վարուց ու պաշտօնին մէջ կը զեղծանի. երբ բարի օրինակին տեղը՝ դայթագղութեան չարօրինակ կուտայ, այնուհետեւ բարի և երկիւղած ընտանեաց համար՝ հոգեպէս մեծ վտանգ է. որ թէ չգտնեն ուրիշ արժանաւոր հովիւ մի՛ կը պարտաւորին առանց քահանայի մնալ, Աստուծոյ հովութիւնը խնդրել:

Սակայն արժանաւոր և անարժան պաշտօնէից մէջ ընտրութիւն առնել պէտք է. երբ ընտանեաց ձեռքն է այդ իրաւունքը և ազատութիւնը. թող խորհին և այնպէս ընտրեն Տաներէց Քահանայն: Եւ եթէ գտնեն այդ արժանաւոր ու պատուական պաշտօնեայն, պէտք է կրկին պատուոյ արժանի համարին զինքն. որոյ համար իսկ յատկապէս կը պատուիրէ Առաքեալը: Եթէ ընտանեաց իրաւունքն է Տաներէց Քահանայէն պահանջել, ինչ որ քահանայութեան պաշտօնին և կարգին վայելուչ պարտիքն է, նոյն Տաներէց Քահանային իրա-

ւունքն է՝ պահանջել իւր պաշտամանն ու հոգեւոր աշխատութեան վարձքը : Մշակը՝ իւր վարձուց արժանի է կը խօսի Տէր . ո՛վ կարող է ժխտել թէ իրաւունք չէ այս . և Առաքելը կը հաստատէ սոյն իրաւունքը , թէ « Չինուորը իւր թռչակով չի զինուորիր » . և ուրիշ խօսքով դարձեալ նոյն բանը կը կրկնէ . թէ « Սեղանոյ պաշտօնեայն , արժան է որ նոյն սեղանէն կերակրուի » :

Արդ ընտանեկան սեղանոյն պաշտօնեայն ճաներէցն է . պէտք է որ սեղանին հացէն լիապէս կերակրուի . ապա եթէ զրկի , անհատուցումն , անվարձ մնայ իւր հոգեւոր մշակութիւնը . նա հոգւոց հանելով կը կատարէ իւր պաշտօնը . որով ընտանեկան փարախին փոքրիկ հօտը պարտաւոր կը մնայ իւր հովուին առաջ . ոչ կաթէն՝ կաթ , և ոչ բուրդէն՝ բուրդը պարտեաց փոխարէն վճարելով : Եւ միթէ իրաւունք ունի՞ն յայնժամ՝ ճաներէց մշակին վարձք հատանող . ընտանիքը տրտունջ բառնալ ու միշտ գանգատել թէ զմեզ հովուելու և մեր հոգևոր պիտոյք հոգալու բարի հովիւ և արժանաւոր պաշտօնեայ չունիմք :

Այլ դուք , ո՛վ ժողովուրդ . և ընտանիք Հայոց . մի՛ սրտմտիք , թէ ասեմ , ձեր տրտունջն

անիրաւ է . Ժողովուրդի ընտիր սրդիքներէն ո՛վ յանձն կառնու քեզ համար հովիւ ու Տան երէց լինել . երբ դու արժանաւորին և անար- ժանին մէջ ընտրութիւն չունիս : Դու Աւետա- րանին ազատ զինուոր և Եկեղեցւոյ պատուար- ժան պաշտօնեայն ճնշեր ստրկացուցերես չքա- ւորութեան լուծին տակը , և կըստասես տա- կաւին որ նոքա վեհանձն և ազնուական կեր- պով շարժին . ձրի շնորհը՝ ձրի տան , չազահին , անաչառ լինին , ճշմարտախօս լինին , սուրբ լի- նին , բարի վարքով փայլին , բարի օրինակով հանդիսանան , օրինաց նախանձաւոր լինին , թէ յանցապարտ լինիս զքեզ կշտամբեն . թէ չուղղիս՝ հեթանոս համարին , թէ յանդգնիս թէողոս կայսեր նման ձեռք լի արիւնով Եկե- ղեցւոյ դաւիթը մտնել , Ամբրոսիոս քաջ հով- ուին պէս իբրև Ամենակային ահարկու հրեշ- տակը քո դէմ կենալ ու Եկեղեցւոյ դաւթէն զքեզ արտաքս մերժել :

Ահաւասիկ իմ դատաստանս այս է : ես գի- տեմ դուք չէք հաւանիր , կասէք . թէ այդ խտտութիւն է , հաւատաքննութիւն է , անցաւ այդ դարը , պէտք է մեր Տաներէց ֆահա- նայք , հողեւոր կատարելութեամբ հանդերձ՝ քաղաքակիրթ ու քաղաքավար լինին . ճանչ-

նան ժամանակ և ժամանակի պահանջումները .
բարեկամ լինին յառաջագիմութեան , և մեր
ընտանիքը 'ի նոյն յորդորեն ու հոմոզեն :

Ուրեմն ըստ ձեր դատաստանին , եթէ ըն-
տանեկան կեանքին շահն ու պէտքը այդպիսի
հոգեւոր ժիր մշակ կը պահանջէ իւր անդին և
անդաստանին համար , հապա այլ ևս ի՞նչ կը
վարանիք , ի՞նչ կը դեղւելիք , ճանչցէք , որո-
շեցէք ու ընտրեցէք այն արժանաւոր անձն
բարի և առաքինի ընտանեաց մէջէն , ընծա-
յացուն երկնից հրեշտակներէն չէ . մարդկային
ընտանեաց սեռէն է , և ընտանիքը կը ծնի զայն .
ձեր իրաւունքն է , ձեր ձեռքն է , ընտիր ըն-
տիր անձինք որոշեցէք և ապա ածէք Եպիսկո-
պոսին առաջ , [Թող ձեռն դնէ և օրհնէ ձեզ]
Քահանայ :

Բայց դուք , երբ պիտանին ու պատուաւորը ,
ուսեալ և արժանաւոր անձինքը կը [Թողուք .
անպատիւ , տգէտ և անարժանը յառաջ կը վա-
րէք , կընտրէք և կը վկայէք իսկ Եպիսկոպոսին
և Եկեղեցւոյն առաջ , եթէ ճշտիւ հարցաքննու-
թիւն լինի , ժողով և Եպիսկոպոսը արժանի
չհամարին ձեռնադրութեան . ես դիտեմ ու
տեսայ , թէ որքան կը խըստանաք ու կամակոր
յամառութեամբ ստահակ միջոցները 'ի դործ

դնելով վերջապէս անարժան անձն 'ի պատիւ
Քահանայութեան կը հանէք : Եւ այնուհետեւ
երբ մտաբերելով կըզգայք թէ սխալած էք ,
կըստըջանայք , տրտունջ կը բառնաք ու կսկը-
սիք շարաշար ձեր ընտրած ու հաւնած կղերը
դատել ու բամբասել : Եւ շատ անգամ եւս
ամանց անարժանութիւնը առիթ բռնելով ամ-
բողջ Եկեղեցական դասն անարգելով , ոտնհա-
րելով վատաբանելով նշաւակ կը կացուցանէք
զիրենք աշխարհին առաջ , Չգիտեմ կը կարծէք
ու կը հաւատա՞յք թէ այդպիսով կուղղէք զի-
րենք , որոց անուղղութիւնը Քահանայութենէն
յառաջ բնաւորեալ է . և դուք յաճախ կը տես-
նայիք զիրենք . վտրձը ձեր աչքին առաջն էր .
դուք քաջ գիտէիք ու կը ճանաչէիք :

Բայց թոյլ տուէք որ անաչառ խօսիմ , միթէ
դուք իբրու թէ կարեկից լինելով մարդասիրու-
թեան պատրուակաւ ձեր բարեկամաց հաց ու
դործ ճարելու համար շայխատեցա՞ք զիրենք
Քահանայ ձեռնադրել տալու , և յետոյ իբրև մեծ
վարձք և առաքինութիւն համարելով , կը խօ-
սիք ևս պարծանօք . թէ « Եօնճի՛ն ընտնէ՛ք Եւ-
ստիկոսէ՛ն ուղտեցի՛ն » և այլն : Այդպէ՛ս է , մի ըն-
տանիք իւր թշուառ վիճակէն ազատելու հա-
մար՝ ուրիշ ծխական ընտանիքները հողեպէս

Թշուառացուցիք, Չգիտեմ. Եկեղեցւոյ դե-
բադոյն Դատաւորին առաջ ո՞րն առաւել դա-
տապարտութեան արժանի է, Եպիսկոպոսը,
որ աչառեց ու ձեռնադրեց, թէ Ժողովուրդը,
որ զայն ընտրեց ու ընծայեց :


Այլ կը թողում այս մասն այժմ, մտադիր
լինելով յայլում տեղւոյ ընդարձակապէս խօ-
սիլ, և ժամանակն իսկ կը պահանջէ զայդ-
վասն զի շատ տարապարտ տրտունջները կը
բարձրանան երկու կողմէն կղերին ու Ժողովուր-
դին . որք ընդ աչս դատելով զիրեար կը բամ-
բասեն չարաչար առանց դատաստանի ու քըն-
նութեան :

Իսկ մեք, որ նոյն կղերացի դատուն տրուպն
ու յետինն եմք, յորդոր կը կարդամք նախ
բոլոր Տաներէց քահանայից, որ ճանչնան իրենց
սուրբ պարտիքը . յիշեն որ պատասխանատու
են նորա առաջ, որ կսպառնայ ու համար կը պա-
հանջէ ամէն հովիւներէն թէ մեծ և թէ փոքր .
Տաներէցն ևս իւր տան հաշիւը պիտի տայ :

Նաև յորդոր կը մատուցանեմ բոլոր Հայ
ընտանեաց, որք եթէ գիտեն խղճիւ թէ հո-
գեւոր և արժանաւոր պաշտօնէին պէտքն ան-
հրաժեշտ է . ուրեմն թող աչառելով անընտրող
չը լինին, թող խոտանն ու անպիտանը ՚ի բաց

Թողուն . ընտրեն և իրենց բարի որդիքներէն
ընծայեն Աստուծոյ Եկեղեցւոյն . արդար Աբելին
պէս արդարապէս որոշելով Աստուծոյ բաժին և
ոչ թէ ժլատ ու խնայող Կայէնին պէս անարդ
ու անպէտները հանել Աստուծոյ մասն :

Արդ , դուք ո՛վ ընտանիք Հայոց , ճառիս
բանը՝ այս մի բանով աւարտեմ . եթէ Տաներէց
Քահանայն ձերն է , ձեզ համար է , և ձեր հո-
գեւոր մշակն է , ձեր բարին դուք ինքնին ճանչ-
ցէք ու ընտրեցէք . ձեր մշակն ընտրեցէք , ար-
ժանաւորն ընտրեցէք , ուսեալն ընտրեցէք ,
հաւատարիմն ընտրեցէք . և եթէ կա՛յ տակա-
ւին ձեր մէջը՝ հրեշտակակրօնն ընտրեցէք . և
քանի որ ընտրութեան այս իրաւունքը ձեր
ձեռքն է , դուք այսօր և յաւիտեան իրաւունք
չունիք գանգատիլ :



ԺԷ.

ԸՆԾԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԱՌԱՆՔ

ԵՒ

ԱԶԱՅՈՒԹԻՒՆ



ԸՆԴՀԱՆՈՒՐ տեսութեամբ խօսելով ընտանեկան պատկառանք և ազատութիւնը, երկուքն ևս մարդոյն համար 'ի բնութենէ տրուած ազատ կամաց և բնական զգացման օժիտներն են: Միայն թէ մարդ պարտաւոր է զայն օրինօք վարել և ոչ թէ ծայրայեղ ազատավար մտլութեամբ կամ նախապաշարեալ հնութեամբ:

Մեր հին ընտանեկան կեանքին սաստիկ պատկառանք և ամօթխածութիւնը, որ կնոջ դլուխ և երեսը թանձր քօղով կը ծածկէր ու կը փակէր զայն տան ու վրանին տակը, և նորահարսն պարտաւոր էր եօթնամեայ լու-

Թիւնը պահել իբրև պահք . անշուշտ նոր աշխարհին առաջ շատ պարսաւելի վարմունք է :

Իսկ հին աշխարհը, որոյ Նահապետները դեռ մեր հայրենեաց մէջ շատ կան, նոքա դատելով կը դատեն աշխարհի ընտանեկան կեանքին ծայրայեղ ազատութիւնը . որ իսպառ կը բառնայ պատկառանաց քօղն ու շուքը, կինն ազատ կը թողու ընկերական հրապարակին մէջ, որ նա նոյն իսկ իւր հարսանեաց օրը լեզուն բանայ, խօսի, պարէ, իբրև հարսնեւոր զուարճանայ և նոցա հետը խնճոյից սեղանին վերայ հրճուի և մերթ եւս ծիծաղ ածակէ, որովհետև ըստ Պղատոնի սահմանին՝ Միթէ կինն ևս ծիծաղական մարդ չէ :

Ուղղապէս դատելով, երկու աշխարհի ծայրայեղ վարմունքն ևս չափազանցութիւն կը համարուին ուղիղ բանաւորութեան և բարոյական օրինաց առաջը : Ափսո՛ս, որ այս աշխարհիս մէջ միջին և ուղիղ ճանապարհով քալել դժուարագոյն է : Մարդիկ սովորած են չափազանցել և իրենց կիրքերէն վարուելով կը խոտորին միշտ յաջ կամ յահեակ . միջասահման ուղիղ ճամբուն վերայ խիստ սակաւ մարդիկ կը յաջողին որ համեստ ընտանեկան կեանքի ուղղութիւնը պահելով չեն խոտորիր, հետեւելով միշտ բա-

րոյական օրինաց և բնական խղճին դիտակցութեան . որք լոյս են և միշտ մարդը գէտ 'ի լոյս և ուղղութիւն կառաջնորդեն :

Թողունք հին և նոր աշխարհի ծայրայեղութեան մասերը՝ ստոյգ խոստովանելով, որ ամբլթոյ զգացումն ու պատկառանքը մարդոյն ընտանեկան կեանքին սեպհական վայելուչ զարդն ու պատիւն է : Այն ընտանիքը, որ այս չքնաղ զարդը ամենայն համեստութեամբ հաղած է, միշտ պատկառելի կը հանդիսանայ երկնից և աշխարհի առաջ :

Ընտանեկան պատկառանք նախ պէտք է ամենայն մեծարանօք յարգուի ու պահուի նոյն ընտանեկան շրջանին մէջ . ուր ծերունի նահապետ և մայր տիկին բարձրաթու կը բազմին . որոց պարտաւոր են շուք դնել ու պատկառիլ բոլոր զաւակներ, հարսներ, թոռներ . և ուրիշ այլ ամէն ընտանեկան պարագայք :

Գիտնալ արժան է նաև որ պատկառանքը միայն փոքրերուն պարտիք չէ, այլ և նոյն խի մեծերն պարտաւոր են զգուշաւոր պատկառանօք վարիլ փոքրերուն հետը : Վասն զի մեծերն երբ պատկառանքն 'ի բաց թողուն, այնուհետև 'ի զուր է պահանջել, որ փոքրերը ամաչեն : Եւ եթէ ջանան մեծերը ուղղել զանոնք,

նոքա քաջ գիտեն դարձեալ խեղափառին առակը
յառաջ բերել, ցոյց տալով թէ մեծերն իրա-
ւունք չունին յանդիմանելու, քանի որ իրենց
միակողմանի քայլերով փոքրերուն օրինակ կու-
տան. տղայոց ներկայութիւնը բանի տեղ չի
դնելով՝ անզգոյշ կը շարժին, անպատկառ կը
խօսին, ծուռ կը քայլեն. և զարմանալին այն է
որ մերթ ևս կը զայրանան իսկ, եթէ փոքրերը
իրենց նման շարժին ու քայլեն:

Յիրաւի՛ ընտանեւ վարութեան մէջ եթէ մաս-
նաւորապէս թուենք՝ շատ անպատշաճ շարժ-
մունքները կը լինին. բայց ամենէն աւելի տպա-
ւորիչ և թիւնաւորիչ է անպատկառ վարմունքը
անմեղ տղայոց առաջ: Նոքա խիստ արագապէս
կընդօրինակեն զայն. թող յոռի ու շար լինի,
այ ինչ փոյթ չէ. զի նոքա միամիտ են ու տես-
նալով կը հաւատան թէ ինչ որ մեծերը գոր-
ծեն՝ բարի ու անֆլնաս է:

Այր մարդիկ, որ առաւել ազատ վարմունք
ունին թէ ընտանեկան յարկին տակը և թէ ար-
տաքոյ ընկերութեան մէջ. նոքա պատկառա-
նաց ամօթը աւելի կանանց սեռին կը վերածեն.
որոյ շատ օրինակները կը տեսնամք նահապե-
տական կենաց մէջ, Աբրահամու վրանի տակ,
ուր երբ երեք հրեշտակները հիւր կուգան:

Սարա որ պառաւ և մեծ տիկին էր Նահապետի
տան՝ կը պատկառի տեսնուիլ հիւրերուն հետը .
այլ յետուստ խորանին պահուելով՝ ականջ կը
դնէր երբ հրեշտակներ կը խօսէին աւետիս տա-
լով հանդերձեալ զաւակին համար : Նոյնպէս և
Ռեբեկայ մինչ բացերես ուղտին վերայ նստած
Խառանու երկրէն դէպ Աբրահամու տուն կու-
գար , յանկարծ կը տեսնար Իսահակ փեսայա-
ցուն իւր , որ 'ի դբօսանս ելած էր 'ի դաշտ .
Իսկոյն ուղտէն վար իջնալով կը քօղաւորէ ե-
րեսը , պատիւ և շուք տալով իւր նորատես
ամուսնոյն :

Այս պատկառանաց հին քօղ գրէթէ չորս
հազար տարիէն 'ի վեր դեռ մեծ խնամով կը
պահեն մեր Հայաստանի հարսները . այն ինչ
գաղթական Հայոց ընտանեկան կեանքին նոր
ազատութիւնը՝ զայն վերցնել կը ջանայ . ինչ-
պէս ուրիշ շատ պատկառանաց կերպերը թողու-
ցեր է արդէն , որք մի մի յատկանիշ էին հայ-
կական հնութեան ու կեանքին :

Բայց հին աշխարհի ընտանեկան խիստ պատ-
կառանաց այս վարմունքը՝ որ ինչպէս գրեցի ,
զկինն իբրև խուլ ու համր էակ մի կը ճնշէ ան-
խօս լռութեան մէջ և որ տակաւին կը տիրէ
այդ վաղեմի սովորութիւնը՝ նոր քաղաքակիրթ

աշխարհին առաջ ոչ ընտանեկան առաքինութիւն կը համարուի և ոչ ազգային գովելի յատկութիւն : Վասն զի աշխարհի և ազգերու նոր փոփոխութեանց հետը , գիտութեան և ազատութեան հետը , անշուշտ բնական է , որ ընտանեկան կեանքն ևս իւր հին դրութենէն փոփոխի . և այս յեղափոխութեան մէջ այր մարդիկ զկին իւր զրկանքէն ազատելով՝ նմա ևս բաժին տուին կրթութիւն և դաստիարակութիւն : Առաջին անգամ երբ կինը ոչ գիրը արտասանեց՝ ինքնին լուծեց իւր համրութիւնը , կինը կարգաց ու ճանչցաւ իւր իրաւունքն , բողոքեց ու հռչակեց աշխարհին առաջ թէ ինքն ևս իւր ամուսնոյն չափ ազատութեան իրաւունք ունի . կինը ընտանեաց մայր է , պէտք է խօսի և այր մարդոց ընկերութեան մէջ հաւասար աթոռ ունենայ , կին եթէ իւր ամուսնոյն ազատ ու ճշմարիտ կենակիցն է , արժան է , որ նա աշխարհի կեանքը ճանչնայ , մարդկային ընդհանուր ընկերութեան հետ մտերմանայ , խորհիլ գիտնայ , մտածել սովորի , փոքր 'ի շատէ վերահասու լինի այն ամէն իրաց , ինչ որ մտաւոր ու բանաւոր մարդոյն բնական և ազատ իրաւունք կը պահանջեն :

Մակայն մեր դարու յառկառասէր ու պար-

կեչտ Նահապետներ ու մամիկնեբը երբ նոր աշխարհի հանդէս մտնեն՝ անհնար է, որ չի գայթակղին շարաշար ու մերթ ևս սրտմտելով, զարանալով տրրտունջ չը բառնան . թէ վա՛յ մեզ, ի՞նչ ժամանակի հասանք, ամօթ և պատկառանք աշխարհէս վերջացաւ . կին ընտանեկան լուարանէն դուրս ելաւ . կին լեղուն բացեց ճարտասան դարձաւ . կին քօղն ու լայակ ձգեց, քօղին տեղը հիւսկէն վարդածաղիկ խոյր դրաւ . կին հրապարակ ելաւ, ընկերութեան մէջ մտաւ . կին հաւասար մեզ հետ պատիւ ստացաւ . նա համարձակ կը խօսի, համարձակ կը վիճի կը դատի և կը պատասխանէ և այլն, Մէկ խօսքով՝ անմուռնչ կին՝ խօսուն բանադատ դարձաւ . կարգալ դրել սորվելով, լեղուադէտ լինելով, նա կը ճգնի մեզ հետ խորհրդական լինել, աշխարհ կառավարել, օրէնք տալ, Սահմանադրութի՛ւն դռչել, թերևս օր մի այլ ևս աւելի յառաջ երթայ ու մեզ հետ հաւասար քուէ տալու իրաւունք խնդրէ . թողու ընտանեկան ամէն հոգն ու կեանք, թողու ամուսնական սէր, ինքնին ղէնք առնու, զինուոր դառնայ, պատերազմի դաշտ երթայ, արիւն թափէ և խստանայ սրտին բնական գորովն ու մեռցնէ մայրական փափուկ զգացումն : Աւա՛ղ այն ժա-

մանակին , յորում աշխարհիս կարգ և օրէնք
պիտի խանգարուին . եօթն հազար տարուան
վաղեմի ընտանեկան շէնքը քանդուի և կնոջ
այս անպատշաճ յառաջդիմութիւնը՝ տանի միջ
դիրենք մինչև ծայրայեղ ազատութեան վի-
ճակը : Ո՛վ այնուհետև կարող է զսպել զիրենք .
աշխարհիս բոլոր տէրութիւնք եթէ միաբանե-
լով դաշնակցին , մի թէ կարո՞ղ են թումբ քա-
շել նոցա զօրութեան և արշաւանաց դէմ . ո՛վ
կը տարակուսի այս անկարգ ապագային վե-
րայ . որոյ ստոյգ նշանները՝ ներկայն իսկ այժ-
մէն ցոյց կուտայ և մեք կը հաւատամք Զօրա-
բարէլի մեծ վկայութեանն՝ թէ կին զօրաւոր է
ու կը տիրէ : Եթէ կին զօրաւոր էր մինչ ուս-
մունք չունէր . քանի՞ առաւել պիտի զօրանայ
երբ ուսման և ազատութեան զէնքով զինուորի
կը լսե՞ս խոհական ընթերցող . մեր դարու
նահապետ ծերոց այս նախանձաւոր դատաս-
տանը . չգիտեմ կընդունի՞ս . որ շատ մասերու
մէջ իւր ստուգութիւն ունի : Մեր կեանքի ազա-
դայն միշտ ներկայէն կըսկսի և ներկայն ազա-
դային կարապետն է : Եթէ ուշի ուշով կշռենք
ներկային ծայրայեղութիւնը՝ ծերոց մարդա-
բէութիւն պիտի կատարուի թէ ոչ և թէ անա-
զան : Մի բան կայ միայն , որ սոյն ձախորդ

մարդարէութեան երազը դէպ 'ի բարին կատարել կուտայ և այդ բանն է՝ կանանց սեռին ուղիղ և պատշաճաւոր դաստիարակութիւնը . զոր հազար դիր կրկնեցի ու դարձեալ կը կրկնեմ Ռուր աշխարհ այսպէս կը դատի . երբ նոր ազատութեան իրաւունքը կիներուն գլխէն վերցուց այն պատկառանաց ճնշող քօղը . պէտք է ճշմարիտ ու պայծառ դաստիարակութեամբ քօղաւորէ նոցա ամօթխած ճակատը . զորով թէ հին մթութեան քօղ ստուեր կածէր . թող լուսոյ քօղով կին իւր աչքը բանայ ու տեսնայ աշխարհին դործերը : Առանց այս պատսպարող քօղին՝ կնոջ ծայրայեղ անդաստիարակ ազատութիւնը դէպ 'ի խաւար կը տանի զինքն . և երբ կնոջ ոտքը դըլթի ու սահի՝ ողջ ընտանեկան կեանքը իւր հետ կը կործանէ : Այո՛, ուղղել պէտք է կնոջ ընթացքը որ այդ վտանգաւոր խորխորատէն յետս կասի : Անհրաժեշտ հարկ է նորա միտք ու հոգին մշակել և ապա թողուլ ազատ . որպէս զի զօրանայ կին և իւր կթոտ ոտքով կարողանայ ազատութեան մէջ անսայթաք ու անխոտոր քայլել , և ճշմարիտ դաստիարակութեան մայրերը լինելով՝ նոր ընտանիք , նոր կեանք և նոր բախտ կազմեն Հայոց անբախտ ժողովուրդին : Երջանիկ օրեր են այն օրերը երբ

Հայոց տիկնայք ու կանայք հին պատկառանաց շնորհին հետը՝ նոր դաստիարակութեան լուսով ևս կը փայլին և յայնժամ միայն կարող են իսկապէս նմանիլ Եւրոպիոյ կրթեալ և ժրագլուխ կիներուն : Ապա թէ ոչ, սոսկ արտաքին կեղծ երեւոյթով, քաղաքավարի շարժման կերպերով պերճ հագուստներու նոր նոր ձեւերով, առանց մայրենի լեզուին՝ քանի մի ֆրանսերենի բառերը հնչելով, Հայուն հին պար մոռնալով՝ նոր պար խաղալով, մեր հայրենի կամ մայրենի անուշակ երգեր թողլով՝ անընտանի դաշնակ զարնելով՝ Հայոց ընտանեկան կեանքը դէպ 'ի լաւագոյն չի փոխիր . այլ յաւէտ կը վատթարանայ հին ու նոր զեղծմունքները իրար խառնուելով . որով յետին ազատութիւնը՝ թերևս չար լինի քան զառաջինն . և յայնժամ իրաւունք չունի՞ն պատկառասէր ընտանիք նզովք կարդալ նոր աշխարհի ծայրայեղ ազատութանն և դարձեալ բարւոք համարին . կինը ընկերական հրապարակէն հանել և անդրէն տանել հին նահապետական վրանին տակ փակել և թանձր քօղով ծածկել նորա գլուխ, որ այլ ևս արև և ազատութիւն չի տեսնայ :

Մոռացէ՛ք այդ, մոռացէ՛ք, ո՛վ դուք դադարեալ Հայեր, դուք որ կէս ու կեղծ լուսա-

ւորութեամբ խայտաղիք . առանց ընտանեկան
դաստիարակութեան՝ աճապարեցիք կինը պաա-
կառանաց համեստ քոզին տակէն հանելով դըպ-
րոցին տաճար տարիք զինքն . ինչ որ կնոջ պէտք
չէր՝ դուք զայն ուսուցիք . և ինչ որ պէտք էր՝
դուք կամ չը դիտցաք կամ աւելորդ դատե-
ցիք . միայն ազօտ կիսախաւար լոյս տուիք կնոջ
և արձակեցիք զինքն :

Կին միանգամ ազատութիւն գտնելով ճամ-
բայ առեր է կերթայ , ուր որ հրապոյր և հա-
ճոյք կը վարեն զինքն : Կինը իւր կորստեան
ճանապարհ չի նկատեր . կոյր զկուրան կերթայ
և իւր ուժով ետեւէն կը քարշէ կը տանի իւր
խեղճ կապեալ ամուսինը : Չկայ բնաւ զօրու-
թիւն մի , որ կնոջ քայլերը յետս կասել տայ .
նա պիտի շարունակէ այդ խոտարնակ ճանա-
նապարհ , ո՛վ կարող է կրկին անգամ շղթայել
նորա ոտքը երբ նա ազատութեան իրաւունքը
իւր զօրավիդ առած է : Չգիտեմ ի՞նչ ճար ու
դարման կը մտածէք սորա համար , ո՛վ դուք,
այր մարդիկ , որ ընտանեաց տէր ու կառավար
էք . արդեօք կնոջ այսչափ ազատութեան վե-
րայ ստրջանալով կը խորհի՞ք վերստին դնել
զինքն այն հին պատկառանաց բանտին մէջ .
կապել ձեռքն ու ոտքը և իսպառ փակել նորա
դէմը ազատութեան դուռը :

Այդ դարմանը, զոր դու կը խորհիս անհը-
նարին և անօգուտ է այսուհետև. դու կարող
չես աշխարհի և ժամանակի անիւները դէպ 'ի
յեսոս դարձնել անդրէն. որք անդիմադրելի ու-
ժով դէպ յառաջ կերթան: Մանաւանդ Եւրո-
պիոյ հոսանքները որ մէկ բաղխելով քո հին բան-
տերը և շղթաները առ հասարակ կը խորտակեն:

Ուրեմն մի ճար, մի դարման միայն կը մնայ
քեզ և այս է. կնոջ հոգին ու միտքը տիրապէս
կրթել ուղիղ դաստիարակութեամբ. թող այ-
նուհետև նա ինքնին իւր կիրք, իւր հաճոյք և
իւր ազատութիւնը չափաւոր է, ինքնին զգալով
ու ճանաչելով իւր մոլորամիտ շաւիղը: Աշխար-
հիս բոլոր ողջամիտ իմաստասէրներ, բարոյախօս
բժիշկները՝ կնոջ հիւանդութեան համար միակ
դարման ու դեղ՝ այս կը վարդապետեն:

Ո՛վ դուք դաստիարակք Հայոց, որ թերևս
աւելի քան զիս կը ճանաչէք Հայոց ընտանեկան
կեանքն ու վիճակը. թէ ի՞նչպէս հին պատկա-
ռանաց մէջ նա առողջ էր. նոր ազատութեան
մէջ հիւանդացաւ. եթէ կայ և գիտէք ուրիշ
տեղ ու ճարը հոգացէք ու գրեցէք այս հիւան-
դին համար. թող կարդան խելաբերին ամէն
ընտանեաց հայրերը. որ յուսակտուր եղած՝
դարման՝ դարման կաղաղակեն:

ԺԸ.

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ԸՆԾԱՆԵԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ԱՆԿՈՒՄՆ ԵՒ ԲԱՐԳՄԱՎՃՈՒՄՆ



ԱՅՍ աշխարհի վերայ մարդոց ընտանեկան վիճակը միշտ անստոյգ և անհաստատ է . և այնչափ վիճակէ 'ի վիճակ կը փոփոխի ինչպէս տարերայ շարունակող եղանակները: Շատ յարմար է թէ որ ասե՛նք ընտանեկան վիճակը այնքան ել և էջ ունի ինչպէս օդաչափ դործիքին աստիճանները առաւօտէն մինչև երեկոյ :

Աշխարհիս տարերքը բնական ու մշտնջենաւոր օրէնքով կը շարժին ու կը փոփոխին . արդեօք պէտք է համարինք այնպէս թէ մարդոյն ընտանեկան կեանքն ևս նոյն մշտնջենաւոր օրէնքին տակ փակուած է , միայն թէ ուրիշ պայմաններով : Զորօրինակ Աստուծոյ պետա-

կան հրամանն օրինօք վճռեր է, որ մարդ իւր
երեսաց քրտինքով իւր հացն ուտէ. ուստի թէ
քաղաքացի թէ հողագործ մշակը, եթէ մինն
արհեստով և միւսն հարօրին մաճով շաշխատին՝
ընտանեկան սեղանէն հաց կը պակսի և զաւակ-
ները սովալլուկ կը տանջին: Ուրեմն հացն աշ-
խատողինն է. իսկ հեղդացող մշակին բաժինն
է սովամահութիւն:

Իբրև ճշմարիտ Քրիստոնեայ և անթերա-
հաւատ հաւատացեալ պարտաւոր եմք հաւա-
տալ թէ զաշխարհը կառավարող Նախախնամու-
թիւնն՝ իւր անյեղլի օրէնքով մեր վիճակը կը
փոփոխէ բարձրութենէ՝ ի խոնարհութիւն, խո-
նարհութենէ՝ ի բարձրութիւն: Բայց երկնից
արդարութեան ատեանն՝ այդ օրինաց վճա-
ռիլը յայնժամ՝ ի դործ կը դնէ երբ մարդ մե-
ղանչէ նորա բնական օրինաց և պատուիրանին
դէմը: Որով յայտ է, թէ մեր վիճակի փոփո-
խութիւնը՝ մեր մեղքէն յառաջ կուգայ. և մեղք
մեր ազատ կամքէն կը ծնանի: Եթէ այսպէս է,
ուրեմն ընտանեկան շարեաց ու աղէտից նախա-
պատճառը՝ դարձեալ ինքն ընտանիքն է, ինչպէս
նաև բարեկեցիկ երջանկութեան:

Սակայն աշխարհս և ժամանակը միշտ աղէ-
տաբեր օրեր ունին ու կը բերեն ընտանեկան

վիճակին վերայ . որ այսօր ճոխ է՝ վաղը կը չքա-
 ւորի . որ այսօր երջանիկ է, վաղն ապերջանիկ .
 որ այսօր բարձրապատիւ է, վաղն անպատիւ և
 արհամարհ : Եթէ պարզ հայեցողութեամբ նայ-
 իմք, այնպէս կը թուի մեզ՝ որ շատ անդամ ըն-
 տանեաց վերահաս չարիքները՝ հեռաւոր պատ-
 ճառներէն կուգան . զորօրինակ երկնից ցասում-
 ներուն անարգել պատուհասներէն, երկրի ան-
 արդար կառավարութենէն . արշաւանքներէն,
 պատերազմներէն, մահտարածամէն և այլ սոյն-
 պիսի կոտորածներէն և պատահարներէն : Որք
 առ հասարակ սոսկալի ու կորստական պատու-
 հասներ են . խոտի նման կը հնձեն ու կըսպա-
 ուեն մարդկային ընկերութեան ընտանիքը .
 ճոխն և աղքատն իմիասին և անխտրապէս ՚ի
 գերեզման իջուցանելով :

Յիրաւի՛ շատ ահաւոր ու դժնդակ են այս
 արտաքին արկածները . բայց առաւել սոսկալի
 առաւել մահաբեր են ընտանեաց համար ներ-
 քին ամէնօրեայ սովորական պատուհասները .
 զոր, մարդիկ իրենց ազատ կամքով ու ձեռքով
 կը պատրաստեն : Արտաքին պատուհասները
 մարդոց ձեռնհասութենէն վեր են, մարդ կարող
 չէ խոյս տալ կամ դիմակալել նոցա դէմ : Ձի
 օ՛վ կարող էր իտալիոյ վէսուվ լեռան հրաբուխի

բերան փակել , որ հռչակաւոր Պոմպէն մոխրով չի ծածկէր . և ո՛վ կարող է ամպերուն հրաման տալ , որ բարկաճայթ կարկուտով և յորդահոս անձրևով գիւղեր և քաղաքները չողողէ :

Իսկ ներքին պատուհասները այսպէս չեն . այլ մեր ազատ կամաց ու հրամանին տակ լինելով մեք կարող եմք դոցա առաջ թումբ քաշել արգելուլ որ մեր տունն և ընտանեկան սրահը չողողեն : Արտաքին պատուհասն՝ աշխարհիս վերայ միայն ՚ի տեղիս տեղիս իւր արկածներ կը թափէ . իսկ ներքինը գրեթէ նոր քաղաքակիրթ աշխարհիս մէջ համաշխարհական պատուհաս է . որ Արևմուտքէն ելլելով դէպ Արևելք իւր արշաւանքները կը շարունակէ . որ իբրև համաճարակ ախտը իւր մահատուցաւ տիրեր է մեր ընտնեաց սրտին մէջ . նոքա այս ծիւրական ախտով տակաւ տակաւ կը մաշուին ու չեն զգար :

Սկսինք այժմ պարզապէս բացատրել այս հաճոյական ախտին տեսակներն , առ որ սիրահարած են մեր կարճամիտ ընտանիքը և մահ գրկելով ասարածամ կը մեռնին , ֆանի՛ են այդ ներքին ախտերուն ցեղը . ուշ դիր , ես խօսիմ քեզ մի և երկու բառով , և այս է , զելս և անբարոյական կեանք , և ըստ սուրբ Գրոց չափա-

զանց ցանկութիւն և այլն . որոց այլ և այլ ճիւղերը թուեմք քեզ ահաւասիկ :

Յանկութիւն բազմախորտիկ սեղանոյ և գինարբեցութեան, առանց գիտնալոյ ու հաշուելոյ թէ տաշտին մէջ որչա՞փ հաց, մառանին մէջ որչա՞փ պաշար և կարասին մէջ որչա՞փ գինի կայ: Յանկութիւն հանդերձի և նորասիրութեան: առանց նկատելոյ թէ նորա աշխատութիւն և կազմութիւնը մեր երկրի և մեր ժողովուրդի աշխատութեան արդիւնք չէ . մեր հանճարոյ գիւտ չեն և մեր մեքենական գործարաններէն ելած չեն, ճշմարիտ խօսելով մեք արժանի չեմք այդ պերճութիւնները վայելել: Եւ գիտէք թէ քանի՞ ծանր գնով կը գնեմք առանց երբէք հոգալու մեր օրական պարէնն: Մի թէ ես չեմ ճանաչեր ու տեսնար այն բազմաթիւ ընտանիքները որք իրենց տղոց բերնէն հաց կտրելով նախ նորասիրութեան չպէտ պէտքերը կը հոգան. ես չեմ ճանաչեր ընտանիք անպատուող, այն անհոգ հայրերը . որ պարտքը չվճարելով վարկն ու պատիւ կը կորուսանեն . և փոխանակ ընտանեկան ցանկութիւն զսպելու և չարաւորելու իրենք ևս նոյն ցանկութեան հոսանքէն մղուելով կերթան կը հասնին մինչև յայն կէտ, ուր յուսահատ չքաւորութիւնն կը տիրէ: Երանի՛

Թէ այդ դժալի փորձով ուշաբերէր պճնասէր ընտանիքը և այնուհետև գիտնար չափաւորել իւր կեանք և ունայնասէր ցանկութիւնը :

Նորասիրութեան ցանկութեան հետը կցենք նաև մեծածախ շինութեանց ցանկութիւն և թանկագին կահ կարասեաց կազմութիւնը : Մեք գիտեմք թէ թագաւորին՝ պալատ պէտք է, իշխանին՝ ապարանք, քաղաքացի ժողովուրդին՝ չափաւոր տուն և դաշտաբնակ շինականին՝ խրճիթը : Մեք տեսանք ու տակաւին կը տեսնամք մեր ազգին մէջ այն կարգի ընտանիքը. որոց դրամագլուխը՝ միայն իրենց կեանք և ապրուստը կերաշխաւորէր թէ արհեստի և թէ շահավաճառութեան մէջ : Անմիտ սնափառութիւն չէ՞ արդեօք, երբ այդպիսիները անխորհուրդ ձեռնարկութեամբ իրենց դրամագլուխը՝ տան շինութեան և կահ կարասեաց համար կը վատնեն. որով շահու և վաստակի աղբիւրը նուազիլ կսկսի. յայնժամ արտունջ կը բառնան այդ տնայէն տնատեսները թէ մեր ժամանակ դառն ու անյաջող է, թէ վաստակ չի կայ, թէ տուր և առ դադրած է. և թէ անցեալը շատ լաւ էր քան թէ ներկայն : Բայց հուսկ ուրեմն նա կը զղջայ ու կը խոստովանի և ինքնազատ լինելով իւր անմտութեան վե-

բայ կողքայ . որ ցուցամուլ պերճութեան համար դրամագլուխ փճացուց : Եւ ինչ կընէ յետոյ հոյակապ տան փառասէր բնակիչը , երբ կը տեսնայ որ արտաքուստ ընկերութեան մէջ իւր վարկ ու պատիւ պակասած է . և ՚ի ներքուստ մեծաշէն տան սեղանին հացը պակասած է . և ժի կողմէն ևս անհող ընտանեաց նորասիրութեան անյազ ցանկութիւն երբէք պակասած չէ . և կուգայ արագ կը հասնի այն դժպատեհ ժամն , որ տան տէրն՝ իւր ձեռաշէն տունը ՚ի վաճառ հանէ , և կէս գին վաճառելով վճարէ իւր դիզուած պարտքերը . և երանի՛ թէ մնար գուզնաքեայ մասն մի , որով կարենար նա կրկին դրամագլուխ կազմել և շարունակել իւր շահավաճառութիւնը , և միշտ անցեալը մտաբերելով խելաբերէր սակաւապէտ տնտեսութեամբ բարւոքէր իւր ընտանեկան կեանքը և այլ ևս չերթար իւր հին ճանապարհ . որոյ վախճանը վաճառել կուտայ իրեն հայրենի տուն և ժառանգական ստացուածքը և ինքն կը մնայ անվարկ անպատիւ և այնուհետև կամայ ակամայ կը խոնարհի սակաւապէտ տնտեսութեան վարժապետին առաջ , և կուսանի լսնայութեան , պարկեշտութեան , պարզութեան , աշխատութեան և ապագային հեռատեսութեան դա-

սերը . և դարձեալ կրկնեմ, երանի թէ մի ան-
դամ և երկիցս խրատուելով և փորձուելով ,
չմոռնար այդ օգտակար դասերը՝ որ մարդոյն
կենաց ապահովութիւնն է :

Դառնանք այժմ ընտանեկան ցանկութեան
միւս ճիւղ բացատրենք աստ . որ քան զամէն
ժանտաբեր ու աւերիչ է . մահ կը բերէ իրեն
և տարածելով կը թունաւորէ ազգին ամբողջ
ընտանիքը , որ հարստութեան հետը կեանքն
ևս կը բառնայ և կը ջնջէ մարդոյն արժանաւո-
րութեան պատիւ , հանելով ու զրկելով զիրենք
ընտանեկան պարկեշտ դասէն : Այնուհետև
նոցա բաժին այն է , որ առակ ու նշաւակ լի-
նին մարդոց աչքին ու դատաստանին առաջ ,
Եւ ի՞նչ է այս մոլեգոյն ցանկութեան անուն և
վարք , մէկ բառով խօսիմ, *անուհիութիւնն* է . մեր
հրաշամիտ թարգմանիչները Աւետարանի ճա-
ռած անառակ որդւոյն կեանքը՝ երկու բառով
բովանդակած են . « Զէ կայր *անուհիութիւն* » . որ
կը նշանակէ մոլեկան մարդոյն զելս կեանք իւր
ամէն հանգամանօքն . զոր կը վարէր անառակ
որդին իւր կենաց մէջ : Մարդոց մոլորութեան
և անառակ վարուց ասպարէզը՝ շատ բազմաճղի
և ընդարձակ է . որոց նկարագիրը Աւետարան
կը հանէ մեր առաջ ջրհեղեղեան դարուն

մարդոց ապականեալ կեանքը , որոց համար կը
կը խօսի . « Ուտէին , ըմպէին , կանայս առնէին
և արանց լինէին » : Հաց ուտել մեր կեանքը
պահպանելու համար է , գինի խմել մեր տըխ-
րութիւն փարատելու համար է աշխարհիս վըշ-
տակրութենէն , սուրբ ամուսնութեամբ կին
ածել , այդ ևս Աստուածադիր օրինաց համե-
մատ , մարդկային կեանքը պահելու և բարգա-
ւաճելու համար է : Ի՞նչ է ապա Նոյեան դա-
րուն մարդոց անառակ կեանքը , զորս Յիսուս
իբրև յօրինակ յառաջ կը բերէ ՚ի զգուշութիւն
իւր հաւատացեալ որդւոց : Այդ ինքնին յայտնի
է , թէ նոցա կեանքը՝ ծայրայեղ անբարեխառ-
նութիւնն էր : Նոցա սեղան որկրամոլութիւն էր
և իրենց որովայն Աստուած զոր կը պաշտէին .
նոցա գինին խելաթափ արբեցութիւնն էր :
Նոքա կուտէին կը խմէին և անչափապէս կը
վայելէին Աստուծոյ պարգևները առանց պար-
գեւատուն օրհնելու . նոյն ամբարիշտ դարուն
մէջ՝ կնոջ և սուրբ ամուսնութեան պատիւ ոտըն-
հար եղած էր , անասնաբար խառնադնաց լի-
նելով՝ սուրբ պսակին դաշնադրութիւնը եղ-
ծուած էր . այլ ևս ընտանեկան կեանքին պա-
հապան պարիսպ չի կար , ամօթ երկիւղածու-
թիւն վերջացած էր . առ հասարակ երկիր և

մարդկութեան սեռ ապականուած էր Աստուծոյ առաջ, միայն մի բարի արդար Նահապետ մնացեր էր անարատ երկնից առաջ. զոր Նախախնամութիւն պահեց տապանով ու ջրհեղեղով երկրիս երեսէն ջնջեց ապականեալ մարդոց սերունդը:

Սուրբ Գրոց պատմութեան այս պատուհասի դասէն պէտք է ուսանիմք. թէ ընտանիք և մարդկութիւն ջնջող մեծ պատուհասը՝ անառակ և զերխ կեանքն է. թէ հայրենի ժառանգական հարստութիւնը վատնող՝ այն է, թէ ՚ի վերջոյ հացի կարօտ և սովամահ լինելոյն պատճառն՝ այն է, թէ անխղելի ամուսնութեան կապ հատանող յանդուգն ձեռք այն է, թէ ազգին թէ այլ ազգին դատարանաց մէջ քրիստոնէական պարկեշտութիւն քամահրող անպատկառ երեսն՝ այն է. թէ յայտնի գինէտանց մէջ, հրապարակի մէջ և այլ խաւարաշրջիկ տեղերը. Գրիստոնեայ անուն կրելով հեթանոսի կեանք վարելով, և հեթանոսին դայթակղութիւն տրուողն՝ այն է. խաղաղ ընտանիք խռովող, ընտանեկան միութիւն քակող, հայրենական տան հաստատ հիմունք հիմն ՚ի վեր շրջող՝ այն է:

Ո՛վ, որչա՛փ երանի կը լինէր, եթէ արդի աշխարհի սրամիտ ու վարժ անառակներն՝ Աւե-

տարանի պատմած հին անառակին օրինակ մտաբերելով միանգամ յիշէին իրենց նախնի կեանքն ու վիճակը . յիշէին թէ անարգ կրից ծառայութեան մէջ խոզարած եղած են և փափազէին ՚ի ձեռս բերել նախնի կորուսած ազատ կեանք ու հացալից սեղան :

Դարձէք ուրեմն, ս'վ դուք, անառակութեան մէջ մաշուած ու սոված թշուառ դաւակներ . դարձէք զգաստացէք ու դարձեալ շինեցէք ձեր ընտանեկան աւերակները , զոր ձեր ձեռքով , ձեր դործով և ձեր հետառութեամբ քակեցիք զայն :

Ձեր խեղճ ծնողք վշտացուցիք , ձեր քոյրեր ձեր եղբայրները լացուցիք . ընտանեկան պատիւ , մարդկութեան պատիւ արհամարհեցիք . դարձէք ու դարձեալ դուք շինեցէք ձեր քակած տան աւերակները . եթէ տակաւին յամէք ու յամառիք այդ ճանապարհին վերայ . անշուշտ ՚ի կորուստ կը տանի զձեզ և դուք վատահամբաւ ու սովամահ կը կորնչիք և ՚ի վերջոյ ձեր և ձեր հայրենի տան յիշատակ կը բարձուի աշխարհէս . գերեզման միայն կը թողուք առանց անուան և փառաց :

Թողունք այժմ ընտանեկան կենաց այս մոլութեան նկարագիրը , յոր շատ ընդարձակ է .

յառայ բերենք նաև նոր սովորական մոլութեան այն ճիւղն, որ շատ ընտանիքը յաջողութենէ և հարստութենէ հանելով հողի վերայ նստեցուց. և ի՞նչ է դորա անունը, խաղամոլութիւն է :

Հումայափոխ կամ անտեսագէտ շեմեռ. դըժուարին է ինձ այդ մոլութեան նկարագիրը ըստ արժանւոյն երևան հանել. միայն այսքան ըմբռնած եմ, որ այդ մոլութիւնը՝ բախտին երեւակայութեամբ մոլորուած մարդիկը, երկու կերպով՝ ի դորժ կը դնեն, որ երկուքն ևս միապէս կորստական է : Մի կերպն է դրամով թղթախաղութիւնը, որոյ ծածուկ հրապարակը բուն ընտանեկան կեանքին ու ծոցին մէջն է. միւսն է Մայրաքաղաքիս արժէթղթոց հրապարակը, որ այսօր գրէթէ բազմաթիւ մարդկանց համար իբր յաջողակ շահավաճառութիւն մի դարձած է. որով շատ ընտանիք գահավիժեցան այդ խոր ու անտակ գետին մէջ, Եզովբոսին խորհրդաւոր առակը՝ նոցա վերայ կատարուեցաւ. արհեստաւոր, վաճառական, իրենց բերնին հացը այսինքն փոքրիկ ու չափաւոր դրամագլուխ և տպահով վաստակը թողլով հոն վազեցին. անըմբռնելի սառուերին հետը խաղացին. իրենց շնչին ու ցամաքաշուր առուակներով մեծամեծ

գետերուն հետ մրցեցան . և ի՞նչ շահեցան ՚ի վերջոյ, ոչինչ, առուակներու ու վտակները դարձեալ առատ գետերուն մէջ թափուեցան . գետերն ևս աշխարհի գանձապետ մեծին Անգղիոյ ծովացեալ գանձուց հետ խառնուեցան, իսկ մեր փոքրիկ վտակներուն վիճակը ակներև տեսանք թէ ի՞նչ եղև ու տակաւին կը տեսնամք թէ ի՞նչ կը լինի, եր ցաւիմ գրել, ոմանք թշուառացան իրենց ընտանիքներով ու ոմանք ևս կատաղի յուսահատութեամբ գնացին դէպ ՚ի ծով, ասացին, որ զիրենք ծածկէ . որպէս զի մեռնին ու չզգան պատուոյ և ամօթոյ կսկիծն և շտեման իրենց թշուառ ընտանեաց անբախտ վիճակը :

Իսկ առ տնին խաղամոլութիւնն . զոր շատ ընտանեաց համար իբրև միակ զբօսանք դարձած է . զբաղելով միայն շնչին և աննշան գումարներով, սակայն ոմանց ևս իբրև բախտի խաղ, որ մեծամեծ գումարներով կը մրցին՝ անբաժանելի մոլութիւն դարձած է . երկուքն ևս իրենց խիստ մլնասակար հետեանքներ և յուր կողմերն ունին . և դարձեալ թէ բարոյապէս և թէ նիւթապէս շատ աղետաբեր են ընտանեկան կեանքին, վասն զի ոմանք կը կորուսանեն, ուրիշները կը գտնեն . նոքա, որ կը կորուսանեն . յայտնի է թէ ո՞ր աստիճան մե-

զատարտ են աշխարհի առաջ . նոյն իսկ ընտա-
նեկան կենաց մէջ , մօր ու զաւակաց առաջ ,
սեղանին հաց ինչք ու ստացուածք բառնալ և
ինքնին ձեռք կողոպուտ տալ ուրիշին . որ քան
զայս աւելի ընտանեկան աւարառութիւն չիկայ .
Քաղաքակրթութեան մէջ այլ ևս ո՛վ կարող է
մեղադրել ամայի լեռներու աւազակաց գործը ,
որ միայն դիպուած է ճամբորդին համար և շատ
անգամ գոհ կը լինին և գտած միայն կառնեն ,
առանց ամբողջ տունը և ընտանիքը կողոպտելու :

Իսկ այն , որ լի ուրախութեամբ կը խայտայ
իւր բախտին խաղով . մի թէ նա և իւր ընտա-
նիքը կը վայելեն այդ անարդար և անքիրտն
վաստակը , ոչ . նոքա ինչպէս կը գտնեն , նոյն-
պէս վաղ և դիւրաւ կը կորուսանեն դարձ-
եալ , թէ խաղին մէջ և թէ այլ և այլ անհաշիւ
զեղխութեանց մէջ , վասն զի շատ դժուարին է
հաւատալ թէ աշխարհիս խաղամոլները տնտե-
սութիւն գիտեն . կամ թէ կարող են հաշուով
և խնայութեամբ ապրիլ . այդ շատ անբնական
է . զի ով որ դիւրութեամբ շահի , դիւրու-
թեամբ կը մխտէ . և ով որ դառնաքիրտ աշխա-
տութեամբ հաց և հարստութիւն ձեռք բերէ ,
նա միայն կը հոգայ տնտեսութեամբ ապրիլ ,
տնտեսութեամբ կառավարել իւր ընտանիքը :

Յիշենք այժմ նաև բարոյական կողմի մեծ անպատուութիւն . զոր կը կրէ խաղամուն , Չեմ գիտեր նա ամօթ կըզգայ , երբ նորա անունը վատ համբաւ կը հնչէ , կը տարածի թէ այս ինչ պարոնը իւր խաղին մէջ այսքան դումարը կորուսեր է . ի՞նչ կը լինի յայնժամ պարոնին վիճակը . պատիւ և վարկը կը կորուսանէ պարկեշտ ժողովուրդին առաջ , որով իւր առևտրական գործերը և շահավաճառութիւն անյաշողութեան մէջ կը դադրի և երբեմն ևս իսպառի սնանկութիւն կերթայ :

Բարոյական ուրիշ մի մեծ վնաս ևս ասեմք եղ . որ է ընտանեկան կեանքի մէջ այդ շարօրինակով ընտանեաց կեանքը եղծանել . զի ով կը հաւատայ . երբ ծնողք և ընտանեաց մեծերը թղթախաղով մոլին՝ խեղճ զաւակները չը հետեւին նոցա և իրենց մատաղ հասակէն սկսեալ չը վարժին այդ անմեղ կարծեցեալ մոլութեանց մէջ , թողունք այս , մայրեր և կիներն ևս այդ ախտով կախտանան և շատերն ախտացած են իսկ . թողլով առ տնին տնտեսութիւն , թողլով զաւակաց խնամք և կրթութիւն , թողլով ընթերցմունք և ուրիշ ծնողական պարտիքները : Խաղամոլ մարդոց կեանքին մէջ , աւելի մեծ խանդարմունք մի ևս կայ . զոր նոքա թեթև և

վոքը կը համարին , այսինքն թէ ժամանակի բարւոք տնտեսութիւնը նոցա համար չէ . նոքա ցորեկուան աշխատութեան զբաղմունք բաւական չեն համարիր . զողջոյն գիշերն ևս այդ հաճոյական խաղով կաբաղին . նոքա չեն շնչեր ու չեն տեսնար ոչ առօտեան կենդանարար շունչ և ոչ արևուն ծագումն , նոքա չարաչար քնահատութեամբ գիշերահանգիստ պահուն մէջ արթուն կենալով կը տանջուին , կորուսանելով մարմնոյ առողջութիւնը , հոգւոյ մտաւորական ուժը . որով կը ջլատի և կը թմրի ողջ մարդոյն գործունեայ ճարտարութիւնը , Դու քաջ գիտէ և կը տեսնաս , որ այդ քնահատ պարոնները՝ ցորեկուան մէջ իբրև քնայրջիկ և ասուշ կը դեղւին , Քաղցր քուն և դժուարագիւտ ոսկին կորուսանելէն յետոյ՝ ցորեկուան շահն և վաստակն ևս կը կորուսանին . որոց միայն կակնկալեն խեղճ ընտանիքը . զի այդ օրական շահերէն կը կազմուի իրենց ներկայ և ասպագայ կեանքին պարէնը :

Համառօտենք . թէ և շատ են և զանազան մեր ընտանեկան կենաց ներքին զեղծմունք և անկարգութիւնք . որով մեր ընտանեկան վիճակը շարունակ վիճիտութեան ենթակայ է : Մեր հարուստ և ազնուական գերդաստանները

գրէթէ հարիւր տարուան շրջան չունին . այսօր
ասուպի նման պահ մի կը փայլին . վաղը իրենց
տոհմական փառքով կանցնին ու կըստուերա-
նան : Մեք գիտենք երկիր և երկրին օրէնքը
չերաշխաւորեր որ նոքա տոհմային ճոխութեամբ
յազգէ յազգ . յարատեւն Անգղիոյ Լորտերուն
չափ . բայց պէտք է խոստովանիլ , որ մեր ազգի
ազնուական ընտանիքը չափազանց ձեռնարկու-
թեամբ , անհաշիւ տնտեսութեամբ և փառասի-
րական զեղխութեամբ իջեր խոնարհեր են : Չեմ
յիշեր թէ ոմանք ևս անարդար ճանապարհով
ու զրկանօք ճոխացեր են և դարձեալ նոյն ան-
արդար միջոցներով տուժեր են մինչև ցյեալին
բնիոնն :


Ուրեմն այս աշխարհիս վերայ ընտանիքները
թէ հարուստ թէ աղքատ կապրին ու կը մնան .
եթէ գործասէր մըջնոց նման աշխատասէր լի-
նին . եթէ աշխատութեան արդիւնքը ժողովե-
լով 'ի գանձատուն և շտեմարանը , ընտանեկան
պէտքերն իմաստուն տնտեսութեամբ մատա-
կարարեն . չմոռնալով հաշիւ , չափ ու կշիռ , հո-
գալով նաև ապագայ ձմերան պաշարն . յորում
թերեւս գործելն անհնար լինի : Եթէ արդար
վատակին հետը զրկանք չի խառնեն , հարըս-
տահարելով աղքատ ընտանիքները , որոց վրէժ-


խնդիր դատաւորն Աստուած է և կը հատու-
տուցանէ: Եթէ ընտանեկան դուռը ամուր փա-
կեն, որ մուտ չի գտնայ հոն անառակ ու զելի
կեանք: Այս բացուած դուռը, որ այժմ
Հայոց ընտանիքը կը կործանէ, կը փակուի մի-
այն ուսմամբ, դաստիարակութեամբ և երկիւ-
ղած Աստուածապաշտութեամբ. առ որ պէտք
է լինի բոլոր ընտանեաց խնամք, օրհնք, մեծ
հոգատարութիւն այլ և այլ զոհերով և անձ-
նանուիրութեամբ հանդերձ: Այդ իսկ է միայն
ճար ու դարմանը և մեք և աշխարհ կը հաւա-
տայ յայնժամ. որ Հայոց ընտանեաց վիճակը
լաւագունին մէջ կը յարատեւէ, բարդաւաճեալ-
ները կանգուն կը մնան և անկեալ ընտանիքը
կը բարձրանան:

ՎՐԻՊԱԿԻ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Երես	Տող	Մխալ	Ուղիղ
1	11	Չանաց	Չանայ
42	11	մեր	մեր
95	21	Թոյլտարէ	Թոյլատարէ
111	12	ընկերու թենէն	ընկերու թենէն
112	2	տուն լինել	տուն շինել
119	11	կարդել	կարկել
120	6	վիմորս	սորվիմ
125	2	քաղակրթիւն	քաղաքակրթ- թու թիւն
127	3	կը յորդորէ	կը յորդորէ
172	11	չարգաւակը	չար դաւակ








2m.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046027

A - 3
5202